ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ



ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ



# ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

# ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88
Ա 774

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

**Գրախոսներ՝**

Հոգեբանական գիտությունների դոկտոր **Ռուբեն Նաղդյան**
Կենսաբանական գիտությունների դոկտոր **Վիլենա Գրիգորյան**
Հոգեբանության դոկտոր **Ասպետ Արյան** (Արգենտինա)

**Հրանտ Ավանեսյան**
Ա 774 **Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը**/ Հրանտ Ավանեսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ:

Մենագրությունում ի մի են բերված հոգեդիագնոստիկայի բնագավառում հեղինակի գործնական աշխատանքի և գիտահետազոտական բազմամյա փորձի արդյունքները: Հանգամանորեն վերլուծության են ենթարկվում մասնավորապես պրոյեկտիվ թեստերով անցկացվող հետազոտության մեթոդաբանական մոտեցումները և տեխնոլոգիաները: Առաջարկվում է կիրառել «Համակցված անավարտ նկարներ» հեղինակային պրոյեկտիվ մեթոդիկան, որը կառուցված է անձի ինտեգրալային դրսևորումների վրա և ենթադրում է որակական, քանակական մեկնաբանություն:

Ներկայացված գիտակիրառական նյութը կարող է օգտակար լինել հետազոտողների, պրակտիկ հոգեբանների, դասավանդողների, հոգեբանության ֆակուլտետի մագիստրոսների և ասպիրանտների, ինչպես նաև՝ հարակից մասնագիտությունների ներկայացուցիչների համար (մանկավարժներ, սոցիոլոգներ, շուկայագետներ և այլն):

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88

ISBN 978-5-8084-2212-4

© ԵՊՀ հրատ., 2017
© Ավանեսյան Հ., 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ........................................................................ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ................................................................. 8
1. ԱՐԴԻ ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ........................................................18
2. ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ............. 56
3. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ........ 87
4. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..................................105
5. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..................................................115
6. ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..........................................................134
7. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ...........................152
8. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ..................................................169
9. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..........................................................197
10. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ԹԵՍՏԸ ԱՅԼ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ՀԵՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ........................................................................ 209
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .......................................................... 231
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..................................................................237

# ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի գաղափարը հասունացել է մեր՝ երկար տարիների հետազոտական որոնումների ընթացքում առաջացած խնդիրների լուծման, հոգեբանության մեթոդաբանության դասավանդման և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարման փորձի թելադրանքով: Գուցե դա է պատճառը, որ համապատասխան գլուխներում զետեղված նյութն ունի տարաբնույթ համատեքստ և պարունակում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական թեզեր: Գրքի վերնագրի որոնումները տարան դեպի այնպիսի ընդգրկուն հասկացություններ, ինչպիսիք են՝ «համակարգը», «ներկապնակը», «վարանումը», «խճանկարը», որոնք կարող են միավորել տարբեր մոտեցումներ և բնորոշել հոգեբանական դիագնոստիկայի պրոյեկտիվ մեթոդները:

Ժամանակակից հոգեախտորոշման մեթոդաբանական հիմնախնդիրների դիտարկման ընթացքում ի հայտ եկած հարցերը մշտապես գտնվում են հետազոտողների և պրակտիկ հոգեբանների հետաքրքրության կենտրոնում, որի վկայությունն են ոչ միայն բազմաթիվ տեսական մոտեցումների և գիտական հայեցակարգերի առկայությունը, այլև տեսական և գործնական հոգեբանության ժամանակակից հասարակության առաջադրած մարտահրավերները: Հավանաբար, դրանցով են պայմանավորված հետազոտական աշխատանքներում ոչ միայն պրոյեկտիվ մեթոդների լայն կիրառությունը, այլև դրանց ոչ ավանդական, ինքնատիպ լինելը, որոնք թույլ են տալիս բացահայտելու «անհայտը», և ունեն դիագնոսատիկ հեռանկարային ներուժ:

Հոգեբանական մեթոդների այս խումբը, որոնց նկատմամբ նկատելի է գիտական թերահավատություն, այնուամենայնիվ

հետազոտվող օբյեկտի նկատմամբ անգիտակցական վերաբերմունքի և զգացմունքների գնահատման առումով շարունակում են մնալ ամենաարդյունավետը:

Հարուստ ավանդույթներ ունեցող պրոյեկտիվ մեթոդները շարունակ կատարելագործվում և մշակվում են հոգեբանների կողմից: Դրանք ունեն անձի պրոյեկցիան գնահատելու, դիմադրությունը և պաշտպանական մեխանիզմները հաղթահարելու լայն միջակայք:

Գրքում վերլուծության է ենթարկվել տարբեր երկրների գիտական գրականության մեջ պրոյեկտիվ մեթոդներին վերաբերող արդի միտումները, ներկայացված են տեղեկություններ դրանց կայացման և դասակարգման, հոգեչափման առավելությունները և թերություններ: Քանի որ պրոյեկտիվ հետազոտությունների դիագնոստիկ ինդեքսների էմպիրիկ հենքն ավելի տարածված է, ուստի դիտարկվում է փորձարարական հետազոտություններում պրոյեկտիվ թեստերի ներմուծման հնարավորությունը:

Գրքում ներառված է «Համակցված անավարտ նկարներ» հեղինակային մեթոդիկան, որը կատարելագործվել է երկար տարիների ընթացքում տարբեր փորձարկվողների շրջանում և կիրառվել է բազմաշերտ հետազոտություններում՝ մի շարք թեստերի համադրությամբ: Թեստը կազմված է անձնային դրսևորումների ինտերգրացված բնութագրերից և պրոյեկտիվ մեթոդների պատկերային-կառուցողական տեսակ է: Այն ունի հատուկ բանաձև, որը ենթադրում է ցուցանիշների որակական ու քանակական մեկնաբանություն:

Պրոյեկտիվ թեստերի մեծ մասը, այդ թվում՝ մեր կողմից առաջարկվող տարբերակը («Համակցված անավարտ նկարներ») կիրառելիս անհրաժեշտ է մասնագիտական որոշակի գիտելիքների և գործնական հմտությունների առկայություն, հետազոտման գործընթացի և մեկնաբանության վերաբերյալ արհեստավարժ մոտեցում:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտության ցանկացած բնագավառ, հոգեդիագնոստիկան նույնպես ունեցել է զարգացման յուրահատուկ նախադրյալներ և կայացման գիտակիրառական որոշակի հիմնավորման անհրաժեշտություն: Հոգեդիագնոստիկայի նախապատմությունն ի սկզբանե ձևավորվել է գաղափարների, պատկերացումների և դիտումների ամբողջության հիման վրա, որոնց հիմքում ընկած են սեփական անձի և իրեն շրջապատող աշխարհի ուսումնասիրման դարավոր փորձը: Իբրև գիտություն՝ հոգեդիագնոստիկայի նախադրույթները դրված են մարդկանց միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող անհատական տարբերություններում, որոնք հոգեբանության զարգացման բոլոր ժամանակաշրջաններում ուշադրության են արժանացել:

Հոգեդիագնոստիկան ուսումնասիրում է մարդու անհատական-հոգեբանական առանձնահատկությունների՝ անձի հատկանիշների և ինտելեկտի, հոգեվիճակի, ճանաչման և դրանց չափման միջոցներն ու ձևերը, որոնք իրականացվում են հոգեդիագնոստիկ մեթոդների միջոցով: «Հոգեդիագնոստիկան» որպես հոգեբանական գիտության ինքնուրույն ճյուղ սկզբնավորվել է 19-րդ դարի վերջում և 20-ի սկզբում: Դրա մեթոդների կիրառումը կապվում է «անհատական հոգեբանության» և Վունդտի, Կրապալինի, Կետելի, Բինեի և Լազուևսկու անունների հետ:

Ժամանակակից հոգեբանության մեջ օգտագործվում են հոգեդիագնոստիկայի բազմաբնույթ մեթոդներ, սակայն դրանցից ոչ բոլորն են մանրակրկիտ մշակված ու գիտականորեն հիմնավորված: Որպեսզի հոգեբանական գիտափորձը հետազոտության համար լինի բավարար և հուսալի և հնարավորություն տա

կատարելու կիրառական եզրակացություններ, ստանալու ճշգրիտ, վստահելի արդյունքներ, անհրաժեշտ է, որ օգտագործվող հոգեդիագնոստիկայի մեթոդներն ունենան տեսամեթոդաբանական հիմքեր և անցած լինեն համապատասխան գիտական փորձարկում: Ըստ փորձարարական հոգեբանության պահանջների՝ այդպիսիք են համարվում այն թեստերը, որոնք բավարարում են վալիդության, հուսալիության, ճշգրտության և միանշանակության հիմնական պահանջները:

Հոգեդիագնոստիկան սերտորեն կապված է ընդհանուր, կլինիկական, զարգացման, կառավարման, սոցիալական և հոգեբանության այլ բնագավառների հետ: Հոգեկանի դրսևորումները, անձի հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք ուսումնասիրվում են հոգեբանության առանձին բնագավառների կողմից, չափվում են գնահատման պիտանելիությունն ապահովող հոգեդիագնոստիկայի մեթոդների օգնությամբ: Բազմաթիվ երկրներում, որտեղ պատմականորեն առկա են հոգեբանության ավանդույթները, հարցարանները (questionnaire) և պրոյեկտիվ թեստերը (projective test) լայնորեն շարունակում են կիրառվել բանակում, հոգեբանական թերապիայի, կրթության, առողջապահության, սպորտի, դատական փորձաքննության, կառավարման և այլ ոլորտներում: Թեստավորման հիման վրա գնահատվում են անձի առանձնահատկությունները, նրա մասնագիտական պիտանելիությունը, որոշվում է այս կամ այն ոլորտում նրա հոգեբանական պատրաստվածության աստիճանը, անձի ուղղվածությունը և ապագան, մասնագիտության ընտրության հոգեբանական չափորոշիչները: Բազմաբնույթ, բայց գիտականորեն ստուգված, թեստերի լայն օգտագործումը բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում, որոնք կարող են լի-

նել ինչպես հետազոտական, այնպես էլ՝ կիրառական նշանակության:

Հոգեբանական թեստերը հատուկ կիրառություն ունեն զարգացման հոգեբանության մեջ: Առանց դիագնոստիկայի մեթոդների հնարավոր չէ ճշգրիտ հետևել ուսուցման գործընթացում զարգացման օրինաչափություններին, ստանալ երեխաների առաջադիմության մասին հիմնավորված տվյալներ, հետևաբար, գնահատել դաստիարակության և ուսուցման տարբեր մեթոդների, ձևերի ու միջոցների համեմատական արդյունավետությունը: Առանց դիագնոստիկայի մեթոդների հնարավոր չէ տարիքային տարբեր փուլերում որոշել երեխայի անհատական և ինտելեկտուալ զարգացվածության մակարդակը, ստանալ տվյալներ նրա յուրահատուկ ընդունակությունների վերաբերյալ: Իսկ այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր երեխայի ցույց տրվի անհատական մոտեցում:

Տվյալ աշխատանքում ուսումնասիրվում են հոգեբանական դիագնոստիկայի զարգացման օրինաչափությունները, գիտակիրառական հիմնախնդիրները, հայեցակարգերը, թեստերի դասակարգման սկզբունքները, առավելություններն ու թերությունները և դրանց հիման վրա մանրամասն անդրադարձ է կատարվում պրոյեկտիվ թեստերին: Հատուկ ուշադրության են արժանացել պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի առաջացման աղբյուրների, նրա հիմնական մոտեցումների և սկզբունքների ուսումնասիրությունը: Գրքում ամփոփվել է հետազոտական և կիրառական աշխատանքների բազմամյա փորձը:

Պրոյեկտիվ թեստերին ավելի հանգամանորեն ծանոթացել ենք Ե. Տ. Սոկոլովայի[1] հայտնի գրքից, որը 1981 թ.-ին մի շարք այլ, հազվագյուտ հրատարակությունների հետ ձեռք բերեցի Իսիկ Կուլ լճի (Ղրղզստան) ափին գտնվող մի գյուղի խանութում, ուր մեկնել էի հերթական գործուղման՝ ԽՍՀՄ բանակի կենտրոնական մարզական ակումբի (ԲԿՄԱ-ЦСКА) մարզիկներին հոգեբանական ծառայություն մատուցելու համար (իմ սերնդակիցները կհիշեն, որ խորհրդային շրջանի բեսթսելերները կարելի էր գնել կա՛մ «թաքուն»՝ գրավաճառներից, կա՛մ էլ հեռավոր գյուղերի վաճառասրահներից): Այդ հրատարակությունում բավականին մանրակրկիտ նկարագրված էին միայն երկու պրոյեկտիվ մեթոդիկաներ՝ ԹԱԹ և Ռորշախի թեստը: Ներկայացված էին դրանց օգնությամբ անցկացվող հոգեբանական գիտափորձի պահանջները, ինչպես նաև տվյալների գրանցումն ու մեկնաբանման հիմնական սանդղակները:

Ինչ վերաբերում է արդյունքների վերլուծության ձևերին, ապա դրանք ներկայացված էին առանց մեթոդաբանական հիմքի: Գրքում քննադատության էին ենթարկված արտասահմանյան հեղինակների այն հիմնական հասկացությունները, որոնք պիտի լույս սփռեին պրոյեկցիայի սկզբունքի վրա (հասկանալի է, որ այդ ժամանակ հեղինակն այլ կերպ չէր կարող, քանզի խորհրդային հոգեբանությունը մերժում էր հոգեվերլուծությունը): Ինչևէ, այս ձեռնարկն ինձ մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց պրոյեկտիվ մեթոդիկաների հանդեպ, ինչն էլ նպաստեց իմ հոգեդիագնոստիկ փորձի հետագա զարգացմանը:

[1] ***Соколова Е. Т.,*** Проективные методы исследования личности, –М.: Изд-во МГУ, 1980, с. 173.

Անպայման ուզում եմ նշել հոգեբանական թեստերի և մեկ ճակատագրական գրքի մասին, որը օգնեց ինձ հասկանալ թեստային առաջադրանքների ստեղծման, գնահատման չափանիշների հավաստիության և վալիդության որոշ խնդիրներ: Խոսքս իմ ազգանվանակցի (կարծում եմ՝ թեստերի հանդեպ իմ հետաքրքրության հարցում նա դեր ունի)՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վադիմ Ավանեսովի[2] գրքի մասին է, ով մեծ ներդրում ունի ԽՍՀՄ և ժամանակակից Ռուսաստանի թեստաբանության զարգացման գործում:

Մինչ այդ հոգեբանական թեստերի հիմնախնդիրը դիտարկվել է «Вопросы психологии»[3] ամսագրում, որը, հեղինակի հավաստմամբ, այն ժամանակ շատ դժվար էր հրատարակել: Հետագայում Վ. Ավանեսովը իրավամբ նշում է, որ դա «թեստերի ակտիվ անտեսման» ժամանակաշրջան էր: Թեստերով զբաղվելու պայմաններ փաստացի չկային, քանի որ դա հակասում էր այդ հասարակարգի գաղափարաբանությանը:

Վ. Ավանեսովի գիտական հետաքրքրությունները վերաբերում են մանկավարժության, սոցիոլոգիայի, հոգեբանության և այլ հասարակական գիտությունների մեջ չափումների հիմնավորման, որակական քվանտավորված ուսումնական տեքստերին և դրանց մշակմանը:

Հաջորդ փաստը, որը վերաբերում է պրոյեկտիվ մեթոդներով աշխատանքին ստեղծագործաբար մոտեցմանը, կապված է բազմափորձ մանկավարժ, գիտնական, հոգեբանական գիտու-

---

[2] Տե՛ս ***Аванесов В. С.***, Тесты в социологическом исследовании. М.: Наука, 1982, с. 196:

[3] Տե՛ս ***Аванесов В. С.*** Проблема психологических тестов // Вопр. Психологии, 1978, № 5, с. 97-107:

թյունների թեկնածու, պրոֆեսոր Աննա Արարատյանի անվան հետ, իսկ ավելի պարզ՝ իմ վաղեմի ավագ ընկերոջն ու կոլեգային, ում հետ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում անցկացրել ենք գիտափորձեր մարզիկների ու ուսանողների հետ (1985-1989 թթ.): Նա ինձ սովորեցրեց աշխատել Վարտեգի «գրաֆիկական թեստ» մեթոդիկայով, որի նկարագրությունն արտատպված էր թղթերի վրա՝ առանց հղումների: Ինչպես մեթոդիկայի ընթացակարգն ինքնին, այնպես էլ խորհրդանշական իմաստների մեկնաբանությունները շատ մեծ հետաքրքրություն առաջացրին ուսանողների շրջանում: Դրա համար ստիպված էինք իմպրովիզացիա անել և մեկնաբանությունը լրացնել տեխնոլոգիան փորձարկման միջոցով:

Հետագայում հնարավորության դեպքում հոգեբանական թեստերի փաթեթը համալրվում էր նոր պրոյեկտիվ թեստերով, որոնցից Լյուշերի գունային թեստն ընդգրկվեց ՀՀ ու ԽՍՀՄ մարզական հավաքականների հոգեբանական աջակցության համակարգչային դիագնոստիկ համակարգում (ընդամենը 14 թեստ)[4]: Այնուհետև այդ թեստերը մշտապես կիրառվում էին Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լաբորատորիայի գիտահետազոտական և գործնական աշխատանքներում: Հետագայում մշակվեց նաև դրանց համակարգչային տարբերակը: ԳՀ լաբորատորիայի գործընկերների հետ իրականացված շարունակա-

[4] Основы комплексного контроля психологической подготовленности спортсменов высокой квалификации//Сборник научных работ “Прикладные аспекты спортивной психологии”, Федерация спортивной психологии Армении /Под ред. Г .М. Аванесяна, Ереван, 1990, с. 3-6.

կան հետազոտություններն ապացուցեցին թեստերի նման փաթեթի հուսալիությունը[5]:

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո ֆրանսահայ հոգեբանների՝ Հերոլդ Ալեքսանյանի, Հովհաննես Ռաշոյի, Մարկ Վարդապետյանի և այլոց հետ աղետի գոտու բնակչության համար կազմակերպվեց հոգեբանական ծառայություն: 1990-1993 թթ. ծառայության դաշտը ստիպված եղանք ընդլայնելու՝ ընդգրկելով նաև Ադրբեջանից բռնագաղթածներին և պատերազմող Արցախի բնակչությանը: Այդ աշխատանքներին կամավոր միացավ Մոսկվայից ժամանած հոգեբան Ռուդոլֆ Եսայանը: Նա ավարտել էր Յարոսլավլի համալսարանի հոգեբանության ֆակուլտետը: Շտկողական և հոգեբանական աջակցության անհատական ու խմբային մեթոդների կիրառման արդյունավետությունը վերահսկվում էր տեղայնացված հոգեդիագնոստիկ թեստերի միջոցով: Հետագայում այդ մարդասիրական գործունեության ընթացքում իրականացված հոգեչափման արդյունքները ամփոփվեցին և ներկայացվեցին միջազգային հեղինակավոր գիտաժողովներում[6]:

---

[5] Տե՛ս ***Аванесян Г. М., Гаспарян Г. Г., Хачатурян Ю. А.,*** Метод комплексного отбора фехтовальщиков ысокой квалификации Методические рекомендации, Научно - методический кабинет Мин ВУЗ Арм. ССР, Ереван, 1984, с. 30; ***Аванесян Г. М., Бадалян Л. С., Шахатуни А. В.***, Прикладные аспекты спортивной психологии /науч. мет. сборник ФСП Армении / Ред. Аванесян Г. М.- Ереван, 1990, с. 36; ***Аванесян Г. М.*** Основы комплексного контроля психологической подготовленности спортсменов высокой квалификации / Сб. Прикладные аспекты спорт. психологии /науч. мет. сборник ФСП Армении/ Ред. Аванесян Г.М., Ереван, 1990, с. 3-6:

[6] ***Аванесян Г., Торикян А., Мкртумян М.,*** Коррекция негативных психических состояний проявляющихся у населения вследствие стихийного бедствия. Докл. XI Всесоюз. конф. психологов спорта. Москва, (26-29 сент.), 1990, Часть II. - с. 120-121.; ***Avanesyan H., Mkrtumian M.,*** Psychological, physical exercises and sport

Նշեմ նաև ասպիրանտների և ուսանողների հետ իմ համագործակցության մասին, երբ գրեթե բոլոր հետազոտությունների համար «նոր» պրոյեկտիվ մեթոդիկա ընտրելիս ստիպված էինք ուսումնասիրել դրանց առանձնահատկությունները արտասահմանյան տեսական աղբյուրների ու ռուսական նոր հրատարակությունների միջոցով (պետք է ասել, որ ռուսական տարբերակները հաճախ փոփոխում և նույնիսկ աղավաղում էին բնագրային տարբերակը): Այդ շարքից առանձնացնեմ երկու աշխատանք, որոնք նվիրված են միայն պրոյեկտիվ մեթոդներին, դրանց տեսական վերլուծությանն ու փորձարարական կիրառմանը. խոսքը մասնավորապես՝ Ռորշախի թեստի տեսական հիմնավորման և փորձարկման ու «Համակցված անավարտ նկարներ» թեստի նոր տարբերակի կիրառման մասին է (Հրաչուհի Առաքելյանի և Սիրարփի Թաթոյանի ավարտական թեզերի շրջանակներում իրականացված համատեղ հետազոտություններ):

Այժմ այդ գործընթացը շարունակվում է ԵՊՀ փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիայում (հիմնադրված՝ 2005 թ.), որի գիտահետազոտական թեմաները շարունակական են, մասնավորապես հիշատակելի են՝ «Կիրառական հոգեբանության բնագավառում փորձարարական հետազոտությունների մեթոդաբանության հիմնահարցի հետազոտում», «Փորձարարական հետազոտության մեթոդների կատարելագործման և ներդրման օրինաչափությունները հոգեբանության կիրառական բնա-

as means of emotional rehabilitation of the people after earthquake // 13 International conference of the stress and anxiety research society, Leuven, Belgium, 1992.; ***Avanesyan H. M.*** Effet de l'activité et de la psychorégulation sur la réhabilitation des personnes après calamités naturelles // Revue Itineraires, Actes des journee Internationales d'Etudes, jan. 4, Paris, 1993, pp. 143-146.

գավառներում, հոգեդիագնոստիկ համակողմանի մոդելի մշակումն ու կիրառումը հոգեբանական հետազոտություններում» թեմաները: Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի աշխատակիցները շարունակաբար իրականացնում են հոգեդիագնոստիկայի բնագավառի արդիական դրամաշնորհային ծրագրեր «Հոգեդիագնոստիկայի թեստերի համակարգչային փաթեթների ստեղծում» թեմայով[7]:

Տվյալ աշխատության առաջին բաժինը ներառում է հոգեդիագնոստիկայի պատմությունը, առաջացման աղբյուրները, հիմնական բաժինները, փուլերը: Համառոտ կարելի է ասել՝ հոգեդիագնոստիկան հոգեբանական գիտության ինքնուրույն բնագավառ է:

Երկրորդ բաժնում ներկայացվում է պրոյեկտիվ թեստավորման մեթոդի կայացման նախադրյալները, մեթոդաբանությունը, առավելություններն ու թերությունները և հիմնական մոտեցումները:

Երրորդ բաժնում նկարագրված են որոշ պրոյեկտիվ թեստերի կիրառման յուրահատկությունները (Ռորշարխի, ԹԱԹ, երկրաչափական և նկարչական պրոյեկտիվ մեթոդիկաներ):

Չորրորդ բաժնում ուսումնասիրվում են «Համակցված անավարտ նկարների» պրոյեկտիվ թեստի դիագնոստիկ ներուժը, կառուցման գործընթացը, ընթացակարգը, և ներկայացվում է հետազոտական փորձը:

---

[7] 2011–2013 թթ.՝ դրամաշնորհ - «Հոգեբանական թեստային համակարգի մշակում ՀՀ ոստիկանության համակարգի համար». ԵԱՀԽ Երևանյան գրասենյակ, OSCE, PO. 226723.


В.С.Аванесов
Тесты
в социологическом
исследовании
Е.Т. СОКОЛОВА
Проективные
методы
исследования
личности

# 1. ԱՐԴԻ ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոգեդիագնոստիկան հոգեբանի մասնագիտական գործունեության պարտադիր բաղադրամասն է, որի նպատակն է ճշգրիտ միջոցներով բացահայտել անհատի կամ խմբի հոգեբանական առանձնահատկությունների ներկա վիճակը: Հատուկ մշակված հարցարանների կամ հոգեբանական թեստերի միջոցով գնահատումը կամ ճանաչումը իրականացվում է մշակված նորմերին կամ հատուկ չափանիշներին համապատասխանությունը ճշգրտելու համար: Որպես հոգեբանության գիտակիրառական բնագավառ՝ հոգեդիագնոստիկան ներառնում է երկու հիմնական գործառույթ՝ գիտական և կիրառական: Գրականության մեջ կա հոգեդիագնոստիկայի մի քանի սահմանում, որոնց հիմնական տարբերությունը հոգեբանի պրակտիկ գործունեության կիրառության ոլորտը և խնդիրները որոշելու հարցն է (А. Анастази, 1982; К. Гуревич, 1997; Л. Бурлачук, 2006): Հոգեդիագնոստիկան ձևավորվում է մի քանի փոխկապակցված նպատակների ամբողջությունից՝

- հոգեդիագնոստիկ մեթոդիկաների մշակում,
- գնահատման չափորոշիչների հիմնավորում,
- օբյեկտի հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետազոտում,
- հոգեբանի և հետազոտության մասնակցի փոխգործունեություն,
- թեստերի ընտրություն և համադրում,
- հոգեբանական գնահատականի տեսական սկզբունքների մշակում և այլն:

Ժամանակակից մեթոդաբանության մեջ դիագնոստիկան գիտական ճանաչման և իմացության տեսանկյունից հասկացվում է որպես ճանաչողական գործընթացի հատուկ ձև, ճանաչման յուրահատուկ գործունեություն: Գործնականում բոլոր հետազոտողների կարծիքները համընկնում են նրանում, որ միավոր օբյեկտի վիճակի ճանաչումը իրականանում է ընդհանուրի մասին գիտելիքների հիման վրա[8]: «Ախտորոշումը, անկախ այն բանից, թե որ ոլորտում է կատարվում՝ բժշկություն, տեխնիկա, կառավարում թե կիրառական հոգեբանություն, նախևառաջ պատճառահետևանքային կապերի բազմազանության պայմաններում անբարենպաստության թաքնված պատճառի բացահայտում է (Վ. Վոյտկո, Յու. Գիլբուխ, 1976)»[9]: Ըստ որոշ գիտնականների սահմանման՝ այս տարբերակը ունի բացասական երանգավորում և չի արտացոլում հոգեբանական ախտորոշման հիմնական գծերը: Կ. Մ. Գուրևիչը տալիս է ախտորոշում հասկացության առավել ամբողջական բնութագիրը. այն ենթադրում է ստացված տվյալների պարտադիր համեմատություն, որի հիման վրա կարող է ձևավորվել եզրակացություն՝ առանձին փորձարկվողի կամ խմբի արտահայտված հոգեբանական կամ հոգեֆիզիոլոգիական այս կամ այն առանձնահատկության մասին[10]:

---

[8] Տե՛ս ***Анастази А.,*** Психологическое тестирование. - М.: «Педагогика», 1982. – 320 с.; ***Немов Р. С.,*** Психология. Кн. 3. Психодиагностика. - М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2001. - с. 6, 9-10.

[9] ***Бурлачук Л. Ф.,*** Психодиагностика: Учебник для вузов. - СПб.: Питер, 2006. - с. 126.

[10] Տե՛ս ***Гуревич К. М., Борисова Е. М.,*** Психологическая диагностика. Учебное пособие / М.: Изд-во УРАО, 1997. - с. 2.

«Դիագնոզ» (հուն.՝ *διάγνωσις, diagnosis – ճանաչում, dia - առանձին, gnosis - գիտելիք*) եզրույթը հունարենից բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ բանի ճանաչում, բացահայտում: Բժշկագիտության բնագավառում այն թարգմանվում է «ախտորոշում», որը ընդունելի է: Ըստ մեզ և մի շարք այլ հեղինակների՝ հոգեբանության և մասնավորապես հոգեբանական ճանաչման կամ գնահատման պարագայում ավելի ճիշտ է պահպանել հունական արմատը և գործածել «հոգեդիագնոստիկա» բառը: Նման կարծիքի են նաև Ռ. Ստեփանյանը և Ա. Գալստյանը՝ նշելով, որ «հոգեդիագնոստիկան՝ որպես գիտակարգ, ուղղված է անձի հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանը և հետազոտմանը, որն իրականացնելու համար արդյունավետ հոգեբանական մեթոդների մշակման, տեղայնացման և ժամանակի ընթացքում դրանց կատարելագործման անհրաժեշտություն է առաջանում»[11]: Սակայն «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում նշվում է, որ հոգեդիագնոստիկան դիտարկվում է երկու կողմով, որոնք միաժամանակ առանձին ուղղություններ են. 1) ախտորոշման տեսամեթոդաբանական վերլուծությունը՝ որպես ճանաչողության յուրահատուկ տեսակ, 2) հոգեդիագնոստիկայի բնութագրիչների բացահայտումը՝ որպես կիրառական գործունեություն և գիտակարգ[12]:

«Հոգեդիագնոստիկան» որպես գիտության ինքնուրույն ճյուղ ի հայտ է եկել դեռևս 20-րդ դարի սկզբում, սակայն այն որպես հասկացություն շրջանառության մեջ է մտել միայն Ռորշախի աշխատության հրապարակումից հետո՝ 1921 թ.: Հոգեդիագ-

---

[11] ***Ստեփանյան Ռ., Գալստյան Ա.*** Հոգեդիագնոստիկա: Ուսումնական ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 5-6:

[12] https://hy.wikipedia.org/wiki/հոգեախտորոշում

նոստիկ մեթոդները կիրառվում են շուրջ 80 տարի: Արևմուտքում և հատկապես Հյուսիսային Ամերիկայում թեստերը լայնորեն կիրառվում էին կրթության ոլորտում, աշխատանքային գործունեության բնագավառում, բանակում: Թեստերի արդյունքների հիման վրա որոշվում են այս կամ այն մասնագիտության մեջ մարդու պիտանելիությունը, նրա գործունեությունը: Թեստերի համապատասխան կիրառությունը հասկանալի է, քանի որ հոգեբանները հենց այնտեղ գտան այն գործիքը, որը հնարավորություն տվեց նրանց բացահայտելու մարդու հոգեկան աշխարհի յուրահատուկ կողմերը, չափելու մարդու հնարավորությունների աստիճանը, կանխատեսելու նրա վարքը: Միաժամանակ որոշ դեպքերում թեստերի լայն կիրառությունը ենթարկվեց մի շարք մեթոդաբանական քննադատությունների և հնարավորություն ընձեռեց բացահայտելու հետազոտական մի շարք անճշտություններ, որովհետև թեստերը հանդիսացան տարբեր դասերի և ռասաների խտրականության գործիք էին: Չնայած սուր բանավեճերին և դատական գործընթացներին՝ 1960-ական թվականներին ԱՄՆ-ում թեստավորումը շատ լայն տարածում գտավ և այդպես շարունակվեց մինչև նախորդ դարի վերջերը[13]: Հայտնի են բազմաբովանդակ ու հաստափոր շտեմարաններ, որոնք շարունակում են կիրառվել ամերիկյան համալսարաններում:

Առավել հիմքային պարբերականներ առաջին անգամ հրատարակվել են 1960-70-ականներին այդ ոլորտում հայտնի հոգեբաններ[14]՝ Մ. Ռ. Գոլֆրիդի, Ի. Բ. Վեյների, Վ. Գ. Բելաքի,

---

[13] ***Талызина Н. Ф.*** Психодиагностика. Теория и практика, - М. : Прогресс, 1986 - с. 4-5.

[14] Տե՛ս ***Goldfried, M. R., Stricker G. & Weiner I. B.*** (1971). Rorschach handbook

Ա. Ս. Ադամսի և այլոց կողմից: Իսկ 1979 թվականին լույս տեսավ վարքի գնահատման ամերիկյան շաբաթաթերթը (*Journal of Behavioral Assessment*), որը շատ տարիներ պահանջված էր հոգեբանների շրջանում:

Այնուհետև նույնպես լույս տեսան հոգեբանական դիագնոստիկայի հսկայական հրատարակություններ, որոնք հիմնականում հավանության արժանացան ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի կողմից: Այդ շտեմարանները, որոնցում հավաքված էին տեսականորեն հիմնավորված, տարբեր ուղղությունների և տեսակների հոգեբանական թեստեր, արդեն առավել հիմքային և համակողմանի էին ներկայացված[15]:

Շատ աշխատություններում պրոֆեսիոնալ հոգեբանները ներկայացնում էին գիտական հոգեբանության մեջ թեստերի օգտագործման և այլընտրանքային կրթության գործընթացում տեսության և պրակտիկայի փոխկապակցվածությունը:

---

of clinical and research application. Englewood Cliffs, NJ; Prentice-Hall.; ***Dahlstrom W. G. & Welsh G. S.*** (1960). An MMPI handbook: A guide to use in clinical practice and research. Minneapolis: University of Minnesota Press. Behavioral Assessment; A Practical Handbook.; ***Bellack A. S. & Hersen M. (Eds.)*** (1998). Behavioral assessment: A practical handbook (4th ed.). New York: Pergamon Press; Handbook of Behavioral Assessment.; ***Ciminero A. R., Calhoun, K. S., & Adams H. E. (Eds.).*** (1977). Handbook of behavioral assessment. New York: Wiley:

[15] Տե՛ս ***Birchler G. R.*** (1989). Review of behavioral assessment: A practical handbook (3rd ed.). Behavioral Assessment, 11.; ***Kline Paul*** (2000), The Handbook of Psychological Testing. Second ed.; ***Groth-Marnat Gary*** (2013) Handbook of Psychological Assessment, Fourth edition / John Wiley & Sons, Inc. pp. 67-68.; ***Maruish M. E.*** (Ed.). (2000). Handbook of psychological testing in primary care settings. Mahwah, NJ: Erlbaum.; ***Dana R. H.*** (2000). Handbook of cross-cultural and multi-cultural personality assessment.; ***Mahwah NJ: Erlbaum.*** APA Handbook of Testing and Assessment in Psychology / Editor-in-Chief: Kurt F. Geisinger (2013), APA Reference Books Collection, 2010 p.:

Հետագայում, հրատարակության յուրահատկությունից ելնելով, ներկայացվում են տարբեր թեստեր՝ ըստ դասակարգումների և կիրառման ոլորտների (կլինիկական հոգեբանություն, կառավարման հոգեբանություն, կազմակերպչական, առողջության, խորհրդատվություն, դպրոցական հոգեբանություն և այլն):

Ներկայումս հոգեբանության մեջ համարվում է, որ գոյություն ունեն ավելի քան 15000 հոգեդիագնոստիկ մեթոդներ, որոնք գործնականում կիրառվում են տարբեր ոլորտներում: Նշված թիվը հարաբերական է, քանի որ դժվար է հաշվառել տարբեր երկրներում, տարբեր լեզուներով մշակված և կիրառվող հոգեբանական թեստերի քանակը: Հոգեդիագնոստիկ մեթոդների միջոցով մարդու յուրահատկությունների ուսումնասիրությունը հնարավոր դարձավ միայն այն ժամանակ, երբ հոգեբանության մեջ առաջացան մի շարք կարևոր նախադրյալներ: Այդ դեպքում հենք է ընդունվում նոզոլոգիական մոտեցման այն դրույթը, ըստ որի տարբերակում է մարդու երկու վիճակ՝ «առողջություն» – «հիվանդություն»:

Լայն իմաստով դիագնոստիկան ներառում է «նորմա», «առողջություն», «ախտաբանություն» եզրույթների համադրություն և նորմային համապատասխանելու առումով իրականացնում է առանձին օբյեկտի վիճակի ճանաչման գիտագործնական գործընթաց գիտությանը հայտնի դասակարգերի նմանությամբ տվյալ օբյեկտի ամփոփման հիման վրա: Նրա նպատակն է գործառնական (ֆունկցիոնալ) նորմալ վիճակում համակարգի կանխատեսումը, վերադարձը կամ ապահովումը: Նորմա հասկացության վերլուծությունը մատնանշում է, որ պրակտիկ հոգեբանի համար այն դիտարկվում է երկու տեսակետից՝ որպես հոգե-

դիագնոստիկայի օբյեկտի վիճակ և որպես ելակետային սկզբունք՝ հետազոտական տվյալները համեմատելու համար[16]:

Դիագնոստիկան՝ որպես գիտություն, բժշկական պրակտիկայի բոլոր դեպքերում ձգտում է դիագնոստիկ գործունեության օրինաչափությունները նկարագրել ճշգրիտ: Հենվելով գիտական իմացության մեթոդների վրա՝ այն կառուցվում է միայն ճշգրիտ սահմանված փաստերի հիման վրա, որոնք բխում են դրանցից արված ախտորոշման տրամաբանական հետևություններից: Մյուս կողմից՝ դիագնոստիկան յուրաքանչյուրին հասանելի հմտություն (արվեստ) չէ, քանի որ դիագնոստիկ գործունեության հիմքում ընկած է ինտուիցիան: Պրակտիկ աշխատողների և հետազոտողների ճնշող մասը գտնում է, որ այն միաժամանակ և՛ գիտություն է, և՛ արվեստ:

Ռուս հոգեբանների հրատարակություններում գործնական հոգեդիագնոստիկայի ներկա իրավիճակը գնահատվում է ճգնաժամային[17]: Հոգեդիագնոստիկ հետազոտությունների մեթոդական կողմի ապահովումը շարունակում է էապես գերազանցել դրանց գործառնական հնարավորությունները և տեղեկատվական մակարդակը: Սա տեղի է ունենում գործունեության իրավական հիմքի լրիվ բացակայության և հետևաբար՝ այդ գործընթացի բարոյագիտական պրոֆեսիոնալ հսկողության պայմաններում:

[16] Տե՛ս ***Ануфриев А. Ф.,*** Психологический диагноз. М.: “Ось-89”, 2006. - с. 65-66.

[17] Տե՛ս ***Абрамова Г. С.,*** Практическая психология. Изд. 3. - Екатеринбург: “Деловая книга”, 1998. – 368 с.; ***Анастази А.,*** Психологическое тестирование. - М.: «Педагогика», 1982. – 320 с.; ***Немов Р. С.,*** Психология. Кн. 3. Психодиагностика. - М.: Гуманит. изд. центр “Владос”, 2001. - 640 с.

Հետազոտության տվյալ բաժնի նպատակն է նկարագրել հոգեդիագնոստիկայի ներկա վիճակը և դրա զարգացման ժամանակակից միտումները:Թեստերը պետք է հոգեբաններին հնարավորություն ընձեռեն ստանալու անձի հատկությունների և վարքի գնահատման այնպիսի չափորոշիչներ, որոնք կլինեն հստակ, արդյունավետ, հասկանալի և պետք է գնահատվեն մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող անձի կողմից: Հոգեբանը, ինչպես նաև բժիշկ իրավունք չունի սխալվելու:

Հոգեդիագնոստիկ մեթոդը թույլ է տալիս առանձնացնել սուբյեկտի ակտիվությունը պայմանավորող անհատական առանձնահատկությունները, նրա վարքի իրավիճակային դրսևորումն այս կամ այն պայմաններում, ինչպես նաև որոշ սոցիալ-հոգեբանական (սոցիալական ընկալում, լիդերություն, միջանձնային հարաբերություններ) և դրդապատճառային ցուցանիշներ (նվաճումների ձգտում կամ խուսափում) և այլ առանձնահատկություններ:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրության դարձնել անձի ախտորոշման պրոյեկտիվ տեխնիկաների ստեղծմանն ու զարգացմանը՝ ըստ փորձերից ստացված տարբեր տեսակի մեկնաբանությունների[18]: Պետք է նշել, որ ճանաչման տարբեր միջոցները անխուսափելիորեն հանգեցնում են ճանաչման: Անկախ առարկա հանդիսացող օբյեկտի վերաբերյալ ձևավորում են տարբեր նկարագրումներ: Տարօրինակ է, որ Ռ. Նեմովը իր բավականին հիմնարար և ծավալուն գրքում նկարագրում ու մեկնաբանում

[18] Տե՛ս ***Немов Р. С.,*** Психология: В 3 кн. - Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. - М.: Гуманит. изд. центр "Владос", 2000. - С. 6-56.; ***Бодалев А. А., Столин В. В.,*** Общая психодиагностика, - СПб.: "Речь", 2000. – 448 с.:

բազմաթիվ մեթոդիկաներ, սակայն անտեսում է պրոյեկտիվ թեստերը:

«Չափվող անհատականության» տեսությունը միջանկյալ դիրք է զբաղեցնում ժամանակակից հետազոտություններում ներդրված՝ հոգեբանական տեսությունների (հոգեվերլուծություն, գործունեության տեսություն և այլն) և կիրառական «միկրոտեսությունների» միջև: Դրանով «չափվող անհատականության» տեսությունը լրացնում է տեսական բացերը հոգեկանի ճանաչման համակարգում: «Չափվող անհատականության» տեսությունը հոգեդիագնոստիկ մեթոդի շրջանակներում ներկայումս օգտագործում է երեք մոտեցում, որոնցից բխեցնում են դիագնոստիկ մեթոդներ՝ հիմնված չափողական հետազոտությունների վրա.

ա) «օբյեկտիվ» մոտեցում՝ դիագնոստիկան իրականացվում է հաջողության (արդյունավետության) հիմքի և թեստերի կատարման միջոցի (առանձնահատկությունների) վրա,

բ) «սուբյեկտիվ» մոտեցում՝ դիագնոստիկան իրականացվում է անձի ինքնաներկայացման առանձնահատկությունների, տարբեր իրավիճակներում նրա ինքնադրսևորման հիման վրա,

գ) «պրոյեկտիվ» մոտեցում՝ դիագնոստիկան իրականացվում է պրոյեկցիայի օբյեկտ դարձած արտաքին անհայտ ազդակների հիման վրա[19]:

Այսպիսով, կարելի է ասել, որ հոգեբանական դիագնոստիկան ուղղված է վարքի անհատական յուրահատկության և ապրումների գնահատմանը, այսինքն՝ ամենից առաջ անհատի կող-

---

[19] Տե՛ս ***Бурлачук Л. Ф., Коржова Е. Ю.,*** К построению теории «измеренной индивидуальности» в психодиагностике // Вопросы психологии. 1994. No 5. - с. 9-10.

մից սուբյեկտիվ իրականության արտացոլման յուրահատկությանը, նրա՝ օբյեկտիվ իրականության արտացոլմանը և աղճատմանը[20]:

Ներկայումս ստեղծված են մեծ քանակությամբ տարբեր հոգեդիագնոստիկ սարքավորումներ, որոնք փաստացի ընդունակ են գրանցել պատվիրատուի կողմից նկարագրված մարդու ցանկացած հատկությունը, սակայն ստանալով նույնիսկ նրան հետաքրքրող հատկությունների վերաբերյալ դիագնոստիկ տվյալները, ինչպես հետազոտողը, այնպես էլ պատվիրատուն հաճախ վատ են պատկերացնում, թե ինչպիսի վարք է հարկավոր սպասել հետազոտվողից, ինչում են դրսևորվում կամ չեն դրսևորվում նրա այդ հատկությունները[21]: Պրակտիկ խնդիրների հարցադրումը գնահատման ավարտին ենթադրում մեծամասամբ է ոչ միայն հետազոտվողների առանձնահատկությունների նկարագրական բնութագիրը «այժմ և այստեղ», այլև այդ մարդկանց վարքի կանխատեսումը տարբեր պայմաններում (ցանկալի է երկար ժամանակով):

Հիմնական ուշադրությունը կենտրոնանում է փորձերի պահին ստացված արդյունքների, վարքի վերլուծության վրա և շատ քիչ է օգտագործվում մարդու նախկին փորձի մասին տեղեկատվությունը՝ կենսագրական մեթոդ, հետազոտվողի գործունեության արդյունքների, փաստաթղթերի վերլուծություն: Մարդու

---

[20] Տե՛ս ***Каган М. С., Эткинд А. М.,*** Индивидуальность как объективная и субъективная реальность // Вопросы психологии. 1989, № 4, - с. 10:

[21] Տե՛ս ***Грановская Р. М.,*** Элементы практической психологии. Издательство Ленинградского университета, 1988. - 560 с.; ***Рогов Е. И.,*** Настольная книга практического психолога: Учеб. пособие: В 2 кн. 2-е изд., перераб. и доп. - М.: Гума-нит. изд. центр ВЛАДОС, 1999. Кн. 1: Система работы психолога с детьми разного возраста, 1999, - с. 246:

տվյալ պահի վիճակով հետաքրքրությունը պատահական չէ, այն պայմանավորված է ստացվող տեղեկությունը հոգեբանների կողմից օգտագործելու անկարողությամբ, այն ձևակերպելու, մեկնաբանման և համեմատական վերլուծություն կատարելու դժվարություններով: Հոգեբանի որակավորման հիմնական նշանակությունն ի հայտ է գալիս հենց արդյունքների մեկնաբանման, եզրահանգման ու հանձնարարականների կազմման փուլում: Համապատասխանաբար, այս փուլում կարևոր են ինչպես հոգեբանական իրավասությունը, այնպես էլ արդյունքների տեսական վերլուծության խորությունը, որոնք, ըստ սահմանման, տարբեր են առանձին մասնագետների մոտ:

Հոգեդիագնոստիկայի ոլորտում բազմամյա աշխատանքային փորձը հուշում է մի քանի պարտադիր մանրուքների մասին, որոնք պետք է հաշվի առնել թեստերի արդյունքների վերլուծության և ներկայացման ժամանակ: Բացի մեթոդի մեթոդաբանական հիմքի մասին գիտելիքներից, անցկացման պայմաններից, թեստի հրահանգից և մեկնաբանման բանաձևից կամ «բանալիից», անհրաժեշտ է մասնագիտական ինտուիցիա ու ռեֆլեքսիա («բնազդային զգացում», «արտացոլում»):

Հոգեդիագնոստիկան՝ որպես հոգեչափման և գիտատեխնոլոգիական հատուկ ներառական ուղղություն, հիմնվում է ինչպես քանակական, այնպես էլ՝ որակական մոտեցումների վրա: Այն լայն տարածում է ստացել գլխավորապես գրանցվող արդյունքների որակական և քանական գնահատման նպատակով իրականացվող հետազոտություններում: Թեստերի կիրառման առանձնահատկություններով և հոգեբանական հետազոտության մեթոդների նկարագրական բնույթով պայմանավորված՝

մշտապես աշխատանք է տարվում՝ մեթոդաբանական տարբեր մոտեցումների համադրության հիմնահարցի շուրջ:

Հայաստանում մեծ մասամբ թեստերը թարգմանվում են ռուսական բազմաթիվ ժողովածուներում հրատարակված տարբերակներից, որոնցում նույնպես նկատվում են անճշտություններ և նույնիսկ սխալներ: Մեր մասնագետներն էլ, իրենց հերթին դրանք թարգմանելով հայերեն, այն չեն հարմարեցնում համապատասխան պահանջներին և իրական թեստային նորմերին: Առաջին հերթին դրանք ազգային նորմերն են, որոնք մշակվում են կոնկրետ ժողովրդի, ազգի և ընդհանրապես երկրի ներկայացուցիչների համար: Այս չափորոշիչները սահմանվում են կոնկրետ մշակույթով, յուրաքանչյուր ազգի պահանջներով, տարծված կարծրատիպերով և ավանդույթներով կամ մարդկանց սոցիալական ընդհանրությունով:

Հայաստանում հոգեբանական կրթության վիճակը կարճ կարելի է բնորոշել որպես դինամիկ զարգացող և «կտրուկ կոնտինենտալ» (մեր երկրի կլիմային և մտածելակերպին համապատասխան): Խորհրդային ժամանակաշրջանի ավանդույթներն արևմտյանի փոխակերպող գիտնականները գործնական հոգեբանության ոլորտում ունեցել են և՛ ձեռքբերումներ, և՛ վայրէջքներ: Հոգեբանությունը՝ որպես գիտական, գործնական և ուսուցողական գիտակարգ, վերջին 20-25 տարիներում անցել է դըժվարին և հակասական ճանապարհ: «Հոգեբանական նոր դպրոցի» կայացման գործընթացում (չակերտներում, քանի որ դեռևս դժվար է այն կայացած համարել) սովորել են ոչ միայն ուսանողները, այլև մասնագետները՝ վերցնելով (փոխ առնելով) արևմտյան (մասնավորապես՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա) և մասամբ էլ ռուս հոգեբանների փորձը: Անհնար է թերագնահատել

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում կազմակերպվող, արդեն ավանդական դարձած «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» (2007-2017 թթ.) խորագրով միջազգային միակ  գիտաժողովի դերը ՀՀ-ում հոգեբանության զարգացման գործում (գիտաժողովի պաշտոնական կայքէջ՝ www. http://psyarm.com): Գիտական այդ խոշոր միջոցառումը նպաստեց միջազգային հոգեբանական հանրության մակարդակով՝ անմիջական գիտական շփմանը, մասնագիտական համագործակցության սահմանների ընդլայնմանը, հոգեբանության ոլորտում համատեղ գիտական ծրագրեր իրագործելու հնարավորության ստեղծմանը, ինքնառեֆլեքսիայի և սոցիալական ռեֆլեքսիայի գործընթացին, «գավառական» գիտական մտածողության մեջ զարգացման տարբեր տեսակի դեֆորմացիաների, ընդունված բարոյագիտական նորմերի աղավաղված պատկերացումների շտկմանը: Դրանք առաջանում են, երբ գիտությունը զարգանում է փակ հանրության շրջանակներում:

Շատ կարևոր  է համարվում այն, որ հոգեբանության ոլորտում և հարակից մասնագիտություններում, որտեղ պետք են հոգեբանական գիտելիքներ, կրթության որակն աստիճանաբար կատարելագործվում է: Բացի պետական հաստատություններից հոգեբանության ֆակուլտետներ են բացվել նաև մասնավոր բուհերում, որտեղ սովորում են մեծաթիվ ուսանողներ: Այսօր բուհի հոգեբանության բաժիններ ընդունվող ուսանողները ոչ միշտ են համապատասխանում ընդունված չափանիշներին, քանի որ ունեն բնագիտական ոլորտի անբավարար գիտելիքներ և թույլ զարգացած վերացարկված մտածողություն ու վերլուծական ընդունակություններ: Այդ պատճառով նրանք դժվար են յուրաց-

նում մի շարք հիմնարար առարկաներ՝ նեյրոֆիզիոլոգիա, հոգեգենետիկա, ախտաբանական հոգեբանություն: Թեև պետք է նշել, որ այդ բուհերը որոշակի ներդրում ունեն հոգեբանական կրթության զարգացման գործընթացում:

Շատ կարևոր գործոն է այն, որ ուսանող-հոգեբանները շատ մոտիվացված են և ունեն նախնական բարձր պատրաստվածություն, այդ է վկայում հոգեբանության ֆակուլտետներում ընդունելության բարձր մրցույթը, որը թույլ տալիս արձանագրելու բոլոր նախադրյալները հայրենական հոգեբանության զարգացման համար: Չնայած դեռևս հայոց լեզվով մասնագիտական գրականության պակաս կա, այնուամենայնիվ այս տարիներին մեծ թվով ձեռնարկներ և ժողովածուներ են ստեղծվել: Մեղմ ասած՝ հնարավորինս դուրս մղվեցին կասկածելի որակի, տեղեկատվությամբ, առանց արհեստավարժի կողմից գրախոսականի և տվյալ բնագավառի մասնագետների փորձագիտական դրական գնահատական չստացած աշխատությունները:

Մեր երկրի մասնագետները շարունակական քայլեր են կատարում՝ դեպի հոգեդիագնոստիկ գործիքակազմի օգտագործման քաղաքակիրթ ձևերը, որոնք արդեն ընդունված են շատ երկրներում՝ լայնորեն և լավ կազմակերպված հոգեբանական ծառայության ցանցով: Ներկայումս մեզ մոտ բացակայում են մարդու իրավունքները պաշտպանող օրենսդրական և նորմատիվային ակտեր, որոնք կկարգավորեն նաև հոգեբանական հետազոտություններում պրակտիկ-հոգեբանների աշխատանքը: Այդ բացթողումը մատնանշում են ինչպես պետական, այնպես էլ հասարակական կազմակերպությունները: Հոգեդիագնոստիկ և հոգեթերապևտիկ գործունեության իրավական կարգավորման (և ոչ թե վերահսկման) դրական փորձ կա Հոգեբանների ամերի-

կյան ասոցիացիայում (APA), որը համախմբում է ԱՄՆ-ի և Կանադայի գրեթե բոլոր հոգեբաններին (AAASP): Մասնագիտական էթիկայի հարցերը ոչ պակաս արդյունավետ լուծված են եվրոպական մի շարք հոգեբանական ասոցիացիաներում (STAR-սթրեսի և տագնապի հետազոտական եվրոպական ասոցիացիա, BFB - կենսաբանական հետադարձ կապի հետազոտման եվրոպական միություն): Հայտնի են հոգեբանական դիագնոստիկայի հիմնական սկզբունքները, որոնք ամփոփում են հոգեբանի գործունեության էթիկայի կանոնները և կարգավորիչները: Այդ սկզբունքներից առանձնացվում են հետևյալ ամենակարևորները՝ պատասխանատվություն, իրավասություններ, կոմպետենտություն, գաղտնիություն, մեթոդների գիտական հիմնավորվածություն, չվնասել, եզրակացությունների օբյեկտիվություն, համալիր ու համակողմանի գնահատում և այլն: Թվարկված և այլ բազմաթիվ իրավիճակային պահանջների (մեթոդների ընտրության, համալրման, մեկնաբանության և ներկայացման ձևի, վերակառուցման ու վերամշակման) պահպանումը մշտապես պիտի գտնվի և՛ հետազոտություններ, և՛ պրակտիկ գործունեություն իրականացնող հոգեբանի ուշադրության կենտրոնում:

Այս հետևությունններն արվել են բազմաթիվ գիտաժողովների մասնակցության և դրանց ժամանակ տվյալ երկրների առաջատար հոգեբանների հետ հաստատված մասնագիտական կապերի շնորհիվ[22]:

---

[22] Տե՛ս ***Avanesyan H. M.*** The characteristic of athlete's psychic state by integral exponent / 14 International Conference of STAR research society, Cairo-Egypt, 1993.; ***Avanesyan H. M.*** The influence of psychotherapies procedures and physical activity on the psychical state of adolescents after widespread fatalities // IV th European Congress of Psychology, Proceedings, Athens, Greece, Rer. 0113/1, 1995.; ***Avanesyan H. M.*** Psychoregulation program for athletes in Connection with

Սեփական փորձի և հոգեբանական լուրջ գիտելիքների բացակայությունը «ավանդական» կամ «շտապ» եղանակներով պատրաստված պրակտիկ հոգեբանների մեծ մասին անհրաժեշտ որակավորում և փորձ չի տալիս իրական պրակտիկ գործունեություն ծավալելու համար: Միաժամանակ այդպիսի հոգեբանը իրավունք է ստանում երեխաների և մեծահասակների հետ գնահատող հետազոտություն իրականացնելու և, հետևաբար, տիրապետելու դիագնոստիկ նյութերին:

Մեր օրերի հոգեբանությունը մարդուն ուսումնասիրող տեսական բնագավառներից է, միաժամանակ կիրառական գիտության համակարգ է, որը թույլ է տալիս և՛ գործնական հոգեբանին, և՛ հարակից մասնագետին (մանկավարժին, սոցիոլոգին, կառավարչին, մարզիչին, բժշկին) կատարելագործելու մարդկանց հետ աշխատանք տանելու իր կարողությունները:

Բազմաթիվ ուսումնական ձեռնարկներում նշվում է, որ հոգեդիագնոստիկան հոգեբանության գիտահետազոտական և գործնական անբաժանելի մասն է, որն ունի ընդգրկուն ու բազ-

---

Specificity of sport // Journal of Applied Sport Psychology. AAASP. Conference San Diego, USA, 1997.Volume 9 Suppl.; 46.; ***Avanesyan H. M.*** Athlet's State Peculiakity in Connection with the Specificity of Sport Activities // XVI Annuel Conference on Conseling Athletes. Schedule of Presentation AAASP. Springfield. Ms. USA. May 27-29. 1999.; ***Avanesyan H. M.*** Influence of Emotional uneasiness on the status of the child in group // 22nd STAR International Conference, Abstracts, Palma de Mallorca. Spain, 12-14 July, 2001.; ***Avanesyan H. M.*** The Psychophysiological Data of Inprovement of wrestler's Physical capacity// VI IOC World Congress on Sport Sciences Salt Lake City, Utah, Sept. 16. 2001.; ***Avanesyan H. M.*** Identity the Caracteristics of Athletes' Emotion // 12th Annual Rothman Reserch Institute Conference/ Proceeding’s, Toronto, Canada, 2002.; ***Avanesyan H. M.*** Application of the Biofeedback the Process of Competitive Stress Control // 9th Annual BFE Meeting /Schedule. Hasselt, Belgium, 22-26.02.2005 :

մաքնույթ գործիքակազմ՝ ի դեմս թեստերի[23]: Հոգեդիագնոստիկայի դասականները դա մեկնաբանում են երկու կերպով. լայն իմաստով՝ հոգեդիագնոստիկ չափումն ընդհանրապես կարող է վերաբերել հոգեդիագնոստիկ վերլուծությանը ենթարկվող ցանկացած օբյեկտի՝ անձի կամ խմբի և հանդես գալ որպես նրա կամ նրանց առանձնահատկությունների բացահայտում և չափում, իսկ նեղ իմաստով՝ ավելի տարածական՝ անձի հոգեբանական առանձնահատկությունների «չափում» կամ գնահատում (*psychological assessment*):

Հոգեբանական գնահատման այդ մեթոդները մշտապես զարգացվում և կատարելագործվում են: Այսօրվա հոգեդիագնոստիկայի շտեմարաններում ներառված թեստերն արձագանքում են ի հայտ եկող սոցիալական բազմաթիվ մարտահրավերներին՝ տնտեսական և սոցիալական ճգնաժամեր, արտակարգ իրավիճակներ, բանակի, առողջապահության, սպորտի և այլ բնագավառներ (խուճապի և զանգվածային լարվածության գնահատում, աշխատակազմի ընտրություն և տեղաբաշխում, մասնագիտական կողմնորոշում, սոցիալական բավարարվածության կանխատեսում, օրինապահության կայունություն, հոգեթերապևտիկ և խորհրդատվական օգնություն, դատական հոգեբանահոգեբուժական փորձաքննություն, միջավայրի փոփոխության հոգեբանական հետևանքների կանխատեսում և այլն): Արդեն մշակված և փորձառության բոլոր փուլերն անցած թեստերն ունեն կիրառման հատուկ դաշտ. Դրանք միտված են երեխաների

[23] Տե՛ս ***Абрамова Г. С.,*** Практическая психология. 6-е изд., перераб. и доп., - М.: Академический Проект, 2003. - 496 с.; ***Немов Р. С.,*** Психология: Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. - М.: Гуманит. изд. центр "Владос", 2000. - 640 с:

և երիտասարդների ուսուցման ու դաստիարակության բարելավմանը:

Հոգեդիագնոստիկան ոչ միայն գործնական հոգեբանության ուղղություն է, այլև տեսական բնագավառ, որին պետք է լիարժեք տիրապետի յուրաքանչյուր հետազոտող ու գործնական հոգեբան: Հոգեդիագնոստիկան գործնական իմաստով կարելի է սահմանել որպես հոգեբանական ախտորոշման որոշում՝ օբյեկտների վիճակի նկարագրություն: Որպես այդպիսին կարող է հանդես գալ առանձին անհատը կամ ցանկացած խումբ[24]:

Հոգեբանների համալսարանական կրթության գործընթացում հետազոտական և մասնավորապես հոգեդիագնոստիկ մեթոդներին տիրապետելու հիմնախնդիրները համապատասխանաբար պիտի արժանանան հատուկ ուշադրության: Այդ գործընթացը պետք է ընտրողական լինի, քանի որ մեթոդիկաների մեջ կա մի մեծ խումբ, որի ուսուցումը շատ ժամանակ է պահանջում, և հնարավոր չէ տեղավորել ուսանողների ակադեմիական ժամաքանակի մեջ: Ամեն դեպքում հոգեբանները պարտադիր պետք է տեղեկացված լինեն, թե թեստերից որոնք են պահանջում անցկացման նախապատրաստման բարձր մակարդակ: Խնդիրներից մեկն էլ այն է, որ փաթեթները հասանելի են այն մարդկանց, ովքեր չունեն համապատասխան որակավորում: Լիակատար թեկնածու կարող է համարվել այն անձը, ով ունի բարձր որակավորում և ամբողջովին համապատասխանում է հոգեբանական թեստերի անցկացման պահանջներին: Հոգեբանների ամերիկյան ասոցիացիան նույնպես փորձել է հստակեցնել համակարգչային թեստավորման և մեկնաբանման պա-

---

[24] Տե՛ս ***Арендачук И. В.,*** Психодиагностика: теоретические основы науки. Часть 1, НИУ Саратовский государственный университет, - Саратов, 2014, с. 4-6:

հանջները, որոնց համապատասխան մշակել են հստակ չափանիշներ (APA - 1986)։ Համենայնդեպս, հոգեբանությանը նվիրված աշխատությունների սկզբնաղբյուրների վերլուծությունը ցույց է տվել, որ նման ծրագրերի մեկ հինգերորդ մասը կարող է հասանելի լինել հասարակության լայն զանգվածներին[25]։

Միանշանակ արդարացի է նշում Կ. Գուրևիչը, որ ժամանակակից հոգեդիագնոստիկայի զարգացումն ունի մարդասիրական միտում, որի շնորհիվ թեստերը բացի հատկանիշների վիճակագրական չափորոշիչները գրանցելուց, մատնանշում են անձի զարգացման հեռանկարը և կարգավորման հնարավոր ուղիները[26]։ Այլ կերպ ասած թեստերին բնորոշ է նաև շտկողական (անգլ.՝ *correctional*) սկզբունքի իրականացումը։ Հոգեդիագնոստիկ մեթոդիկաների կարգավորիչ գործառույթի առանձնահատկությունների և ռեֆլեքսիվ բնույթի ուսումնասիրություն նախաձեռնվեց ասպիրանտ Արթուր Միրզոյանի հետ, ում ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել հոգեդիագնոստիկ մեթոդիկաների բազմաֆունկցիոնալ և զարգացնող ներուժի առանձնահատկությունները[27]։ Ռոզենցվեյգի պրոյեկտիվ թեստի մանկական տարբերակի տեղայնացումից հետո 8-12 տարեկան երեխաների հետ իրականացվել է լոնգիտյուդ հետազոտություն, որի գործընթացում հատուկ նշանակություն է տրվել տվյալ մե-

---

[25] Տե՛ս ***Groth-Marnat Gary*** (2013) Handbook of Psychological Assessment, Fourth edition / John Wiley & Sons, Inc. pp. 67-68։

[26] Տե՛ս ***Гуревич К. М., Борисова Е. М.*** Психологическая диагностика. Учебное пособие / М.: Изд-во УРАО, 1997. - 304 с:

[27] Տե՛ս ***Ավանեսյան Հ., Միրզոյան Ա.***, Դեռահասի ֆրուստրացիայի թեստավորման մեթոդիկայի յուրահատկությունը // «Հասարակություն, ընտանիք, դեռահաս» միջազգային գիտագործնական համաժողովի հոդվածների ժողովածու, Եր., 2012, էջ 60-65։

թոդիկայի հոգեշտկողական գործառույթին և անհատական զրույցին:

Որպես տեսական բնագավառ՝ հոգեդիագնոստիկան գործ ունի մարդու ներաշխարհը բնութագրող հաստատուն և փոփոխական մեծությունների հետ: Հոգեդիագնոստիկան մի կողմից տեսական կառուցվածքների ստուգման միջոց է, մյուս կողմից՝ տեսական կառուցվածքների կոնկրետ մարմնավորում՝ վերացական տեսությունից, ընդհանրացումից դեպի կոնկրետ փաստին շարժման միջոց:

Բազմաթիվ հոգեբաններ, անդրադառնալով հոգեդիագնոստիկայի տեսական հիմունքներին, նշում են մեթոդաբանական հինգ հիմնական սկզբունք: Քանի որ ժամանակակից հոգեբանության մեթոդաբանությունում կան վիճահարույց հարցեր, որոնք նաև արտացոլվում են հոգեախտաբանման բնագավառում, այսօր նպատակահարմար է հենվել տեսական հոգեախտաբանման հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- արտացոլման սկզբունք – շրջապատող աշխարհի համապատասխան արտացոլումը ապահովում է մարդու գործունեության արդյունավետ կարգավորումը,
- զարգացման սկզբունք – կողմնորոշում է հոգեկան երևույթների առաջացման պայմանների ուսումնասիրումը, դրանց փոփոխման միտումները, այդ փոփոխությունների որակական և քանակական բնութագրումները,
- երևույթի և էության դիալեկտիկական կապի սկզբունք, որը թույլ է տալիս տեսնել այս փիլիսոփայական կատեգորիաների փոխադարձ պայմանավորվածությունը՝ հոգեկան իրականության հիման վրա, նրանց ոչ նույնականության պայմաններում,

- գործունեության և իմացության միասնության սկզբունք - հոգեկանը և իմացությունը ձևավորվում են մարդու գործունեությունում, միաժամանակ գործունեությունը կարգավորվում է հոգեկանով և իմացությամբ,
- անհատականության սկզբունք, ըստ որի՝ հոգեբանից պահանջվում են մարդու անհատական առանձնահատկությունների վերլուծություն, նրա կոնկրետ կյանքի իրավիճակի, նրա օնտոգենեզի հաշվառում[28]:

Այս հինգ սկզբունքների կիրառումը համապատասխանաբար թույլ է տալիս հոգեկանի իրական փոփոխությունների մասին հավաստի տվյալների ստացման համար մշակել հոգեդիագնոստիկ հատուկ մեթոդիկաներ[29]:

Ըստ որոշ հեղինակների՝ թեստաբանությունը (testology, тестология) չի կարող անհատական տարբերությունների հոգեբանության ուսումնասիրման հիմնական և միակ միջոց լինել: Սանկտպետերբուրգյան դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Ա. Լազուրսկին, դեռևս 1912 թվականին նշում էր, որ անձի անհատական տարբերությունների հետազոտության համար միայն թեստերը բավարար չեն[30]: Հոգեդիագնոստիկայի առաջացման ամենակարևոր աղբյուրները չորսն են՝ փորձարարական հոգեբանություն, դիֆերենցիալ հոգեբանություն, կիրառական հոգե-

---

[28] Տե՛ս ***Абрамова Г. С.,*** Практическая психология. 6-е изд., перераб. и доп., - М.: Академический Проект, 2003. - 496 с.; ***Немов Р. С.,*** Психология: Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. - М.: Гуманит. изд. центр “Владос”, 2000. - 640 с.:

[29] Տե՛ս ***Абрамова Г. С.,*** Практическая психология, http://www.psyho.ru/library/books/abramova-gs-prakticheskaya-psixologiya/2/6/:

[30] ***Белова. О. В.,*** Общая психодиагностика. (Методические указания). Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996. – 76 с.

բանություն և թեստաբանություն[31]: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Լ. Տիտկովան իր ուսումնական ձեռնարկում ներկայացնում է հոգեբանության այդ բնագավառների դերը հոգեդիագնոստիայի կայացման գործընթացում: Նա մասնավորապես նշում է, որ սկզբնական շրջանում փորձարարական հոգեբանությունը զբաղվում էր հոգեկան այն պարզ հատկությունների և գործընթացների ուսումնասիրությամբ, որոնք առաջանում էին հատուկ գրգռիչների միջոցով: Փորձարարական հոգեբանությունը տարատեսակ սարքավորումներով հագեցած բազմաթիվ մեթոդների շնորհիվ նպաստեց հոգեդիագնոստիկայի զարգացմանը: Ճիշտ չի լինի պնդել, որ հոգեդիագնոստիկան միանշանակ ծագել է փորձարարական հոգեբանությունից. օրինակ՝ Վունդտը կարծում էր, որ բարձրագույն հոգեկան գործառույթները, որոնք կազմում են մարդու անհատականությունը, հասանելի չեն փորձարարական հետազոտությանը: Այդուհանդերձ, փորձարարական հոգեբանությունը մասամբ որոշեց հոգեդիագնոստիկ մեթոդների ուսումնասիրության ուղղությունները շնորհիվ բնական գիտությունների մեթոդների օգտագործման, ինչպես նաև Վունդտի աշակերտների ջանքերի:

Այնուհետև նշվում է, որ հոգեդիագնոստիկայի զարգացման մեկ այլ աղբյուր է կիրառական հոգեբանությունը, որը կապված է Վ. Շտերնի անվան հետ: Նա է կազմել ինտելեկտի գործակից «IQ» թեստի գործակիցը: Կիրառական հոգեբանության մեջ Վ. Շտերնը տարբերություն է դրել հոգեբանական գնահատականի և հոգեբանական ազդեցության միջև: Այդ

---

[31] Տե՛ս ***Титкова Л. С.,*** Психодиагностика: Учебное пособие. – Владивосток: Изд-во. Дальневосточного университета, 2002. - с. 8-10:

հարաբերակցությունը համապատասխանում է կլինիկական մեթոդի էությանը: Միմյանցից զատելով հոգեդիագնոստիկան և հոգետեխնիկան որպես կիրառական հոգեբանության առանձին բաղադրիչներ՝ նա նշեց մի կողմից հոգեբանության մեջ դիագնոստիկ խնդիրների յուրահատկությունը, մյուս կողմից ձևակերպեց դիագնոստիկայի միասնության սկզբունքը: Վերջինս զարգացում չապրեց և մոռացվեց, սակայն հետագայում ընդունվեց մարքսիստական հոգեբանության կողմից (Լ. Ս. Վիգոտսկի և ուրիշներ): Ներկայումս կիրառական հոգեբանության առարկայի վերաբերյալ կոնկրետ սահմանում չկա: Այն մի կողմից զբաղվում է այնպիսի հարցերով, որոնք չեն վերաբերում ընդհանուր հոգեբանությանը, մյուս կողմից՝ այն ամենով, ինչը նպաստում է մարդու և շրջապատող միջավայրի հարաբերությունների բարելավմանը: Հեղինակը նշում է, որ երբեմն նեղացնելով հոգեդիագնոստիկայի գիտական նշանակությունը՝ այն անվանում են կիրառական հոգեբանություն: Այդ տեսակետը արդարացիորեն ունի շատ ընդդիմախոսներ, քանի որ այն տանում է հոգեդիագնոստիկայի գիտական, տեսական և մեթոդոլոգիական հիմքերի թերագնահատման և դառնում է դոգմատիկ ուղղվածություն ունեցող հոգեդիագնոստիկ հետազոտությունների առաջացման պատճառներից մեկը, որոնք խոչընդոտում են հոգեդիագնոստիկայի զարգացմանը[32]:

Ա. Անաստազիի գրքում դիֆերենցիալ հոգեբանության առաջացման ժամանակաշրջանը նշված է 1895 թվականը, որը կապված է Ա. Բինեի և Վ. Հենրիի անունների հետ:

---

[32] Տե՛ս ***Белова. О. В.,*** Общая психодиагностика. (Методические указания). Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996. – 76 с.:

Նրանք «Անհատականության հոգեբանություն» անվանմամբ հոդված են հրատարակել («*La psychologie individuelle*»)[33], որտեղ ներկայացվում է դիֆերենցիալ հոգեբանության նպատակները, առարկան և մեթոդների առաջին համակարգային վերլուծությունը: Որպես երկու գլխավոր խնդիր, նրանք առաջ են քաշել բնության և հոգեբանական գործընթացների անհատական տարբերությունները, ինչպես նաև՝ հոգեբանական գործընթացների փոխհարաբերակցությունը: Ռուսական աղբյուրներում հանդիպում են սխալ ամսաթվեր և հեղինակների անուններ: Հոգեդիագնոստիկայի ուսումնական ձեռնարկներում նշված է 1986 թվականը, իսկ հետո նշվում է, որ Ա. Բինեն և Վ. Անրին «Անհատական հոգեբանություն» թեմայի զեկույցով են հանդես եկել[34]: Բնութագրին հավատարիմ լինելու համար ֆրանսիացի հոգեբանների անուն-ազգանունները հղում ենք բնօրինակով. Alfred Binet (1857-1911) и Victor Henri (1872-1940):

Հոգեբանական չափումների գործում մեծ նշանակություն ունի Ֆրանսիս Գալտոնի վաստակը մարդաբանության, աշխարհագրության, մաթեմատիկայի և օդերևութաբանության ոլորտներում:

Դիֆերենցիալ հոգեբանության հիմնադիր է համարվում Վ. Շտերնը, ով 1900 թվականին հրապարակեց իր աշխատու-

---

[33] Տե՛ս ***Анастази А.,*** Дифференциальная психология. Индивидуальные и групповые различия в поведении / Пер. с англ. - М.: Апрель Пресс, Изд-во ЭКСМО-Пресс, 2001. - с. 27:

[34] Տե՛ս ***Титкова Л. С.,*** Психодиагностика: Учебное пособие. – Владивосток: Изд-во. Дальневосточного университета, 2002. - 425 с.; ***Либин А. В.,*** Дифференциальная психология: на пересечении европейских, российских и американских традиций… - М.: Планета детей, 1997. - 328 с.:

թյունը, որը կրում է «Հոգեբանություն անհատական տարբերությունների մասին» անվանումը *(«Uber Psychologie der individuellen Differenzen»)*: Այն հետագայում խթանեց դիֆերենցիալ հոգեբանության զարգացումը: Առանց դիֆերենցիալ հոգեբանության նվաճումների՝ հոգեդիագնոստիկան, որի նպատակն էր ուսումնասիրել և վերլուծել կոնկրետ մարդուն, չէր կարող վերածվել ինքնուրույն ճյուղի: Հոգեդիագնոստիկայի առաջ գալը նպաստեց, որ անհատական առանձնահատկությունների ուսումնասիրությունից անցում կատարվի դեպի անհատականությունների ուսումնասիրությանը: Հենց այս հատկանիշն էլ այն սահմանն է, որը դրվում է հոգեդիագնոստիկայի և դիֆերենցիալ հոգեբանության միջև: Սակայն միևնույն ժամանակ պարզ երևում է, որ դրանց միջև միշտ էլ գոյություն է ունեցել անքաժանելի կապ: Նրանք ներհոգեբանություն երկու ճյուղերն են և ունեն ուսումնասիրության ընդհանուր, յուրահատուկ բնագավառ: Հոգեդիագնոստիկան և դիֆերենցիալ հոգեբանությունը կապող օղակ են մի կողմից տիպոլոգիայի, մյուս կողմից անձի հոգեբանության միջև: Հոգեդիագնոստիկայի և դիֆերենցիալ հոգեբանության տարանջատումը մեծ նշանակություն ունի: Դրանց ոչ լիարժեք տարանջատումը հանգեցրել է այն բանին, որ հետազոտական և դիագնոստիկական մեթոդները խառնվել են, և դրա հետևանքով անհատականությունը փոխարինվում է խմբով, և ախտորոշվում են ոչ թե անհատների տարբերությունները, այլ խմբերը: Հոգեդիագնոստիկան և դիֆերենցիալ հոգեբանությունը միմյանց չեն հակասում, այլ լրացնում են միմյանց՝ ստեղծելով մեկ ամբողջականություն[35]:

[35] Տե՛ս ***Бурлачук Л. Ф.*** Психодиагностика: Учебник для вузов. - СПб.: Питер,

Որպես չորրորդ և ամենակարևոր ազդեցություն ունեցած բնագավառ առանձնացվում է թեստոլոգիան (թեստաբանություն), քանի որ նրա շնորհիվ մշակվել են հոգեկան հատկությունների օբյեկտիվ արտացոլման այնպիսի միջոցներ, որոնք պահպանել են իրենց նշանակությունը մինչև այսօր: Թեստոլոգիայի հիմնադիրը միանշանակ համարվում է ամերիկացի հոգեբան Ջ. Մ. Կետտելը, քանի որ նրա «Մտավոր թեստեր և չափումներ» հոդվածը որոշիչ դեր խաղաց դիագնոստիկ մեթոդների մշակման գործում: Հենց Կետտելի շնորհիվ, ով առաջարկել էր 50 թեստի տարբերակներ ուսումնական հաստատություններում, սկսվեց ինտելեկտի ուսումնասիրության ավանդույթը, որը մինչև հիմա պահպանվում է ամերիկյան համալսարաններում[36]: Շատ նշանակալի դեր են կատարել Ա. Բինեի աշխատանքները. նա համարվում է մտավոր զարգացվածության թեստերի հիմնադիրը: Քանի որ թեստոլոգիայում և դիֆերենցիալ հոգեբանության մեջ հանդիպում են միևնույն անունները, ուստի երբեմն եզրակացնում են, որ «հոգեդիագնոստիկան այդ երկու ուղղությունների համակցություն է»: Այդ երկու ուղղությունների կապը պատմագիտական առումով իրոք մեծ տեղ ունի և գուցե հենց դրանով է բացատրվում թեստերի լայն կիրառությունը: Քանի որ հոգեդիագնոստիկան սկզբնական շրջանում սերտ կապի մեջ էր դիֆերենցիալ հոգեբանության հետ, ապա դիֆերենցիալ-հոգեբանական թեստերի օգտագործումն անհատական տարբերությունների չափ-

---

2006. - с. 117-118:

[36] Տե՛ս ***Титкова Л. С.,*** Психодиагностика: Учебное пособие. – Владивосток: Изд-во. Дальневосточного университета, 2002. - С. 9.; ***Гуревич К. М., Борисова Е. М.,*** Психологическая диагностика. Учебное пособие / М.: Изд-во УРАО, 1997. - с. 7-8:

ման համար ընդունելի են և արդարացված: Հետևաբար՝ դիֆերենցիալ հոգեչափման հիմնական նպատակն է համարվում հոգեդիագնոստիկ մեթոդների չափողական պահանջների մշակումը: Այդ պահանջները վերաբերում են մեթոդների տեղայնացմանը, մշակմանը, ստացված տվյալների մեկնաբանմանը, մաթեմատիկական համակարգով դրանց վերլուծությանը[37]:

Տվյալ հիմնախնդրի տեսական վերլուծությունը ցույց է տվել, որ հեղինակներից շատերը, հոգեդիագնոստիկայի առաջացումը մեկնաբանելիս, անտեսում կամ բաց են թողնում այնպիսի նշանակալի առարկաներ, ինչպիսիք են հոգեբուժությունը, կլինիկական հոգեբանությունը և հոգեթերապիան: Այս պարագայում հաշվի է առնվում այն փաստը, որ կլինիկական դեպքերի կամ սահմանային վիճակների հետ աշխատանքը մշտապես պայմանավորված է հոգեչափիչ չափումների անհրաժեշտությամբ:

Ներկայումս գործնական կիրառություն ստացած են մի շարք հոգեդիագնոստիկ մեթոդներ ներկայացվում են նաև բնական գիտություններին, օր.՝ ֆիզիկային: Դա օպերացիոնալիզացիայի հաստատուն պահանջն է: Վերջինս ենթադրում է պրակտիկ գործողությունների կամ օպերացիաների ցուցումներ, որոնք կարող է կատարել ցանկացած հետազոտող, որպեսզի համոզվի, որ երևույթ հասկացությունում հաստատունը տիրապետում է հենց այն հատկություններին, որոնք նրան վերագրվում են: Վերիֆիկացիայի ցուցանիշի օգնությամբ ստուգվում է գիտական շրջանառություն մտնող և գիտական աստիճանի հավակնող

[37] ***Волчанский М. Е.,*** Общие основы психодиагностики. Методические рекомендации / ВолГМУ, Волгоград, 2007. - с. 9.

ցանկացած նոր հասկացություն՝ նրա իսկությունը ստուգելու համար, այսինքն՝ այդ հասկացությունով որոշվող երևույթի առկայությունը և իրական լինելը ճշտելու համար[38]:

Հնարավոր է, որ անձի համոզմունքները բացահայտելու ամենահուսալի տարբերակը դրանք որևէ գործունեության ընթացքում դիտարկելն է, քանի որ լաբորատոր պայմաններում կարող են առաջանալ որոշ թյուրըմբռնումներ:

Այս կամ այն իրավիճակում վարքի, ռեակցիաների և հոգեկան դրսևորումների իրական փոփոխությունների չափումը հնարավոր է, որ հոգեբանական գնահատման լավագույն միջոցը լինի: Եթե թեստային առաջադրանքը կամ խթանիչ նյութի մեկնաբանման մեխանիզմը բավարար չափով մշակված չէ, չունի հաստատման բարձր մակարդակ, ապա փորձարկվողի մոտ կարող է նկատվել կողմնակալ մեկնաբանման, պաշտպանության կամ խուսափման մոդելների միտում:

Այժմ անդրադառնանք հոգեդիագնոստիկ յուրահատուկ ընթացակարգերի կառուցմանը, մասնավորապես՝ թեստերին, որոնք հոգեդիագնոստիկայի ստանդարտիզացված մեթոդիկաներ են և թույլ են տալիս ստանալ ուսումնասիրվող հատկությունների զարգացվածության աստիճանի որակական և քանակական համեմատելի ցուցանիշները:

Յուրաքանչյուր հետազոտող պարտավոր է պահպանել թեստերին ներկայացվող հիմնական պահանջները: Որպես ճշգրիտ հոգեդիագնոստիկ մեթոդներ՝ թեստերին ներկայացվում են մի շարք հատուկ պահանջներ: Դրանք հիմնականում չորսն են՝

---

[38] Տե՛ս ***Лухманова А.,*** Диагностика соискателя, с. 7: https://litmir.info/br/?b=88762&p=1

ա) թեստի սոցիալ-մշակութային հարմարեցվածությունն այն է՝ թեստային առաջադրանքների և գնահատականների համապատասխանությունը տվյալ հասարակությունում ձևավորված մշակույթին, որտեղ թեստը կիրառվում է, ուրիշ երկրից փոխառված լինելով,

բ) թեստային առաջադրանքների միարժեքությունը և ձևակերպումների պարզությունը. թեստի բանավոր և այլ առաջադրանքներում չպետք է լինեն այնպիսի տարբեր կետեր, որոնք մարդկանց կողմից կարող են տարբեր կերպ ընդունվել և ընկալվել,

գ) թեստային առաջադրանքների կատարման սահմանափակ ժամանակը. հոգեդիագնոստիկ թեստի առաջադրանքների կատարման համար սահմանված ժամանակը չպետք է գերազանցի 1,5 - 2 ժամը, քանի որ մարդու համար դժվար է այդքանից ավելի պահպանել իր աշխատունակությունը բավականին բարձր մակարդակի վրա,

դ) տվյալ թեստի համար թեստային չափանիշների (նորմերի) առկայությունը. այսինքն՝ մարդկանց մեծ ամբողջություն ներկայացնող միջին ցուցանիշների հետ համեմատվում են տվյալ անհատի ցուցանիշները, և գնահատվում նրա հոգեբանական զարգացվածության մակարդակը:

Հոգեդիագնոստիկ հետազոտությունների արդյունքների հավաստիությունը ճշտելու համար անհրաժեշտ է, որպեսզի կիրառվող հոգեդիագնոստիկ մեթոդները լինեն գիտականորեն հիմնավորված, այսինքն՝ համապատասխանեն մի շարք պահանջների (գաղտնիության պահպանում, գիտական հիմնավորվածություն, վնասի հասցնում, եզրակացությունների օբյեկտի-

վություն, առաջարկների արդյունավետությունն)[39]: Այստեղից հետևում է, որ հոգեբանը պետք է պահպանի հետևյալ բարոյական սկզբունքները՝

1) մարդուն չի կարելի իր կամքին հակառակ ենթարկել հետազոտության՝ բացառությամբ օրենքով սահմանված դատական և բժշկական դեպքերի,

2) թեստավորումն անցկացնելուց առաջ այցելուհին պետք է տեղեկացնել այն մասին, որ հետազոտության ընթացքում հնարավոր է, որ նա իր զգացմունքների մասին հայտնի այնպիսի տեղեկատվություն, որը իրեն ցանկալի չէ և չի գիտակցում,

3) ցանկացած մարդ, ով դատապարտված է օրենքով, իրավունք ունի իմանալու իր հետազոտության արդյունքների մասին, ինչպես նաև՝ ում կողմից և ինչպես են դրանք օգտագործվելու,

4) թեստավորման արդյունքները ներկայացվում են այցելուհին՝ իր համար հասկանալի ձևով,

5) երեխաների թեստավորման դեպքում նրա ծնողները կամ երաշխավորված անձիք իրավունք ունեն իմանալու թեստավորման արդյունքները,

6) եթե թեստավորումը կատարվում է այցելուի զարգացման մակարդակը բացահայտելու կամ աշխատակազմում ընտրելու համար, ապա այցելուն իրավունք ունի իմանալու՝ ինչի հիման վրա է վերլուծվում թեստի արդյունքները, և որ հատկանիշներն են համարվում առաջնային,

---

[39] Տե՛ս ***Головин С. Ю.,*** Словарь практического психолога - Минск: Харвест, 1997. – 800 с.; ***Сапогова Е. Е.,*** Задачи по общей психологии. - М.: Аспект-Пресс, 2001. - 447 с.:

7) թեստերի պրակտիկ կիրառման գլխավոր պատասխանատվությունը ընկած է հոգեբանի և այդ թեստերն օգտագործող կազմակերպության ներկայացուցիչների վրա[40]:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ պահանջները վերաբերում են ոչ միայն անցկացվող թեստին, այլև այդ թեստն անցկացնող հոգեբանին: Այս հարցը հատուկ նշանակություն է ստանում համացանցային թեստավորման տարածման պատճառով, որոնք դժվար է կառավարել և վերահսկել: Բրիտանական հոգեբանների միավորումը զբաղվում է ինտերնետային հոգեբանական թեստերի կանոնակարգմամբ և վերահսկմամբ[41]: Շատ հեղինակների համար առաջին երեք բաժիններից առավել կարևոր է դիագնոստիկայի տրամաբանական կողմը, քանի որ տեխնիկական և նշանային կողմերն ունեն ենթարկվող հատկություն[42]:

Ըստ չեխ գիտնական Ի. Շվանցարայի՝ հոգեդիագնոստիկայի փուլերը հետևյալն են՝

- խնդրի ձևակերպումը, որը հիմնված է անհատի մասին բոլոր մանրամասների ուսումնասիրության վրա (անամնեզ, հատուկ բժշկական եզրակացություններ, մանրամասներ ուսումնական հաստատություններում անհատի առաջադիմության մասին և այլն),
- հիպոթեզի ձևակերպում և դիագնոստիկական մեթոդների ընտրություն,

---

[40] Տե՛ս ***Сапогова Е. Е.***, Задачи по общей психологии. - М.: Аспект-Пресс, 2001. - с. 350:

[41] http://www1.bps.org.uk/ A Quick Guide to the Terminology Used on the Psychological Testing Centre (Ptc). Website. / British Psychological Society

[42] Տե՛ս ***Ануфриев А. Ф.,*** Психологический диагноз. М.: “Ось-89”, 2006. - с. 19-20:

- թեստավորում և ստացված արդյունքների վերլուծություն,
- եզրակացության ձևակերպում (օրինակ՝ հոգեկանի զարգացման մակարդակի մասին),
- հարցերի պատասխաններ, որոնք տրվել էին առաջին փուլում,
- իրադարձությունների ձևակերպում, որոնք ցանկալի են հոգեբանական եզրակացություն տալու համար[43]:

Հոգեդիագնոստիկայի մեթոդիկաները լայն կիրառում են գտել հոգեբանության մի քանի բնագավառներում, մասնավորապես՝ կրթության հոգեբանության, սպորտի հոգեբանության, կառավարման հոգեբանության, զինվորական հոգեբանության մեջ: Իսկ հոգեբանական թեստերի առաջին ռուսալեզու գիրքը հրատարակվել է սպորտի հոգեբանների կողմից[44]:

Հաջորդիվ անդրադառնանք հոգեդիագնոստիկ թեստերի կիրառական արժանիքներին, որոնք այսօր միանշանակ ունեն նպաստավոր դեր մարդու մասնագիտական գործունեության այս կամ այն ոլորտի զարգացման գործում: Հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառական արդյունքների օգտագործման ոլորտները բազմաթիվ են, և դրանց գործնական արդյունավետությունը ապացուցված է բազմաթիվ հետազոտություններում:

Ներկայացնենք հոգեդիագնոստիկ աշխատանքների կիրառական արդյունքների օգտագործման ոլորտների դասակարգման և ժամանակակից մեթոդաբանական ստորաբաժանման

---

[43] Տե՛ս ***Шванцара Й.,*** Диагностика психического развития. Прага, Авиценум, 1978 – с. 46-66.

[44] ***Марищук В. Л., Блудов Ю. М., Плахтиенко В. А. и др.,*** Методики психодиагностики в спорте / Учеб. пособие по спецкурсу для студентов пед. ин-тов - М.: Просвещение, 1984. - 191 с.

որոշ մոտեցումներ: Կ. Գուրևիչի ներկայացված դասակարգումը (Նկար 1) սահմանափակվում է չորս խմբերի տարանջատմամբ, բայց չէ՞ որ այսօր հոգեդիագնոստիկայի կիրառական շառավիղը ավելի է ընդլայնվել և ներառում է նաև մարքեթինգի, գովազդի, PR-ի, քաղտեխնոլոգիաների և այլ ոլորտներ:




**Նկար 1.** Հոգեդիագնոստիկ աշխատանքների կիրառական արդյունքների օգտագործման ոլորտները (ըստ Պ. Գուրևիչի)




**Նկար 2.** Հոգեդիագնոստիկայի կիրառման ժամանակակից մոտեցումները

Ներկայումս, դպրոցներում իրականացվող բարեփոխումներով պայմանավորված այդ խնդիրները դառնում են ավելի արդիական: ՀՀ-ում կրթական բարեփոխումների ներքո հատկապես արդիական է ներառական կրթության որակի գնահատման և արդյունավետության գիտականորեն հիմնավորված հոգեբանական ուսումնասիրման գործիքակազմի մշակումը, որը կնպաստի հասկանալ և վերահսկել կրթության հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսումնառության գործընթացը:

Առանց դիագնոստիկական գիտական մեթոդների հնարավոր չէ երեխաներին նախապատրաստել դպրոցին, և հետևաբար հնարավոր չէ օգնություն ցույց տալ այն երեխաներին, ով-

քեր դրա կարիքը ունեն: Ներկայումս, երբ ենթադրվում է, որ պարբերական կրթությունը պետք է սկսվի վեց տարեկանից, երեխայի դիագնոստիկական պատրաստվածությունը դառնում է ավելի կարևոր: Առանց դիագնոստիկական մեթոդների հնարավոր չէ հետևել ուսուցման զարգացման արդյունավետությունը, ստանալ երեխաների առաջադիմության մասին հիմնավորված տվյալներ և հետևաբար գնահատել ուսուցման տարբեր մեթոդների, ձևերի և միջոցների համեմատական առավելությունները: Այդ հարցում դրական փորձերից ճանաչվել է ԵՊՀ «Անձի և մասնագիտական գիտահետազոտական լաբորատորիայի» աշխատակիցների մշակած և հրատարակած կիրառական ձեռնարկը[45]:

Որպես կանոն, հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ է հոգեբանական հատուկ կրթություն, սակայն շատ դեպքերում այդ մեթոդները կիրառվում են մանկավարժների կողմից: Հոգեբանների և մանկավարժների համագործակցությունը շատ դեպքերում դպրոցական պրակտիկայում հոգեդիագնոստիկ խնդիրների լուծման կարևոր նախադրյալ է:

Նման կերպ են կատարվում նաև դպրոցներում մասնագիտության ընտրության կողմնորոշման հետ կապված աշխատանքները: Առանց ընդհանուր և հատուկ կարողությունների զարգացվածության մակարդակի և անձի տարբեր որակների ձևավորման աստիճանի դիագնոստիկայի՝ հնարավոր չէ երեխաներին մասնագիտության ընտրության հարցում հիմնավորված խորհուրդ տալ: Այս հիմնախնդրի ուսումնասիրության ար-

---

[45] Տե՛ս ***Բեջանյան Ա., Պապոյան Վ., Գալստյան Ա.,*** Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթ / Մեթոդական ուղեցույց, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2009, 134 էջ:

դյունքում ԵՊՀ ամբիոնի դոցենտ Ս. Հովհաննիսյանը նախապատրաստել և հրատարակել է ուսումնական ձեռնարկ, որտեղ ներկայացված են կոնկրետ մեթոդիկաների և ընթացակարգերի հակիրճ հիմնավորումները, որոնք նախատեսված են մասնագիտություն ընտրողների՝ մասնագիտական կողմնորոշման շեմին գտնվող դպրոցականների համար[46]:

Առանց դիագնոստիկական մեթոդների հնարավոր չէ երեխայի տարիքային տարբեր փուլերում որոշել նրա անհատական և ինտելեկտուալ զարգացվածության մակարդակը, ստանալ տվյալներ նրա յուրահատուկ ընդունակությունների մասին: Իսկ այս ամենը անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր երեխային ցույց տրվի համապատասխան մոտեցում[47]:

Ժամանակին կիրառական հոգեդիագնոստիկայի զարգացումը սկսվեց մարդու ընդունակությունների գնահատմանը նպատակաուղղված թեստերի կիրառումից: Այդ մոտեցումը յուրօրինակ համակարգի ստեղծման նախապայման դարձավ և կոչվեց մարդկային ռեսուրսների կառավարման միջոցներ: Օր.՝ աշխատակազմի ատեստացիայի ընթացքում շատ կազմակերպություններում հնարավոր չէ սպասել, որ թեկնածուն հարմարվի պաշտոնին, և հոգեդիագնոստիկան այս պարագայում հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու ընտրության հարցում: Անձնակազմի նպատակային գնահատման և ընտրության համար ընդհանուր պայման է տվյալ մասնագիտությանը հարմար, կարևոր և ցանկալի որակների որոշումը, հետևաբար ընտ-

---

[46] Տե՛ս ***Հովհաննիսյան Ս. Վ.,*** Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ (գործնական հոգեբանություն). Ուս. ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 332 էջ:
[47] ***Талызина Н. Ф.,*** Психодиагностика. Теория и практика, - М.: Прогресс, 1986 - с. 3.

րության չափորոշիչները պետք է ձևավորվեն ինչպես պրոֆեսիոգրամայի՝ մասնագիտական որակների նկարագրի (կամ՝ մասնագիտության գծապատկերի), այնպես էլ հոգեախտորոշիչ հուսալի ապարատի հիման վրա: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընտրությունը, լինելով երկկողմանի գործընթաց, մեկնաբանվում է և՛ «ընտրողների» (թեկնածուի գնահատական), և՛ հավակնորդների (ինքնագնահատական) կողմից: Հետևաբար մասնագիտորեն կարևոր անձնային որակների գնահատման համակարգի մշակումը պետք է նաև ենթադրի արտաքին ընկալում:

Հայ գիտնականների նվաճումները հոգեբանության այս բնագավառի հարակից բաժիններում (ինժեներական և աշխատանքի կառավարում, մենեջմենթ, մարքեթինգ և գովազդի հոգեբանություն) բավականին ծավալուն են: Ավանդույթները սկիզբ են առնում ԵՊՀ-ում «Ինժեներական հոգեբանության» ԳՀ լաբորատորիայի հիմնադրումից ի վեր (1979 թ., հիմնադիր՝ հ. գ. թ., պրոֆ. Ռ. Վ. Աղուզումցյան) և շարունակվում են առ այսօր ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոսների և գիտահետազոտական լաբորատորիաների գիտաշխատողների կողմից: Հայաստանում փորձարարական հոգեբանության գիտական հիմքերի զարգացման միտումները բնականաբար ազդում են նաև հոգեդիագնոստիկայի կարգավիճակի վրա:

| ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ |
|---|
| ⇒ 1957թ. Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան. Հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա |
| ⇒ 1979թ. Երևանի պետական համալսարան. Ինժեներական հոգեբանության ԳՀ լաբորատորիա, 2008-ից «Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիա |
| ⇒ 1983թ. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ. ԳՀ պրոբլեմային լաբորատորիայի Սպորտի հոգեբանության բաժին |
| ⇒ 2004թ. Երևանի պետական համալսարան. Փորձարարական հոգեբանության լաբորատորիա |
| ⇒ 2011թ. ԵՊՀ Անձի և սոցիալական միջավայրի լաբորատորիա |

**Նկար 3.** Հայաստանում փորձարարական հոգեբանության գիտական հիմքերի զարգացման փուլերը

## Կիրառական հոգեբանության հիմնական դրույթները



# 2. ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից հոգեբանության մեջ օգտագործվում են բազմաթիվ հոգեդիագնոստիկ մեթոդներ, սակայն դրանցից ոչ բոլորն են գիտականորեն հիմնավորված և համապատասխանում հոգեչափման պահանջներին: Բայց և այնպես դրանց մեջ կան հետազոտական և կոնկրետ հոգեդիագնոստիկ մեթոդներ: Սա վերաբերում է միայն այնպիսի մեթոդների խմբին, որոնք օգտագործվում են գնահատման նպատակով և հնարավորություն են տալիս ստանալու կոնկրետ հետազոտված հոգեբանական հատկությունների քանակական ու որակական բնութագրերը: Այն մեթոդները, որոնք չեն հետապնդում այս նպատակը, այլ նախատեսված են միայն հոգեբանական գործընթացների, հատկությունների և մարդու հոգեբանական վիճակի ուսումնասիրման համար, կոչվում են հետազոտական: Այդ մեթոդները սովորաբար օգտագործվում են էմպիրիկ և փորձարարական գիտական հետազոտություններում, որոնց հիմնական նպատակը ճշգրիտ գիտելիքներ ստանալն է:

Հոգեչափիչ մոտեցումը, որը հոգեբանության մեջ զուգորդվում է ինտելեկտի և մարդկային ընդունակությունների գնահատման (Ֆ. Հալտոն) մեթոդների ստեղծման հետ, սերտորեն կապված է նաև հոգեֆիզիկական տեսությունների հետ (է. Վեբեր, Հ. Ֆեխներ)[48]: Հոգեչափումը թույլ է տալիս ստեղծել անձի

[48] Տե՛ս ***Ярошевский М.,*** История психологии от античности до середины XX в., Учеб. пособие. - М., 1996. - 416 с.:

հոգեբանական որակների և գործունեության բնութագրիչների գնահատման անհրաժեշտ համալիր մեթոդիկա: Հոգեբանական գիտափորձում չափումը հիմնավոր տեղ է զբաղեցնում: Առանց գիտափորձի իմացության և դրա տեխնիկաների ճշգրիտ կիրառման՝ պրակտիկ հոգեբանի հիմնարար և արդյունավետ աշխատանքն անհնար է: Հետազոտության կազմակերպումը ներառում է մի կողմից՝ հոգեբանական ուսումնասիրման օբյեկտի մոդելավորումը, վարկածի ձևավորումը, փորձարարական ներազդման իրականացումը՝ օբյեկտին գիտափորձի վարկածին համապատասխանեցման նպատակով, մյուս կողմից՝ գիտափորձի պլանավորումը, ստացված տեղեկատվության մշակումը, դրա վերլուծությունը և թղթաբանական (հրապարակումների) հաշվետվության (գիտահետազոտական) ձևակերպումը[49]: Հոգեչափման տեսությունը հետազոտողներին և հոգեբաններին ապահովում է մաթեմատիկական մոդելներով, որոնք կիրառվում են առանձին առաջադրանքների պատասխանները և թեստերը վերլուծելիս: Փորձարարական հետազոտությունների համար հատուկ կարևորություն ունի կիրառական հոգեչափումը, որը զբաղվում է կոնկրետ թեստային տվյալներում մաթեմատիկական մոդելների և վերլուծական արարողակարգերի ներդրմամբ: Տարբերակում են հոգեչափական վերլուծության չորս բնագավառ.

- նորմավորում և հավասարեցում,
- հավաստիության գնահատում,
- վալիդության գնահատում,
- առաջադրանքների վերլուծություն:

---

[49] Տե՛ս ***Носс И. Н.,*** Психодиагностика. Тест, психометрия, эксперимент. -М.: Издательство «КСП», 1999. - с. 7:

Հոգեբանական գիտափորձում հոգեչափական մոտեցումն առավել խորն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հիմնվել չափագիտություն և կենսաչափում հասկացությունների ու դրանց մեկնաբանության վրա[50]:

Թեստերի դասակարգման տարբեր մոտեցումներ ներկայացված են բազմաթիվ դասագրքերում, հոգեբանական հանրագիտարաններում և ուսումնական ձեռնարկներում[51]: Նախ նշենք, որ նորմավորումն ու հավասարեցումը թեստերը ստորաբաժանում էր անհատական առանձնահատկությունների և խմբային երևույթների ուսումնասիրման համար:

Ըստ օգտագործվող թեստերի առաջադրանքի՝ հոգեդիագնոստիկ մեթոդները լինում են հարցաթերթիկներ (այստեղ օգտագործվում են հարցեր, որոնք ուղղված են փորձարկվողներին), պահանջ ներկայացնող (այստեղ օգտագործում են որոշակի քննարկումներ կամ պնդումներ, իսկ փորձարկվողը պետք է տա իր համաձայնությունը կամ մերժի), արդյունավետ (այստեղ կիրառվում են փորձարկվողի ստեղծագործական հնարավորությունները, որոնք կարող են լինել բանավոր, նյութական, պատկերավոր, ինքնաբերաբար առաջացող կամ փորձարկվողի սեփական ցուցումների միջոցով վերարտադրված), գործողություն կատարող (փորձարկվողը ստանում է հանձնարարություն՝ կատարել մի շարք պրակտիկ աշխատանքներ, որի շնորհիվ դա-

---

[50] Տե՛ս ***Ավանեսյան Հ. Մ.***, Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում: Ուսումնամեթոդական ուղեցույց, Եր., 2015, 50 էջ:

[51] ***Бодалев А. А., Столин В. В.,*** Общая психодиагностика, - СПб.: “Речь”, 2000. – с. 13-19.; ***Преображенская Н. А.,*** Психологические тесты. Самая полная энциклопедия / Екатеринбург: У-Фактория; М.: Астрель, 2011. – 608 с.; ***Райгородский Д. Я.,*** Практическая психодиагностика. Методики и тесты: [учеб. пособ.]. - Самара: «БАХРАХ – М», 2001. – 672 с.

տում են նրա հոգեկան վիճակի մասին), ֆիզիոլոգիական (այս դեպքում հոգեդիագնոստիկան հիմնվում է մարդու օրգանիզմի ֆիզիկական և ֆիզիոլոգիական ռեակցիաների վերլուծության վրա): Օրինակ՝ մարդու հոգեկան աշխարհի ուսումնասիրության համար կարելի է օգտագործել ուղիղ և փոխաբերական իմաստ ունեցող հարցերին նրա տրված պատասխանները, այս կամ այն քննարկումներին նրա համաձայնությունը կամ անհամաձայնությունը, նրա գործողությունները, բանավոր, գրավոր, երևակայական, տեխնիկական և այլ գործունեության արդյունքները, տարբեր խթանիչների նկատմամբ նրա ցուցաբերած հակազդումը և այլն: Այս նպատակին կարող են ծառայել նաև էլեկտրաէնցեֆալոգրաման, էլեկտրակարդիոգրաման, էլեկտրամիոգրաման, մաշկ-գալվանական հակազդումները և այլ ռեֆլեքսներ:

Ըստ փորձարկվողին ներկայացվող թեստերի ձևի՝ հոգեդիագնոստիկ մեթոդները բաժանվում են.

ա) բլանկների (ձևաթերթեր, որոնք թեստի նյութեր են գրավոր կամ այլ տեսքով, օր.՝ նկարներ, սխեմաներ և այլն),

բ) տեխնիկական մեթոդների (փորձարկվողին թեսթերի նյութերը ներկայացվում են աուդիո, վիդեո կամ ֆիլմերի տեսքով, օգտագործվում են նաև այլ տեխնիկական սարքեր, մեքենաներ),

գ) սենսորային մեթոդներ (նյութը ներկայացվում է ֆիզիկական խթանիչի տեսքով, որն ուղղված է զգայարաններին):

Ըստ տվյալների բնույթի, որոնք օգտագործվում են հոգեդիագնոստիկ եզրակացություն տալու համար, մեթոդները լինում են օբյեկտիվ, որոնցում օգտագործվում են փորձարկողի կամ փորձարկվողի գիտակցությունից անկախ ցուցանիշներ: Իսկ սուբյեկտիվ մեթոդներն օգտագործում են տվյալներ, որոնք

կախված են փորձարկողի կամ փորձարկվողի գիտակցությունից և ցանկություններից. դրանք վերաբերում են նրանց ներքին փորձին: Օբյեկտիվ մեթոդիկայի օրինակ կարող են ծառայել այնպիսի թեստեր, որոնք ներառում են փորձարկվողի ֆիզիոլոգիական, ռեֆլեքսիվ ցուցանիշների կամ գործունեության պրակտիկ արդյունքների վերլուծությունը: Այդ թեստերի օգտագործման ժամանակ սուբյեկտիվությունը հավասարվում է նվազագույնի: Մյուս կողմից՝ սուբյեկտիվ տիպի դասական օրինակ են հանդիսանում այն թեստերը, որոնք հիմնվում են ինտրոսպեկցիայի և եզրակացությունների վրա, որը կախված է փորձարկվողի ինտուիցիայից և ներքին փորձից:

Հոգեդիագնոստիկ մեթոդները դասակարգվում են նաև ըստ առաջադրվող նյութերի ստացման՝ գիտակցված, որն ուղղված է փորձարկվողի գիտակցությանը, և անգիտակցական, որն ուղղված է մարդու չգիտակցված ռեակցիաներին: Առաջին մեթոդի օրինակ կարող են լինել հարցարանները, իսկ երկրորդի օրինակ՝ պրոյեկտիվ մեթոդները:

Ըստ թեստերի չափանիշների առկայության՝ հոգեդիագնոստիկ մեթոդները բաժանվում են երկու խմբի.

ա) մեթոդներ, որոնք ունեն նման չափանիշներ,

բ) մեթոդներ, որոնք չեն առաջնորդվում նման չափանիշներով:

Իսկ ըստ ներքին կառուցվածքի՝ հոգեդիագնոստիկ մեթոդները լինում են միաչափ և բազմաչափ: Առաջինին բնութագրական է այն, որ այստեղ ախտորոշում կամ գնահատում են միայն մեկ հատկանիշը կամ որակը, իսկ երկրորդի դեպքում՝ միանգամից մի քանի տարբեր հատկանիշներ: Վերջինիս պարագայում հոգեդիագնոստիկ մեթոդները, որպես կանոն, բաժանվում են մի

քանի մեթոդիկաների: Միաչափ մեթոդիկայի օրինակ է Զ. Սպիլ-բերգի հայտնի թեստը, որը գնահատում է մարդու տագնապայ-նությունը (նշենք այս եզրույթի՝ որոշ գրքերում օգտագործված սխալ թարգմանված տարբերակը՝ «տագնապախռովություն»), իսկ բազմաչափ մեթոդիկայի օրինակ է Կետտելի անձնային հարցարանը[52]:

Որպեսզի ցանկացած գիտափորձի կամ փորձարարական հետազոտության արդյունքները լինեն բավարար չափով հուսալի և հնարավորություն տան արձանագրելու ճշգրիտ ցուցանիշներ, որոնց կարելի է վստահել, անհրաժեշտ է՝ այդտեղ օգտագործ-ված հոգեդիագնոստիկ մեթոդները կազմված լինեն գիտական հիմքերով: Այդպիսին են համարվում այն թեստերը, որոնք բա-վարարում են հետևյալ հիմնական պահանջները՝ վալիդություն, հուսալիություն, ճշգրտություն, միանշանակություն: Այս պա-հանջների պարտադիր մաս են թեստերի սոցիալ-մշակույթային տեղայնացումը և կիրառման որոշ սահմանափակումները (տա-րիքային, սոցիալական, հոգեկան առողջության, անհատական-խմբային և այլն):

Անդրադառնանք նշված պահանջներից յուրաքանչյուրին, որոնք մանրամասն նկարագրված ու պարզաբանված են բազ-մաթիվ հրապարակումներում, դրանք են՝ Ա.Անաստազիի, Ռ. Նեմովի, Լ. Բուրլաչուկ, Հ. Ավանեսյանի, Ռ. Ստեփանյանի, Ա. Գալստյանի, Ս. Առզումանյանի և այլոց ուսումնական ձեռնարկ-ները: Անգլիալեզու գրականության մեջ հանդիպում են եզրութա-բանական այլ պահանջներ (*standardization, objectivity, test*

---

[52] Տե՛ս ***Немов Р. С.,*** Психология: Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. -М.: Гуманит. изд. центр “Владос”, 2000. - с. 36-39:

*norms, reliability, validity*), որոնք իմաստային չափանիշներով էապես չեն տարբերվում ռուսականից:

Վալիդությունը (*validity*) չափագրական լայն հասկացություն է և նշանակում է «լիարժեքություն», «պիտանելիություն» կամ «համապատասխանություն»: Տարբերակում են վալիդության մի քանի տեսակներ: Հոգեչափման թեստերի վալիդություն ասելով հասկանում ենք այդ մեթոդների համապատասխանությունը և պիտանելիությունը այն հոգեբանական որակի գնահատմանը, որի համար նախատեսված է: Տարբերակում են այս չափանիշի չորս տեսակներ՝ ներքին, արտաքին, տեսական և գործնական վալիդություն:

Տեսական վալիդությունը որոշվում է հետազոտվող հատկանիշի ցուցանիշներով, որոնք ստացվել են այս մեթոդիկայով և դրանց համապատասխանությամբ, և այն ցուցանիշներով, որոնք ստացվել են այլ մեթոդիկաների արդյունքում: Խոսքը այնպիսի մեթոդիկաների մասին է, որոնց ցուցանիշների միջև պետք է առկա լինի տեսականորեն հիմնավորված կախվածություն: Էմպիրիկ վալիդությունը ստուգվում է փորձարկվողի իրական վարքի, հետազոտվողի գործողությունների և ռեակցիայի ախտորոշման ցուցանիշների համապատասխանությամբ: Օրինակ՝ եթե ինչ-որ մեթոդիկայի օգնությամբ մենք գնահատում ենք փորձարկվողի բնավորության գծերը, ապա այդ մեթոդիկան համարվում է գործնական կամ էմպիրիկ վալիդ այն դեպքում, եթե մենք հաստատենք, որ տվյալ մարդը իրականում իրեն պահում է այնպես, ինչպես ցույց են տալիս մեթոդիկայի արդյունքները: Ներքին վալիդություն ասելով՝ հասկանում ենք մեթոդիկայում առկա առաջադրանքների, վճիռների և այլնի ընդհանուր նպատակ ունենալու համապատասխանությունը: Մեթոդիկան ներք-

նապես համարվում է ոչ վալիդ, եթե այնտեղ տեղ գտած հարցե-րը կամ հարցերի մի մասը, առաջադրանքները չեն չափում այն, ինչ պահանջում է այդ մեթոդիկան: Արտաքին վալիդությունը գրեթե նույնն է, ինչ էմպիրիկը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում խոսքը մեթոդիկայի այն ցուցանիշների և առավել կարևոր արտաքին նշանների կապի մասին է, որոնք կապված են փորձարկվողի վարքի հետ:

Հուսալիությունը (*Reliability*) բնութագրում է տվյալ մեթոդի-կայի օգնությամբ կայուն ցուցանիշների ստացման հնարավորու-թյունը: Ընդունված է, որ թեստերի միջոցով ստացվող արդյունք-ները պայմանավորված են դժվար կառավարելի մի շարք գոր-ծոններով՝ չափող գործիքի որակով, փորձարկողի վարքով, փորձարկվողի ներկայիս հոգեբանական վիճակով և այլն: Հոգե-դիագնոստիկ հետազոտության ժամանակ այս գործոններից որ-ևէ մեկի փոփոխությունը հանգեցնում է հուսալիության չափման նվազման: Այս բոլոր գործոնները մշտապես հաստատուն պահե-լը գործնականորեն անհնար է, այդ պատճառով հնարավոր չէ հույսը դնել բոլոր հոգեդիագնոստիկ մեթոդների բարձր հուսա-լիության վրա: Հոգեդիագնոստիկ մեթոդների հուսալիությունը կարելի է ստանալ երկու ճանապարհով՝

- անցկացնել միևնույն մեթոդիկան տարբեր մարդկանց հետ և կատարել արդյունքների համեմատություն,
- անցկացնել միևնույն մեթոդիկան նույն պայմաններում և կատարել արդյունքների համեմատություն:

Հոգեբանական թեստի ճշգրտությունը արտացոլում է նրա այն ներուժը, որը թույլ է տալիս արձագանքելու հոգեդիագնոս-տիկ գնահատման ընթացքում առաջացող չնչին փոփոխություն-ներին: Թեստերի չափագրական ճշգրտությունը որոշ առումով

կարելի է համեմատել տեխնիկական գրանցող գործիքների հավաստիության հետ: Որքան ճշգրիտ է հոգեդիագնոստիկ մեթոդիկան, այնքան ավելի ճիշտ կարելի է գնահատել չափվող հատկության աստիճանավորումը: Սակայն գործնական հոգեդիագնոստիկայում միշտ չէ, որ գնահատման համար պահանջվում է ճշգրտության շատ բարձր աստիճան: Դրա անհրաժեշտ գործնական չափումը որոշվում է տարբերակման առաջադրանքով կամ փորձարկվողներին խմբերի բաժանելով: Օրինակ՝ եթե գիտափորձի ժամանակ անհրաժեշտ է փորձարկվողներին բաժանել ընդամենը երկու խմբի, ապա օգտագործվող մեթոդիկայի ճշգրտությունը պետք է համապատասխանի հենց այդ բաժանմանը և ոչ ավելիին:

Թեստային մեթոդիկան անցնում է ստանդարտացում (*standardization*), որի արդյունքում ստացված տվյալները պետք է համապատասխանեն նորմալ բաշխման օրենքին: Մեթոդիկայի միանշանակ լինելը բնութագրվում է նրանով, թե ստացված տվյալները որքանով են արտացոլում հենց այն հատկության փոփոխությունները, որի համար մեթոդիկան մշակված է: Եթե ստացված արդյունքները այս հատկության հետ արտացոլվում են նաև այլ հատկություններ, որոնք կապված չեն այս մեթոդիկայի հետ, այսինքն՝ վալիդության սահմանից դուրս են, ապա համարվում է, որ մեթոդիկան չի համապատասխանում միանշանակության չափորոշիչին (չնայած այն որոշ չափով կարելի համարել վալիդ): Օրինակ՝ եթե փորձարկողին հետաքրքրում են մարդու վարքի դրդապատճառների գնահատականները, ապա դրանք ստանալու համար նա փորձարկվողին տալիս է ուղիղ հարցեր նրա վարքի դրդապատճառի վերաբերյալ, բայց այդ հարցերի պատասխանները դժվար թե համապատասխանեն

միանշանակության չափորոշիչին: Քանի որ շատ հնարավոր է, որ այստեղ արտացոլվի փորձարկվողի գիտակցությունը՝ պայմանավորված իր վարքի դրդապատճառով, ինչպես նաև նրա ցանկությունը՝ դրական տպավորություն թողնել փորձարկողի աչքում և այլն:

Բացի օգտագործվող մեթոդներից՝ հոգեդիագնոստիկայի արդյունքների վրա ազդում են իրավիճակները, փորձարկվողի կողմից այդ ամենի ընկալումը, ինչպես նաև թեստավորման ժամանակ փորձարկվողի անձը և վարքը[53]:

Նախքան պրակտիկ հոգեդիագնոստիկայում այս կամ այլ մեթոդ կիրառելը փորձարկողը պետք է համոզվի, որ դրանք համապատասխանում են հոգեդիագնոստիկ մեթոդներին ներկայացվող բոլոր պահանջներին:




**Նկար 4.** Հոգեդիագնոստիկայի բնութագրման հիմնական մակարդակները

[53] Տե՛ս ***Немов Р. С.,*** Психология: Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. - М.: Гуманит. изд. центр “Владос”, 2000. - с. 42-46:

Ընդհանուր հոգեդիագնոստիկան տարբերվում է այն յուրահատուկ դիագնոստիկ առաջադրանքներից, որոնք ի հայտ են գալիս հոգեդիագնոստիկայի տարբեր մասնավոր ոլորտներում: Ինչպես նշվում է, այսօր հոգեբանության մեջ գոյություն ունեն տասնյակ հազարից ավելի հոգեդիագնոստիկ մեթոդիկաներ, որոնք օգտագործվում են պրակտիկայում: Դա նշանակում է, որ հոգեդիագնոստիկ մեթոդները ունեն շատ լայն կիրառության դաշտ: Ինչպես գիտենք, հոգեդիագնոստիկան սերտ կապված է փորձարարական, բժշկական, տարիքային, սոցիալական և հոգեբանության այլ բնագավառների հետ: Երևույթները, հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք ուսումնասիրում են հոգեբանության առանձին ոլորտները, չափվում են հոգեդիագնոստիկ մեթոդների հարուստ զինանոցի օգնությամբ: Ընդ որում՝ փորձարարական հոգեբանության մեջ լայնորեն կիրառվում են հոգեֆիզիոլոգիական դիագնոստիկայի մեթոդները, որոնց՝ թեստերի հետ համադրության օրինակները դիտարկվում են այս աշխատանքում: Հոգեդիագնոստիկայի մեթոդները հնարավորություն են տալիս առաջին հերթին չափել անձի կամ խմբի այս կամ այն հոգեկան առանձնահատկությունները, այլև ոչ թե միայն նկարագրել դրանք: Հոգեդիագնոստիկ չափման արդյունքները կարող են օգտագործվել որպես հոգեբանական տարբեր երևույթների տեսական բնութագրման ճշմարտացիության ստուգման ձև:

Ժամանակակից հոգեդիագնոստիկան համակարգում է ոչ միայն հոգեբանության, այլև հարակից գիտությունների (կենսաչափում, սոցիոչափում, վիճակագրություն) հետազոտական ձեռքբերումները: Դրա հետ մեկտեղ՝ հատուկ ուշադրություն է դարձվում այն գիտական մոտեցումներին, որոնք բարելավում են

դիագնոստիկ տվյալների արձանագրումը: Դիագնոստիկայի մեջ այդպիսին է համարվում ֆենոմենոլոգիական մոտեցումը, որն օգտագործում է ոչ թե բացատրող, այլ հասկացող հոգեբանության սկզբունքները: Այս մասին Ս. Լ. Սոլովյովը գրում է, որ միևնույն անհանգստության տակ կարող են քողարկված լինել ինչպես հոգեբանորեն հասկանալի ֆենոմենը՝ նշանը, այնպես էլ հոգեպաթոլոգիկ նախանշանը: Այս տեսակետի համաձայն՝ գոյություն չունի պաթոլոգիական միանշանակ հոգեկան անհանգստություն: Դրանցից ամեն մեկը կարող է համարվել և՛ նորմալ, և՛ ոչ նորմալ: Քանի որ մենք երբեք ի վիճակի չենք անմիջականորեն ընկալել այլ մարդկանց հոգեկանը այնպես, ինչպես ֆիզիկականն ենք ընկալում, այստեղ, ըստ Կ. Յասպերի, խոսքը կարող է լինել միայն պատկերացման, զգայության, հասկացման, դրանց ներքին վիճակների և պայմանների մասին, որոնց շնորհիվ առաջանում է զգայական համեմատություն և սիմվոլավորում: Հենց այս պատճառով էր, որ Յասպերը մեծ նշանակություն էր տալիս հիվանդների ինքնանկարագրությանը, որտեղ պետք էր պատասխան տալ ամեն մի անհանգստության, հոգեբանական ֆենոմենի համար՝ չսահմանափակվելով ընդհանուր տպավորություններով և հատուկ ընտրված տարրերով[54]:

Այս հարցերում կարևոր դեր են խաղում գիտական հանդեսները, ժողովածուները և ուսումնական ձեռնարկները, որոնք ներկայացնում են այս կամ այն տեսական մոտեցումները և հոգեբանական թեստերի անցկացման հիմնական պահանջները:

---

[54] Այդ մասին տե՛ս http://www.mprj.ru/archiv_global/2014_3_26/nomer/nomer01.php ***Соловьева С. Л.,*** Критерии нормы в клинической психологии /Журнал «Медицинская психология в России», 326, 2014

Թեստերին, դրանց դասակարգմանը, խնդիրներին և բազմաթիվ այլ հարցերին ներկայացվող պահանջների մասին նյութեր միշտ հրապարակվում են Ամերիկյան հոգեբանների ասոցիացիայի (ԱՀԱ) պաշտոնական կայքում[55]: Մեծ Բրիտանիայում հոգեբանական շտեմարաններում նկարագրվում են թեստերի տեսակները, հետազոտական ու գործնական նպատակները, պահանջները և կիրառման բարոյագիտական նորմերը[56]: Նմանատիպ մասնագիտական նյութեր զետեղված են նույնիսկ հնդկական կայքերում, որոնցում խիստ պահանջներ են դրված տպագիր կամ էլեկտրոնային (համացանցում) տարբերակով թեստերի օգտագործմանը և հասցեագրված են թեստեր օգտագործող հոգեբաններին[57]:

Հոգեդիագնոստիկ մեթոդները բավականին լայն տարածում և կիրառում են գտնում, դրանց արդյունքների հիման վրա տրվում է հոգեբանական ախտորոշում: Թեստերի օգտագործումը խորհրդատվության նպատակով հետզհետե ընդլայնվեց՝ ուսումնական մասնագիտական խնդիրների նեղ ուղղվածության խնդիրներից մինչև մարդու կյանքի մանրազնին հետազոտություն: Հուզական վիճակը և միջանձնային հարաբերություններն ավելի ու ավելի դարձան խորհրդատվության օբյեկտներ:

---

[55] http://www.apa.org American Educational Research Association; American Psychological Association. (2010); http://www.apa.org/ethics/code/index.aspx Ethical Principles of Psychologists and Code of Conduct

[56] Psychological Assessment Catalogue, Pearson Assessment, 80 Strand, London WC2R 0RL. UK 2010 /http://www.pearsonclinical.co.uk/Sitedownloads/Catalogues/2010Psychologicalassessmentcatalogue.pdf

[57] National library of educational & psychological test (nlept). Catalogue of tests / Department of Educational Psychology and Foundations of Education National Council of Educational Research and Training Sri Aurobindo Marg, New Delhi, 2016 / http://www.ncert.nic.in/announcements/pdf files/NLEPT_Catalogue.pdf

Վերլուծելով տեսական աշխատանքները, հիմնվելով տարբեր հեղինակների հայեցակարգերի վրա՝ կարող ենք եզրակացնել, որ հոգեդիագնոստիկան հոգեբանի մասնագիտական գործունեության բավականին բարդ բնագավառ է և պահանջում է բազմակողմանի տեսական գիտելիքներ ու հատուկ ուսուցում: Բոլոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների զուգակցումը, որին պետք է տիրապետի հոգեբան-դիագնոստը, այնքան լայն է ու բարդ, որ պրոֆեսիոնալ հոգեբանի աշխատանքի մեջ հոգեդիագնոստիկան դիտվում է որպես յուրահատուկ մասնագիտացում: Առանց հոգեդիագնոստիկայի ոչ մի հոգեբան - մասնագետ չի կարող աշխատել, եթե, իհարկե, նա գործ չունի միայն տեսության հետ: Ներկայումս պրակտիկայում օգտագործվում են բազմաթիվ հոգեդիագնոստիկ մեթոդներ: Իր աշխատանքում հոգեբանը պետք է խստորեն պահպանի հոգեդիագնոստիկ մեթոդներին ներկայացվող բոլոր պահանջները:

Արդեն նշվել էր, որ դիագնոստիկայում առանձնացնում են միմյանց փոխկապված չորս բաժիններ՝ տեխնիկական, տրամաբանական, նշանային և դեոնթոլոգիական: Ա. Անուֆրիևը գրում է, որ դիագնոստիկայի փուլերին անդրադարձել են շատ հեղինակներ, և նրանցից յուրաքանչյուրը առաջադրել է իր տեսակետը[58]: Բժշկական դիագնոստիկայի գրականության մեջ կան տարբեր հեղինակների կողմից տրված դիագնոստիկական գործընթացների, փուլերի մի քանի սխեմաներ: Ռ. Ա. Լուրիան հիվանդության դիագնոստիկայի գործընթացի մեջ առանձնացնում է երկու հիմնական փուլեր՝ վերլուծական և սինթետիկ, Գ. Ա. Ռեյբերգը առանձնացնում է մտածողության գործընթացների

[58] Տե՛ս ***Ануфриев А. Ф.,*** Психологический диагноз. М.: “Ось-89”, 2006. - 192 с.

երեք փուլեր՝ ընդհանուր կողմնորոշում կամ հիվանդների տեսա-կավորում, տարբերակում և վերլուծության ինտեգրում, համակ-ցություն: Դիագնոստիկայի փուլերին անդրադարձել է նաև Ա. Ս. Պավլովը: Նա առանձնացրել է դիագնոստիկայի հինգ հիմնա-կան փուլեր՝ 1) հիվանդի ուսումնասիրություն, 2) ստացված փաս-տերի վերլուծություն և հիվանդի «սինթետիկ» պատկերի կառու-ցում, 3) դիագնոստիկայի օգտագործումը հիվանդի հետաքրք-րությունների մեջ և դրա ճշմարտացիության ստուգումը, 4) հի-վանդության կանխագուշակում: Հոգեդիագնոստիկ մեթոդները բավականին լայն տարածում են գտել կիրառական համակար-գում, որտեղ դրանց արդյունքների հիման վրա կատարվում է հոգեբանական ախտորոշում:

Այսպիսով, ամփոփելով աշխատանքի այս բաժինը, նշենք նաև հոգեդիագնոստիկայի կիրառական նշանակությունը: Հոգե-դիագնոստիկ մեթոդները լայնորեն կիրառվում են կրթության, աշխատանքային գործունեության բնագավառում, բանակում: Ըստ թեստերի նյութերի ստացման՝ հոգեդիագնոստիկ մեթոդնե-րը լինում են գիտակցված և չգիտակցված, ըստ տվյալների բնույթի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, ըստ փորձարկվողին թեստերի նյութերի ներկայացման ձևի՝ տեխնիկական, սենսորային մե-թոդներ, բլանկներ: Թեսթերի արդյունքների հիման վրա որոշ-վում են այս կամ այն մասնագիտության մեջ մարդու պիտանե-լիությունը, նրա ապագան: Թեստերի լայն օգտագործումը հաս-կանալի է, քանի որ հենց հանձին դրա հոգեբանները գտան այն գործիքը, որը հնարավորություն տվեց նրանց ներթափանցել մարդու հոգեկան աշխարհի յուրահատուկ կողմերը, չափել մար-դու հնարավորությունների աստիճանը, կանխատեսել նրա վար-քը:

Հոգեբանական թեստավորումն անպայման պետք է ունենա երկու հիմնական ելք. առաջինը պետք է լուծի զարգացման խնդիրները և հանգեցնի դիագնոստիկ գործիքների հասրտացմանը, իսկ երկրորդը պրակտիկ հոգեբանի կողմից թեստերի անցկացման միջոցով տրամադրի հավաստի տեղեկատվություն անձի և խմբի վերաբերյալ: Որպես օրինակ դիտարկենք մեթոդիկաների ընտրության փորձը և հոգեդիագնոստիկ թեստերի համադրումը այլ մեթոդների հետ:

Երկար տարիների ընթացքում մարզիկների հետ անցկացրած փորձարարական հետազոտություններում և գործնական աշխատանքներում կիրառվել են հետևյալ հոգեդիագնոստիկ մեթոդիկաների խումբը.

- Չ. Սփիլբերգերի (“ШЛиРТ”) ռեակտիվ/իրավիճակային և անձնային տագնապայնության սանդղակ,
- Այզենկի (“EPI”) էքստրա-ինտրովերտության և նեյրոտիզմի-հուզական կայունության թեստ,
- «ԲԳԽ» (“ЧХТ”) անամնեստիկ հարցարան, որն ուսումնասիրում է բնավորության գծերն ու խառնվածքը (Բ. Ա. Վյատկին),
- «ԻԱՏ» (“САН”) ինքնագնահատականի սանդղակ՝ ինքնազգացողություն, ակտիվություն, տրամադրություն և դրա կրճատ տարբերակ,
- «ՍԳՄ» (“МСД”) սպորտային գործունեության մոտիվացիայի ուսումնասիրության մեթոդիկա (Ե. Ա.Կալինին),
- «ՀՀՀ» (“ВПН”) Վ. Է. Միլմանի «Հոգեկան հուսալիության հարցաթերթ»,
- Պրոյեկտիվ՝ Լյուշերի 8 գունային թեստ,
- Պրոյեկտիվ՝ Վարտեգի մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակ:

Նշենք մարդու նյարդային համակարգի վեգետատիվ ցուցիչների փոփոխության գնահատմանը վերաբերող կապված՝ հոգեկան լարվածության ախտորոշման հոգեբանական թեստերի ու որոշ հոգեբանաֆիզիոլոգիական մեթոդների համադրության համար անհրաժեշտ պայմանները: Դրանց թվին են պատկանում էլեկտրամաշկային դիմադրության գրանցումը (ԷԴԳ - ЭКС), լուսային թարթումների ձուլման կրիտիկական հաճախականության գրանցումը (ԼԹԿՀ - КЧСМ) և սրտի զարկերի հաճախականության գրանցումը (ՍԶՀ - ЧСС), էլեկտրասրտագրություն (ԷՍԳ - ЭКГ), կվազիստացիոնար ներուժի գրանցում (ԿՍՆ - КСП), թեփինգ թեստը (ԹԹ - ТТ):

Հետագայում մեթոդիկաների այս հաստատված խումբը կիրառվել է նաև «Հոգեբանական ծառայությունների» գործնական աշխատանքներում, Սպիտակի երկրաշարժից տուժածների հետ, հետպատերազմական տարիներին՝ փախստականների ու տարբեր կարգի բնակչության հետ[59]:

Թեստերը հայերեն թարգմանելը և տեղայնացնելը համապատասխանեցվում են հոգեդիագնոստիկայում ընդունված բոլոր չափանիշներին: Այդ գործընթացը իրականացնելուց հետո

---

[59] Տե՛ս ***Аванесян Г. М.,*** О методах комплексного контроля и совершенствования процесса подготовки высококвалифицированных спортсменов / Методические рекомендации: Методы комплексного контроля и совершенствования процесса подготовки высококвалифицированных спортсменов, СМУиС Арм.ГИФК, Ереван, 1988. - с. 2-4.; ***Ավանեսյան Հ. Մ.,*** Սպորտի հոգեբանության կիրառական տեսակետները / Գիտամեթոդական աշխ. ժողովածու, ՖԿՀՊԻ, Եր., 1989, 54 էջ: ***Травин Ю. Г., Аванесян Г. М., Карапетян Г. Р.,*** Влияние экологической катастрофы на физическое развитие и психофизиологический статус детей 6-8 лет / В журнале "Физиология человека АНСССР", Т. 16, ном. 3, 1990. - с. 163-164.; ***Avanesyan H. M.,*** Rehabilitation by sports practice on pathology post-earthquake // VII Congress international de Psychologie du sport, Montpellier, France, 1990. pp. 24-26:

հնարավոր է դառնում լիարժեք կազմակերպել հետագա հետազոտական աշխատանքները: Այսպես, ԵՊՀ հոգեբանության ամբիոնի լաբորատորիաների աշխատակիցների հետ համատեղ մշակվեց համակարգչային ախտորոշման հոգեդիագնոստիկ համալիր[60]: Հետազոտվողների մասնագիտության տեսանկյունից կարևոր անձնային որակները պարզելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները. Ռ. Ամտհաուերի ինտելեկտի կառուցվածքի թեստը (TSI), «CPI» թեստը (հանդուրժողականության, պատասխանատվության, ապրումակցման, ինքնաընդունման), Ա. Ն. Օրյոլի շեղվող վարքի հակվածության թեստը, «Կամային ինքնավերահսկման ախտորոշում» հարցարանը (մշակում՝ Ա. Գ. Ձվերկովի և հ/հ), Հ. Այզենկի «Հոգեկան վիճակների ինքնագնահատման ախտորոշում» թեստը, Բասսա-Պերրիի հարցարանը (BPAQ), Ա. Ա. Ռեանայի հարցարանը (МУН), սթրեսի բացահայտման Դեյթոյի մեթոդիկան: Վերջինս, հեղինակի հատուկ համաձայնությամբ սթրեսի հետազոտման թեստը տեղայնացվել է հայերեն տարբերակով բազմափուլ գիտափորձի միջոցով[61]:

---

[60] ***Ավանեսյան Հ. Մ.***, Մասնագիտական պիտանելիության հոգեբանական չափանիշների համադրության վերլուծությունը // Հոգեկան առողջության հայկական հանդես, 3 (1), 2012, էջ 13-17: ***Ավանեսյան Հ., Ասրիյան Է., Գալստյան Ա., Սարգսյան Դ.,*** Սթրեսի հետազոտման թեստի հայերեն տարբերակի տեղայնացման գիտափորձ // «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 132.4, Եր. 2010, էջ 72-79: ***Ավանեսյան Հ. Մ.,*** Հոգեդիագնոստիկ չափորոշիչների կիրառումը մասնագիտական պիտանելիության գնահատման գործընթացում // «Փորձարարական հետազոտությունները հոգեբանությունում» գիտական հոդվածների ժողովածու, «Էդիթ Պրինտ», Եր., 2012, էջ 11-17:

[61] ***Ավանեսյան Հ., Ասրիյան Է. Վ., Գալստյան Ա., Սարգսյան Դ.,*** Սթրեսի հետազոտման թեստի հայերեն տարբերակի տեղայնացման գիտափորձ /«Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2010. 4, Եր., էջ 72-79:

Անցկացված հետազոտության արդյունքների հիման վրա մեր կողմից մշակվել է արտակարգ պայմաններում աշխատող անձնակազմի գնահատման և ընտրության մեկ ընդհանուր հոգեբանական համակարգ: Ի սկզբանե մեր առջև դրված էր խնդիր՝ համադրել տարբեր բլոկների տվյալները (իրազեկվածություն, ինտելեկտ, անձնային որակներ) և բացահայտել դրանց առաջնայնությունը, այնուհետև՝ անհրաժեշտ էր հաշվարկել չափորոշիչների սահմանները կոնկրետ սեռատարիքային խմբի համար: Տարբեր փոխլրացնող մեթոդիկաների օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված էր այն բանով, որ դրանցից ոչ մեկը չի տալիս սպառիչ տեղեկություն, որի հիման վրա կարելի էր ճիշտ որոշում կայացնել թեկնածուի բնութագրի վերաբերյալ:

Թեստավորման բոլոր փուլերի արդյունքների վերլուծությունից կազմվեց անհատական որակների համադրության մատրիցա, որը հնարավորություն է տալիս գնահատելու բացասական միտումների գերակշռումն այնպիսի հատկանիշների համեմատ, ինչպիսիք են՝ տագնապայնությունը, ագրեսիան, ադիկցիան, ստելու հակումը, պատասխանատվությունը, ինքնաընդունումը և ներքին կոնֆլիկտը, ինքնատիրապետումը և համառությունը, անհաջողության վախը, հաջողության մոտիվացիան, անձի ուղղվածությունը և մի շարք այլ որակներ:

Հեղինակային խմբի հետազոտության նպատակներն էին տարբեր հոգեդիագնոստիկ մեթոդիկաներում ադիկտիվ վարքի հակվածության ցուցիչների փոխկապվածության բացահայտումը, ինչպես նաև դրա հիման վրա ադիկտիվ վարքի հակվածության համապիտանի ունիվերսալ համակարգված գնահատման մշակումը: Հետազոտմանը մասնակցել է 16-20 տարեկան 150

պատանի՝ կամավորության սկզբունքով[62]: Ադիկտիվ վարքի զարգացման հակումն ախտորոշելու համար կիրառվել է «շեղ-վող վարքի հակվածության գնահատում» թեստը (Ա. Ն. Օրյոլ), իսկ ագրեսիվության ու թշնամանքի մակարդակը բացահայտելու համար օգտագործվել է Բասս-Պերրիի BPAQ հարցարանը, կամային ինքնավերահսկման մակարդակը բացահայտելու համար կիրառվել է «Կամային վերահսկման ախտորոշում» թեստը (հարցարան ВСК՝ մշակված Ա. Գ. Զվերկովի ու Ե. Վ. Էյդմանի կողմից), տագնապայնության մակարդակի գնահատման համար կիրառվել է Գ. Այզենկի «Հոգեվիճակների ինքնագնահատման ախտորոշում» թեստը՝ հանդուրժողականության, պատասխանատվության, ապրումակցման, ինքնընդունման մակարդակը բացահայտելու համար օգտագործվել է «CPI» թեստը (Կալիֆորնիական հոգեբանական հարցարան՝ տեղայնացված Ն.Վ. Տարաբրինայի և Ն.Ա. Գրաֆինինայի):

Տվյալ հետազոտության արդյունքներից պարզվել է, որ կախյալ (ադիկտիվ) վարքը բազմագործոն երևույթ է և որոշվում է անձի հոգեբանական առանձնահատկություններով. մասնավորապես՝ ադիկտիվ վարքի վրա ազդում են այնպիսի անձնային որակների շեղումներ, ինչպիսիք են՝ ագրեսիվության բարձր մակարդակը, տագնապայնությունը, զայրույթը և վերահսկողության ու ինքնակառավարման ցածր մակարդակը: Այդ իսկ պատճառով կախյալ վարքի հակվածությունն ախտորոշելու համար նպատակահարմար է հաշվի առնել ոչ միայն արդեն ձևավորված

---

[62] Տե՛ս ***Аванесян Г. М., Степанян Л. С.,*** Апробация методики исследования предрасположенности к аддиктивному поведению по интегральным показателям // Материалы международной научной конференции "Современные проблемы теоретической и прикладной психологии", - Ереван, ЕГУ, 2011, - с. 389-391:

հակումները, այլ նաև դրանց զարգացման նախադրյալները: Տվյալ հետազոտության արդյունքների հիման վրա՝ կարելի է պնդել, որ մշակված մեթոդիկան, որը բացահայտում է ադիկցիայի կառուցվածքը, կօգնի հոգեբաններին ու հոգեդիագնոստներին բացահայտել, գնահատել ադիկցիայի հակվածության տվյալ վարքը զարգացման արդեն վաղ շրջաններում: Եզրափակելով նշենք, որ ադիկցիայի հակվածության գնահատման ինտեգրված տվյալ համակարգը կարող է օգտագործվել մասնագիտական պիտանիության նպատակներով՝ հատուկ պայմաններում աշխատելու համար:

Հետազոտական ծրագրերը կազմելիս շատ կարևոր է հիմնվել ոչ միայն ընդհանուր գիտական և հատուկ հոգեբանական սկզբունքների, այլ նաև ստեղծագործական մոտեցման վրա: Այդպիսին կարող է լինել Է. Վ. Ասրիյանի ատենախոսության մեթոդների ընտրության օրինակը[63]: Հոգեբանության մեջ իմիջի խնդիրը ուսումնասիրված է բավականին թերի: Մասնավորապես չկա մեկ միասնական տեսություն, որը թույլ կտար պատասխանել այն հարցին, թե ինչպիսի հոգեբանական մեխանիզմներ և գործոններ են պայմանավորում արդյունավետ քաղաքական իմիջի ձևավորումը:

Ատենախոսության նպատակից ելնելով, որը նվիրված էր միֆի այն հոգեբանական առանձնահատկությունների ու գործառույթների ուսումնասիրությանը, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել միֆը իբրև քաղաքական լիդերի իմիջի ձևավորման գործոն, ընտրվել է մեթոդների համապատասխան և

---

[63] ***Ասրիյան Է. Վ.*** Միֆը՝ որպես քաղաքական լիդերի իմիջի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործոն, ԺԹ.00.03 ծածկագրով հոգ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2008, 20 էջ:

բավականին յուրօրինակ փաթեթ: Հետազոտական համալիրը ներառում էր զուգորդությունների (մասնավորապես՝ խթանող զուգորդությունների), փորձագիտական հարցման, հարցարանային և կոնտենտ-վերլուծության մեթոդները:

Հատուկ ուշադրության է արժանի հատկապես հետազոտության այն հատվածը, որն իրագործվել է ազատ զուգորդությունների և կոնտենտ վերլուծության մեթոդների կիրառմամբ, որոնք հանգուցային դեր են խաղացել ատենախոսության նպատակների իրականացման գործում: Բառ-ազդակով զուգորդության մեթոդի միջոցով ստացված տվյալների իսկայական ծավալը ենթարկվեց կոնտենտ-վերլուծության: Մեթոդի հրահանգող հարցը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Ի՞նչ է անձամբ Ձեզ համար նշանակում «հերոս», «հակահերոս» և «թշնամի» հասկացությունները»: Այնուհետև գրանցվում էին պատասխան զուգորդությունները: Հարցմանը մասնակցել էր 120 մարդ: Խմբերի ձևավորման չափանիշը քաղաքական ընտրություններում մասնակցության հարցն էր՝ 1-4 անգամ, 5-10 անգամ, 10 և ավելի: Պատասխանները ենթարկվեցին կոնտենտ-վերլուծության, ընդ որում չափանիշների սանդղակը ի սկզբանե տրված չէր, այլ ձևավորվեց իմաստային կառույցների բացահայտմանը զուգահեռ: Փորձագիտական հարցման խնդիրն էր քաղաքական ոլորտում առկա փորձագետների կարծիքների և պատկերացումների բացահայտումը «կատարյալ քաղաքական գործիչ» հասկացության վերաբերյալ: Հարցվել են 40 փորձագետներ (Ազգային ժողովի պատգամավորներ, սոցիոլոգներ, քաղաքագետներ, քաղաքական հոգեբաններ):

Հետազոտության փուլերից մեկում կոնտենտ-վերլուծության են ենթարկվել 151 քաղաքական գովազդային հոլովակներ՝ 2003

թ. պառլամենտական ընտրություններից և 165 հոլովակ՝ 2007 թ. ընտրարշավից: Նախ դուրս են բերվել գովազդային միավորները, այնուհետև բացահայտվել և հաշվարկվել են դրանցում տեղ գտած առասպելական կերպարներն ու տարրերը, որոնք և դարձել են հաշվարկման իմաստային միավորներ:

Իրականացվել էր իմիջի երևույթի համակարգային վերլուծություն, ինչը թույլ է տալիս իմիջը սահմանել իբրև սոցիալ-հոգեբանական իրողություն, որը արտահայտվում է որպես կերպար, կարծրատիպ, խորհրդանիշ, միֆ, ինչպես նաև ներկայացված են իմիջի ուսումնասիրության մի շարք հոգեբանական մոտեցումներ: Իրականացվել է իմիջի մեկնաբանման փորձ միֆի սյուժետային մոդելի վերլուծության դիտանկյունից: Էմպիրիկ հետազոտության հիման վրա, որում կիրառվել էր մեթոդների հատուկ համադրություն, բացահայտվել են քաղաքական լիդերի իմիջը ձևավորող և դրա արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական օրինաչափություններն ու գործոնները:

Անդրադառնալով հետազոտական մեթոդիկաների տեղայնացման գործընթացին՝ կարելի է նշել Ա. Նադոյանի իրականացրած ատենախոսական աշխատանքի փորձարարական բաժինը[64]: Տարեց մարդկանց հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով հեղինակը բազմաթիվ այլ հոգեդիագնոստիկ մեթոդիկաների հետ միասին իրականացրել է Ա. Մ. Պրիգոժինի «Անձի ինքնագնահատականը որոշող» հատուկ վերամշակված թեստը: Հետազոտական ընտրանքի յու-

[64] ***Նադոյան Ա. Ա.***, Տարեց հասակում անձի ինքնագնահատականի ուսումնասիրումը // «Հոգեբանական հետազոտությունների արդիականացման հիմնախնդիրները» երիտասարդ հոգեբանների գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., 2008, էջ 42-46:

րահատկությունը հաշվի առնելով՝ բացի թեստային նյութից հետազոտվողներին ներկայացվել է «անձի ինքնագնահատականի» մեխանիկական գնահատման տարբերակը (վերամշակման է ենթարկվել սանդղակի գործիքային կառուցակարգը), որն իրենից ներկայացնում է բնօրինակի բովանդակությանը և յոթ սանդղակների երկարությանը համապատասխանող գույնզգույն և հեշտ շարժվող գնդիկներ: Դրանց օգնությամբ տարեց մարդիկ կկարողանային հեշտությամբ կատարել առաջադրված հրահանգը, իսկ հետազոտողը՝ գրանցել արդյունքներն արձանագրության համապատասխան աղյուսակում: Այս օրինակի վրա մենք տեսնում ենք, որ հարցադրումներին պատասխանելու տարբերակը հնարավոր է ձևափոխել՝ հավելելով շարժողական (կինեսթետիկ) «արձագանքը», ինչն իր հերթին ևս համապատասխանում է պրոյեկցիայի սկզբունքներին:

Մեկ այլ ատենախոսական աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվել Ռոզենցվեյգի մեթոդիկայի մանկական տարբերակի գրանցված ցուցանիշների, այլ մեթոդիկաների արդյունքների և անհատական հարցազրույցների բովանդակության հետ համեմատությանը[65]:

Տվյալ խնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունն այն է, որ Ռոզենցվեյգի նկարչական թեստի հայերեն թարգմանությունը նախատեսված է միայն մեծահասակների համար, բայց նույնիսկ այդ դեպքում հաշվի չեն առնված թեստային նյութի

[65] Տե՛ս ***Ավանեսյան Հ., Միրզոյան Ա.,*** Դեռահասի ֆրուստրացիայի թեստավորման մեթոդիկայի յուրահատկությունը // «Հասարակություն, ընտանիք, դեռահաս» միջազգային գիտագործնական համաժողովի հոդվածների ժողովածու, Եր., 2012, էջ 60-65:

սանդղակների ու նորմատիվային հարաչափերի գնահատումը[66]: Այդ փաստն ընդգծում է մեր հետազոտության գիտակիրառական կարևորությունը և այն, որ դրա նախնական արդյունքները հայերեն հրատարակվել են ավելի վաղ: Մեր հետազոտության նպատակը դարձավ երեխաների հետ հոգեբանների ու մանկավարժների աշխատանքում Ռոզենցվեյգի պրոյեկտիվ թեստի դիագնոստիկ հնարավորությունների և դրա կիրառական նշանակության բացահայտումը: Բոլոր հարաչափերի համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ խմբի մեծամասնության մոտ գերակայում է էքստրապունիտիվ (գերդրական) հակազդումը խթանիչ նյութին: Մյուս երեխաների մոտ առավել արտահայտված էին ինտրապունիտիվ (ներդրական) և իմպունիտիվ ռեակցիաները (տրավմատիկ իրավիճակներից խուսափում) նկարներում պատկերված իրավիճակներին: Արդյունքների համեմատության ժամանակ բացահայտվել է տարբերակիչ առանձնահատկություն, որը կարող է պայմանավորված լինել մեր ընտրանքի առանձնահատկությամբ: Այսպիսով, էգո պաշտպանողական կարգի հակազդումները ավելի շատ էին, քան հաղթահարման կամ կարիքների բավարարման ֆիքսացիաների հակազդումները: Բոլոր հարաչափերի վերլուծությունից բացահայտվեց կապ զրույցի տվյալների հետ, որը անց էր կացվել երկու-երեք անգամ պարբերաբար թեստավորման ընթացքում: Մեթոդիկայի կիրառման փորձը ցույց տվեց, որ մեր կազմած հայերեն տեքստերը, որտեղ պատկերված են մեծահասակներն ու երեխաները, մտերիմները հուզածին, սթրեսային ու ֆրուստրացիա առաջացնող տարբեր իրավիճակներում, ընկալվում էին բավականին հա-

[66] Տե՛ս ***Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ.***, Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր.: «Զանգակ-97», 2002, 392 էջ:

մարժեք: Դա փաստում է այն, որ նկարները սոցիալ-մշակութային հարմարեցման կարիք չունեին:

Այդ համատեղ հետազոտության տվյալների վերլուծությունը հերթական անգամ հաստատեց Ռոզենցվեյգի պրոյեկտիվ մեթոդիկայի մանկական տարբերակի առավելությունները և դրա արդյունավետ կիրառելիությունը պրակտիկ հոգեբանի աշխատանքում: Տվյալ մեթոդիկայի և այլ պրոյեկտիվ թեստերի ինչպես գործնական, այնպես էլ հետազոտական նպատակներով օգտագործումը բավականին նպատակահարմար է, քանի որ հոգեդիագնոստիկ նյութի միջոցով հնարավոր է արագ տեղեկատվություն ստանալ ագրեսիվության ու ֆրուստրացիայի դրսևորման մասին:

Ասպիրանտ Սիլվա Բեզիրջյանի ատենախոսական աշխատանքում էթնիկ հայերի ազգային նույնականացման բազմակողմանի ուսումնասիրության և համեմատական վերլուծության նպատակով, ստանդարտիզացված թեստերից բացի, կիրառվել էր «Անավարտ նախադասությունների» (Marcia’s Ego Identity Incomplete Sentences Blank – EI-ISB) մեթոդիկան[67]: Թեստավորման արդյունքում յուրաքանչյուր պատասխան գնահատվել է երեք հիմնական չափանիշով՝ ճգնաժամ (փնտրտուք և ընտրություն), համոզմունքների և արժեքային համակարգի առկայություն: Այս չափանիշների համադրությամբ ամեն մի նախադասություն ստանում է համապատասխան միավոր, և պատասխանողը դասվում է նույնականացման չորս կարգավիճակներից

[67] Տե՛ս ***Բեզիրջյան Ս. Խ.,*** Անձի ազգային նույնականացման փոխակերպման առանձնահատկությունները միջազգայնորեն չճանաչված պետականության պայմաններում (Լեռնային Ղարաբաղի օրինակով), ԺԹ.00.01. ծածկագրով հոգ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2011:

որևէ մեկին: Կայացած նույնականացման դեպքում-ընտրությունն առկա է, փնտրտուքն առկա է, մորաթորիումի դեպքում՝ ընտրությունը բացակայում է, փնտրտուքն առկա է, վաղաժամի դեպքում՝ ընտրությունն առկա է, փնտրտուքը՝ ոչ, դիֆուզ նույնականացման դեպքում՝ և՛ ընտրությունը, և՛ փնտրտուքը բացակայում են:

Դիտարկենք մեկ այլ օրինակ, որի գործընթացում ախտորոշումը անցկացվել է սուբյեկտիվ վերահսկման (ըստ Ե. Ֆ. Բաժինի և համահեղինակների) մակարդակում: Առաջին անգամ այն հայերեն է թարգմանվել 2009 թվականին: Նշենք, որ այս թեստը ստուգվել է հաստատման և տեղայնացման չափանիշներով (ճշգրիտ թարգմանության վավերացում):

Համակարգային մոտեցմանը հետևելով՝ սուբյեկտիվ վերահսկման մակարդակի ստուգման մեթոդիկան համալրվել է անձի ինքնագնահատականի սանդղակով և կյանքից բավարարության աստիճանի թեստով: Թեստավորվողների ցուցանիշների առաջխաղացումը բացահայտելու նպատակով պրոյեկտիվ մեթոդի հիման վրա մշակվել է բլանկ՝ պարբերաբար լրացման համար: Մեծահասակների հետ կատարված հետազոտությունը ցույց է տվել ընտրված մեթոդիկաների տեղեկատվության աստիճանը: Դիտման, զրույցի և թեստավորման արդյունքների ընդհանրացումը թույլ է տալիս եզրակացնել, որ մեծահասակների հետաքրքրությունների աստիճանը հետզհետե փոքրանում է, առաջանում է սեփական անձի վրա կենտրոնանալու հակվածություն: Այս տարիքային խմբին բնորոշ հոգեբանական ֆենոմեններից առավել ընդգծված են՝ տագնապայնությունը, անվստահության ձևավորումը, դերային անորոշությունը, անլիարժեքության զգացման սրացումը, եսակենտրոն ռեակցիաների ձևավո-

րումը: Նշված հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս դրանք դիտարկել, որպես տվյալ տարիքային խմբի հոգեդինամիկ չափանիշներ[68]:

Հոգեբանական թեստերի հանդեպ գիտական հետաքրքրությունը մարդու գործունեության տարբեր բնագավառներում եղել է մշտական ու շարունակական տարիներ[69]: Այդ հետազոտությունները նվիրված էին աշխատակազմի ընտրության և համալրման արդի հոգեբանական հիմնախնդիրներին, կառավարչական ընդունակությունների գնահատման թեստային համալիր փորձարկմանը, հատուկ խմբի (քրեակատարողական ծառայությունում) հետ տարվող հոգեբանական և սոցիալական աշխատանքների գործընթացում թեստերի կիրառմանը, ոստիկաննե-

---

[68] ***Նադոյան Ա.***, Տարեցների սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի գենդերային առանձնահատկությունները. Սեղմ. ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանության», Եր., 2010, 21 էջ:

[69] ***Ավանեսյան Հ. Մ.***, Աշխատակազմի ընտրության և համալրման արդի հոգեբանական հիմնախնդիրները // Հանրային կառավարում գիտական հանդես, N 2, Եր.: «Պետական ծառայություն» հրատ., 2005, էջ 90-98: ***Степанян С. Г., Аванесян А. Г.*** Апробация модифицированного психодиагностического комплекса оценки управленческих способностей // «Вестник МАНЭБ», Том 12, № 4, 2007, СПб., - с. 152-156.; ***Ավանեսյան Հ. Մ., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Բեջանյան Ա. Տ., Ղազարյան Գ. Հ., Հովակիմյան Գ. Ռ.,*** Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: Առողջության և կրթության հայկական կենտրոն, Եր., 2009, 151 էջ: ***Ավանեսյան Հ. Մ., Նազարյան Ն. Մ.,*** Ոստիկանների կոմունիկատիվ ոլորտի առանձնահատկությունների թեստավորման վերլուծություն // ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 414-417: ***Ավանեսյան Հ. Մ., Հեյդարի Մ. Հ.,*** NEO PI թեստի հայերեն տարբերակի փորձարկման համեմատական վերլուծություն // ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 410-413:

րի հաղորդակցական ոլորտի առանձնահատկությունների թեստավորմանը և այլն:

Մեկ այլ բազմափուլ հետազոտական աշխատանքի նպատակն էր թեկնածուի մասնագիտական պիտանելիության հոգեբանական չափորոշիչների գնահատման համակարգի ալգորիթմի մշակումը: Անձնակազմի ընտրության գործընթացում ամենալայն կիրառում գտած մեթոդներից մեկը թեստավորումն է, որի միջոցով կարելի է բացահայտել բնավորության անհրաժեշտ գծերը և մարդու պոտենցիալ հնարավորությունները: Այս հարցը, հատկապես արդիական է այն մասնագիտությունների պարագայում, որտեղ հատուկ պահանջներ են ներկայացնում մասնագետի հոգեկանին, այդ թվում՝ կառավարչական պաշտոնական կարգավիճակին: Ակնհայտ է, որ գիտականորեն հիմնավորված և հուսալի ընտրությունից են կախված բազմաթիվ գործոններ, որոնք պայմանավորում են մասնագիտական գործունեության հետագա արդյունավետությունը հասարակական կարևոր ոլորտներում: Մեր դեպքում նոր աշխատակիցների ընտրությունների փաստը ենթադրում է նախ թեկնածուների ներգրավում, այնուհետև՝ հարցաթերթերի լրացման և թեստավորման ընթացակարգի հստակ հրահանգավորում (նաև լրացուցիչ հրահանգավորումներ՝ մշակված համակարգչային տարբերակով՝ թեստային առաջադրանքներին պատասխանելու համար): Ճիշտ ընտրված աշխատակազմը ցանկացած նմանատիպ կազմակերպության համախմբված աշխատանքի գրավականն է: Այսպիսով, որակյալ մասնագետների ընտրության համար, ովքեր աշխատում են արտակարգ և լարված պայմաններում, մեր կողմից մշակվել է թեստավորման համակարգ՝ ուղղված մասնագիտական հոգեբանական «դիմանկարի» ստեղծմանը: Թեստերի հա-

մալիրի կառուցվածքը մի կողմից պայմանավորված է մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջներով, մյուս կողմից՝ անձի հոգեբանական կառուցվածքով: 166 հետազոտվողների մասնագիտության տեսանկյունից կարևոր անձնային որակները պարզելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝ Ռ. Ամտհաուերի ինտելեկտի կառուցվածքի թեստը (TSI), «CPI» թեստը (հանդուրժողականության, պատասխանատվության, ապրումակցման, ինքնաընդունման), Ա. Ն. Օրյոլի շեղվող վարքի հակվածության թեստը, «Կամային ինքնավերահսկման ախտորոշում» հարցարանը (մշակում՝ Ա. Գ. Զվերկովի և համահեղինակներ), Հ. Այզենկի «Հոգեկան վիճակների ինքնագնահատման ախտորոշում» թեստը, Բասս-Պերիի հարցարանը (BPAQ), Ա. Ա. Ռեանի հարցարանը (МУН)[70]:

Նմանատիպ միտում նկատվել է հարցարանի նկարագրության ժամանակ: Օրինակ, Բաս-Դարկի թեստը ներկայացնելիս նշվում է, որ անհրաժեշտ է զուգահեռաբար օգտվել այլ մեթոդիկաներից՝ հոգեկան վիճակների անձնային թեստերից (Կետտելի և Սպիլբերգի թեստից), պրոյեկտիվ մեթոդիկաներից (Լյուշեր) և այլն[71]:

Այսպիսով, ելնելով վերը նշվածից, ինչպես նաև հաշվի առնելով հայի ազգային ու մշակութային առանձնահատկությունները, կազմվեց մասնագիտական կարևոր որակների գնահատման միասնական համակարգ: Համակարգչային մոդելի մշակման գործընթացում օգտագործվել են համապատասխան բանաձևեր,

[70] Տե՛ս ***Avanesyan H. M.*** Strategy to develop the psychological criteria for staff selection./Journal Wisdom, no 1(1), 2013, p. 164-167:

[71] Տե՛ս ***Рогов Е. И.*** Настольная книга практического психолога: Учеб. пособие: В 2 кн. 2-е изд., перераб. и доп. - М.: Гума-нит. изд. центр ВЛАДОС, 1999. Кн. 1: Система работы психолога с детьми разного возраста, 1999. - с. 246:

միջոցներ, որոնք հուսալի՝ վալիդ կերպով գնահատում են բոլոր որակները: Մեր կողմից առաջարկվող մոդելը ներառում է նաև կազմակերպչական կանոններ և գործելակարգ, որոնք կարգավորում են կադրային գնահատման կիրառումը և կադրերին վերաբերող որոշումների կայացումը:



*Հոգեդիագնոստիկան բացահայտելով ուրվագծերը գնահատում է հատկանիշները*

## 3. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Պրոյեկտիվ թեստերի ծագումն ու վաղ զարգացումը սերտորեն կապված են հոգեվերլուծական մոտեցման առաջացման դեպքերի հետ: Ընդունված է համարել, որ Ֆրեյդի՝ երազների մեկնաբանման մեթոդաբանությունը տվյալ ոլորտում գերակշռող գաղափարների ամենակարևոր և միակ աղբյուրն է: Այս մոտեցմամբ մեկնաբանման ելակետ են համարվում նաև Յունգի հետազոտությունները, որոնք նույնպես մեծապես ազդել են պրոյեկտիվ թեստավորման զարգացման վրա: Ռորշախի թեստը՝ բոլոր պրոյեկտիվ թեստերից ամենահայտնին, մշակվել է Յունգի աշակերտի կողմից, ով, անկասկած, գտնվում էր հոգեվերլուծության տեսության ու պրակտիկայի ազդեցության տակ: «Պրոյեկտիվ մեթոդիկա» եզրույթը սկսել է զուգորդվել հետևյալ գործիքների հետ, նախ և առաջ՝ շնորհիվ Հ. Ա. Մյուրրեի և Լ. Կ. Ֆրանկի աշխատությունների՝ 1930-ականներին: Այնուամենայնիվ, պրոյեկտավորման հայեցակարգի և այս գործիքների կապը հստակ է (Lindzey, 1961): Իսկապես, կարելի է ասել, որ «պրոյեկցիան» իմաստով այսօր այս եզրույթը սովորաբար օգտագործվում է հոգեվերլուծության մեջ, հազվադեպ է ուղղակիորեն մասնակցում պրոյեկցիոն տեխնիկայում պատասխանների մեկնաբանման ժամանակ:

Ինչպես նշված է սոցիալական գիտությունների միջազգային հանրագիտարանում, հաշվի առնելով պրոյեկտիվ մեթոդների բնույթի ու ծագման մասին առկա ընդհանուր դատողությունները՝ դրանք կարող են օգտակար լինել կոնկրետ գործիքներ ընտրելիս: Այս թեստերի դասակարգման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ (Lindzey, 1959), բայց առավել ար-

դյունավետ է սուբյեկտի մոտ առաջացած արձագանքի բնույթի վրա կենտրոնանալը: Ըստ այդմ պրոյեկտիվ մեթոդները լայն իմաստով կարող են խմբավորվել հետևյալ բաժինների՝ ա) զուգորդումներ, բ) կառուցում, գ) ավարտ, դ) ընտրություն կամ դասավորում, ե) արտահայտություններ[72]:

Հեղինակները պնդում են, որ այն պրոյեկտիվ մեթոդների կարգավիճակը, որոնք դեռևս լայն կիրառություն ունեն կլինիկական ու դատաբժշկական հետազոտություններում, գիտականության առումով դեռևս խիստ վիճելի են: Գրականության ներկայիս վիճակի հանգամանալից ուսումնասիրությունը երեք հայտնի թեստերի վերաբերյալ՝ անցկացված հոգեչափական հարաչափերով (Ռորշախ, ԹԱԹ ու մարդու պատկեր), մեթավերլուծությունը ցույց տվեց, որ առկա է ոչ մեծ քանակի ինդեքսների վալիդության էմպիրիկ հաստատում: Այդ երեք մեթոդների առանձնահատկությունն այն է, որ դրանց վերլուծական գործիքը հիմնականում կերտրոնացած է զրոյական կարգի գործողության վրա, այսինքն՝ տվյալ գործիքների կորելյացիան արտաքին ցուցիչների հետ է: Առաջին հերթին նման իրողությունը պրոյեկտիվ մեթոդների կլինիկական օգտակարության նախապայման է: Երկրորդը՝ զրոյական կարգի վալիդության բացակայությունը վիճելի է դարձնում քննարկման ենթակա հավելյալ քայլերը և բնորոշում է չափվող հատկանիշի բացակայությունը: Ըստ տեսական վերլուծության՝ կազմվել են առաջարկություններ՝ պրոյեկ-

[72] International Encyclopedia of the Social Sciences COPYRIGHT 2008 Thomson Gale http://www.encyclopedia.com/social-sciences/applied-and-social-sciences-magazines/projective-methods

տիվ թեստերի դատահոգեբանական փորձաքննության և կլինիկական կիրառելիության մասին[73]:

Պրոյեկտիվ թեստերը հիմնականում դասակարգվում են ըստ հինգ կարևոր սկզբունքների՝ զուգորդական, արտահայտչական, խաղային, նկարչական կամ պատկերավոր: Սակայն այդ դասակարգումը որոշ չափով սահմանափակում է պրոյեկտիվ տեխնիկաների ամբողջ հատկանիշների լիարժեք մեկնաբանությունը և տարանջատումը: Ուստի հոգեդիագնոստիկայի այս խմբի մեթոդներին կանդրադառնանք հետազոտության առանձին բաժնում:

Լ. Է. Էբոթը, վերլուծելով նախորդ դարի հայեցակարգային միտումները պրոյեկտիվ հոգեբանության մեջ, գրում է, որ դիտարկելով հարաբերականորեն ոչ մեծ քանակով հայեցակարգային միտումներ, որոնք այսօր ավելի շատ համարվում են էքսպլիցիդ և ոչ թե իմպլիցիդ, հեշտ է հասկանալ, որ առավել մեծ ջանքեր են գործադրվել պրոյեկտիվ թեստերի մշակման և օգտագործման, քան պրոյեկտիվ մեթոդիկաների անհրաժեշտ տեսական հիմք ստեղծելու համար[74]:

Շատ հեղինակներ մատնանշել են, որ պրոյեկտիվ մեթոդիկա կիրառելիս հոգեբանը պետք է հաշվի առնի բոլոր մանրուքները (անցկացման և մեկնաբանման հրահանգները, տեսական նախադրյալները, անցկացման առանձնահատկությունները, փորձարկվողի ռեակցիան և այլն):

---

[73] Տե՛ս ***Scott O. Lilienfeld, James M. Wood and Howard N. Garb,*** The Scientific Status of Projective Techniques / Source: Psychological Science in the Public Interest, Vol. 1, No. 2 (Nov., 2000), pp. 27-66:

[74] Տե՛ս ***Беллак Л., Эбт Л.,*** Проективная психология / Пер. с англ. - 2-е изд., сокр., испр. - М.: Психотерапия, 2010. - 416 с.:

Անդրադառնանք այդ պրոյեկտիվ թեստերի խմբերի հակիրճ նկարագրությանը: Այսպիսով, առաջին հերթին առանձնանում է զուգորդական մեթոդը, որը ենթադրում է թանաքային բծերի մեթոդիկան (K. Zivert, 1998): Ըստ կլինիկական ու հետազոտական կիրառման հաճախականության մինչ այսօր առավել հայտնին Ռորշախի մեթոդն է (H. Rorschach, 1921), որը բաղկացած է տասը համաչափ թանաքային բծերից: Կառուցման մեթոդները պահանջում են, որպեսզի անձը դուրս գա խթանիչ նյութի հասարակ միավորման սահմաններից ու ստեղծի կամ տա ավելի բարդ արդյունք: Սովորաբար դա կարող է լինել ինչպես պատմություն, այնպես էլ՝ պատկեր (Շնեյդերմանի թեստը):

Հաջորդ խումբը կապում են թեմատիկ ապերցեպտիվ թեստի (ԹԱԹ) հետ (H. Murray, 1943[75]): ԹԱԹ-ը քարտեր է, աղավաղված տեսարանների անգույն նկարներ, ինչպես նաև այդ թեմայի վերաբերյալ հրահանգներ, որպեսզի կազմվի յուրաքանչյուր նկարին համապատասխանեցված պատմություն, նկարագրվի, թե ինչ են մտածում ու զգում են մարդիկ, և թե ինչն է հանգեցրել նման պատկերի ստեղծմանը, ու ինչ արդյունք կունենա: Խավար նկարների թեստ (Blum, 1949), որը ներկայացնում է ԹԱԹ-ի նույն սկզբունքը: Այս թեստի նպատակը որոշակի հոգեվերլուծական փոփոխականների (զգայականություն էրոտիզմ, Էդիպյան բարդույթ, ինտենսիվություն, կրտում և այլն) ուսումնասիրություններ է:

---

[75] ***Murray, H. A.*** (1943). Analysis of the personality of Adolph Hitler. Cornell Law Library Retrieved 4/28, 2005, from http://www.lawschool.cornell.edu/library/donovan/hitler/

Հաջորդ խումբը անավարտ մեթոդիկաներն են՝ ըստ Ռոզենցվեյգի ֆրուստրացիոն հակազդումների թեստի, որը հիմնված է նկարի օգտագործման վրա, որտեղ պատկերված են կերպարներ, որոնք միմյանց հետ զրույց են վարում, և որտեղ անհրաժեշտ է լրացնել կողմերից մեկի պատասխանը:

Ընտրության կամ դասակարգման մեթոդների խումբը ներկայացնում է Սոնդի թեստը (Դիմանկարների ընտրության մեթոդ): Պատկերների տառադարձման թեստը (*Tomkins Test*) դասակարգման առավել վերջին օրինակն է, որը պարունակում է մարդկանց պատկերներով կոմպոզիցիաներ: Այս մեթոդիկան կազմված է 25 քարտերից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երեք գծային պատկերներից, որոնք ներկայացնում են միևնույն պատկերը, սակայն տարբեր փոխկապված գործողություններ կատարելիս:

Էքսպրեսիվ կամ արտահայտչական մեթոդները կառուցման մեթոդներից տարբերվում են նրանով, որ ուշադրությունն առավելապես կենտրոնացնում են պատկերի ձևի ու ոճի վրա: Դրանք հաճախ դիտարկվում են թե՛ որպես թերապևտիկ, թե՛ որպես դիագնոստիկ մեթոդներ, քանի որ անձը, ինչպես ենթադրվում է, հեշտացնում է իր խնդիրները դրանք բացահայտելու ժամանակ:

Խաղային թերապևտիկ մեթոդները ամենահայտնիներն են թեստավորման արտահայտման գործիքների առումով: Ստեղծվելով խաղային թերապիայում՝ այդ մեթոդները հարմարեցվել են անձի, մասնավորապես երեխաների վերլուծության ու չափման համար: Եվ վերջինը, նկարչական կամ պատկերային պրոյեկտիվ մեթոդներն են, որոնք նույնպես մշտապես օգտագործվել են հոգեբանների կողմից անձի գնահատման ժամանակ: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է գլխավորապես մարդու՝

պատկերը նկարելու գործընթացի վրա, որոնցից ամենաճանաչ-վածը համարվում են Բաքի ու Մակովերի թեստերը: Ս. Ռեյնոլդ-սը և Ռ. Կամփիուդսը՝ որպես երեխաների հետ աշխատանքնե-րում հոգեբանական մեթոդաբանական հիմնավորման և թես-տավորման ձևերի գիտակներ, առաջարկում են դրանք կիրառել նաև խորհրդատվական ու կրթական նպատակներով[76]:

Այժմ այդ թեստերը նկարագրենք ավելի հանգամանորեն: Պրոյեկտիվ մեթոդիկաների շարքում ամենատարածվածներից է Թեմատիկ ապերցեպտիվ թեստը (TAT - ԹԱԹ), որը ստեղծել է Հենրի Մյուրեն: Թեստն ընդգրկում է 31 սև-սպիտակ քարտ, որոնցից մեկը դատարկ է: Առանձնացվում են տղամարդկանց և կանանց համար նախատեսված քարտերի տարբերակներ, որոշ մասն էլ՝ դեռահասների հետ անցկացման համար են: Թեստը բացահայտում է իմպուլսիվության, հուզականության, կոնֆ-լիկտների ցուցանիշներ՝ պայմանավորված անձի կողմից ար-տամղված անգիտակցական կամ անընդունելի միտումներով: Թեստային նպատակի քողարկվածությունը դրդում է հետազոտ-վողին՝ ասելու այն, ինչը չէր բարձրաձայնի ուղիղ հարցի դեպ-քում: Դրա շնորհիվ հետազոտվողն անգամ չի էլ կասկածում, որ փորձարկողը հնարավորություն է ունեցել բացահայտելու իր խն-դիրները[77]:

---

[76] ***Reynolds Cecil R. & Kamphaus Randy W.,*** Handbook of Psychological and Educational Assessment of Children. Second Edition, Personality, Behavior and Context, 2003. - 539 p.

[77] Տե՛ս ***Леонтьев Д. А.,*** Тематический апперцептивный тест. 2-е изд., - М.: Смысл, 2000. - 254 с.; ***Соколова Е. Т.,*** Психологическое исследование личности: проективные методики. - М., ТЕИС, 2002. – 150 с.; ***Мюррей Генри А.,*** Thematic Apperception Test. Руководство. / Copyright 1943 by the President and Fellows of Harvard College. (перевод на русский МПИ). / http://psylab.info/Тематический апперцептивный тест.

Թեմատիկ ապերցեպտիվ թեստում յուրաքանչյուր քարտի անցկացման համար նախատեսված ժամանակը մոտավորապես հինգ րոպե է, կատարվում է երկու օր անընդմեջ՝ առանց լրացուցիչ միջամտությունների: Թեստավորման նախապատրաստական փուլում իրականացվում է տեղեկատվության հավաքագրում հետազոտվողի անձի, ընտանիքի, աշխատավայրի մասին, նաև այլ մեթոդիկաների այնպիսի տվյալներ, որոնք պետք է նպաստեն ընդհանուր դրական մթնոլորտի ձևավորմանը և չազդեն հետազոտության նկատմամբ հետազոտվողի վերաբերմունքի վրա: Թեստի հրահանգի էությունն այն է, որ հետազոտվողը պետք է յուրաքանչյուր քարտի համար հորինի պատմություն, պատմի, թե ինչ է տեղի ունեցել նկարում, ինչ է կատարվել, որ ստեղծվել է նման իրավիճակ, ինչ է կատարվում տվյալ պահին, ինչ են մտածում պատկերված դեմքերը, և ինչ կլինի հետո: Ընդ որում, հետազոտվողին հայտնում են, որ թեստի միջոցով ստուգելու են նրա երևակայությունը: Թեստն ունի հրահանգի երկու տարբերակ, որոնց կիրառումը կախված է այն բանից, թե ինչպես է տրամադրված հետազոտվողը թեստավորման գործընթացին. փորձու՞մ է հսկել այն կամ ունի՞ որոշակի լարվածություն:

Քարտերի մեջ հետազոտվողի պատմությունները պետք է գրանցվեն ամբողջությամբ՝ նշելով ժամանակահատվածը, ընդհատումները: Առաջին օրն անցկացվում են տասը քարտերը, հաջորդ օրը աշխատանքը շարունակվում է՝ թարմացնելով համապատասխան հրահանգը:

Դատարկ քարտի համար հրահանգն այնպիսին է, որ փորձարկվողը պետք է պատկերացնի, որ ինչ-որ բան է այնտեղ պատկերված և նկարագրի այդ ամենը մանրամասնորեն: Թես-

տավորման ավարտից հետո կարող է անցկացվել զրույց՝ պատմությունների սկզբնաղբյուրները պարզելու նպատակով: Հետազոտվողը կարող է դրանք կապել ֆիլմերի, գրքերի հերոսների, այլ մարդկանց խնդիրների հետ. իհարկե այստեղ կարևոր է, որ նա հասկանա, թե ինչքանով են դրանք նույնացվում իր սեփական ապրումների, տպավորությունների, կենսափորձի հետ:

Թեմատիկ ապերցեպտիվ թեստի անցկացման ընթացքում արված արձանագրություններն ընդգրկում են.

- հոգեբանի և հետազոտվողի հարցերն ու պատասխանները,
- ընդհատումներ, դադարներ, խոսքային վրիպումներ,
- մինչև պատմությունը սկսելը լատենտ ժամանակը և ընդհանուր ժամանակը՝ խոսքի սկզբից մինչև վերջ,
- քարտի դիրքի փոփոխությունը՝ ըստ հետազոտվողի հարմարության
- հետազոտվողի հուզական վիճակը, տրամադրությունը, ձայնի առոգանությունը,
- հետազոտվողի ոչ խոսքային ռեակցիաները:

Հոգեբանի կողմից թեստավորման ընթացքում գաղտնի գրանցումները չի խրախուսվում:

ԹԱԹ-ի արդյունքների մշակումը և մեկնաբանման հիմնական չափանիշները նկարագրված են բազմաթիվ ձեռնարկներում: Հոգեդիագնոստիկ տվյալները ստանալիս պետք է հաշվի առնել, որ՝

- պատմություններ հորինելով՝ հետազոտվողը նույնականացվում է քարտերի կերպարների հետ՝ արտացոլելով նրանց մղումները, կոնֆլիկտները,
- պատմությունները կարող են խորհրդանշական լինել,

- տարբեր պատմություններ տարբեր հոգեդիագնոստիկ նշանակություն կարող են ունենալ,
- հետազոտվողի ներաշխարհի առանձնահատկություննե-րի բացահայտման համար առավել նշանակալից են կրկնվող թեմաները, հերոսները,
- պատմություններում կարող են արտացոլվել հետազոտ-վողի ակտուալ խնդիրները՝ կապված պատկերված իրա-վիճակի հետ,
- հետազոտվողի սեփական կենսափորձի հետ անմիջա-կանորեն չկապված պատմությունները նույնպես վերա-բերում են նրա անձնական խնդիրներին և ներքին հա-կասություններին,
- պատմություններում արտահայտվում են հետազոտվողի անհատական, խմբային սոցիալական դիրքորոշումնե-րը, պահանջմունքները,
- պատմություններից դուրս բերված բախումները ոչ միշտ են դրսևորվում հետազոտվողի վարքում և գիտակցվում նրա կողմից,
- պատմություններում պետք է հաշվի առնել նաև իրավի-ճակային տարրերը, պաշտպանական մեխանիզմների արդիականացումը:

Ընդունված է, որ թեստի արդյունքների մեկնաբանության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում խոսքային առանձնահատկություններին, հատկապես՝ մեջբերումներին, ա-սույթներին և փոխաբերություններին:

Այս թեստի դիագնոստիկ ցուցանիշները բովանդակային նշանակություն ունեն կոնկրետ չափանիշներ գնահատելու հա-

մար[78]: Դրանք են՝ ոլորտը և թեման, հերոսը և նույնականացումը, պահանջմունքները, նպատակները, կոնֆլիկտները, ելքը կոնֆլիկտից, գնահատականները: Թեստի մեկնաբանումները կատարվում են համապատասխան ցուցանիշներով կազմված անհատական աղյուսակներով, և նրա կիրառական նշանակությունը մեծ է անձի հոգեբանական կարգավիճակը հասկանալու, միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունների մասին տեղեկություններ ստանալու գործում:

Այս մեթոդիկայի թերություններն ու առավելությունները մանրամասն նկարագրված են Դ. Ա. Լեոնտևի գրքում, որտեղ նշվում է նաև, որ ԹԱԹ-ի կիրառումն առավել արդյունավետ է կլինիկայում սահմանային վիճակների դեպքում: Տվյալ մեթոդիկան ավելի նպատակահարմար է կիրառել Ռորշախի ու MMPI թեստերի հետ համատեղ, որոնք լրացնում են ԹԱԹ-ի տվյալները: Այսպես, ԹԱԹ-ից ստացված տեղեկությունը, որպես կանոն, թույլ է տալիս ավելի խոր ու բովանդակալից մեկնաբանել MMPI-ի կառուցվածքը, բնույթն ու այս կամ այն տատանումների ծագումը:

Չնայած ԹԱԹ-ը հնարավորություն է տալիս անձի մասին ստանալու բացառապես խորն ու համակողմանի տեղեկություններ, այն ոչ մի կերպ չի երաշխավորում այդ տվյալների ստացում յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Ստացված տեղեկության խորությունն ու ծավալը կախված են ուսումնասիրվող անհատի տեսակից, մեծապես՝ հոգեվերլուծաբանի հմտությունից, իսկ հմտության բացակայությունը վատ է անդրադառնում ոչ

[78] https://www.psyoffice.ru/8/psichology/book_o098_page_22.html ***Леонтьев Д. А*** Обработка и интерпретация результатов - Тематический апперцептивный тест

միայն արդյունքների մեկնաբանությունների փուլի, այլև հետազոտության ընթացքի վրա[79]:

Անձի հետազոտության պրոյեկտիվ մեթոդիկաներից առավել տարածվածներից է շվեցարացի հոգեբույժ, հոգեվերլուծաբան Հերման Ռորշախի՝ թանաքի հետքերով տաս քարտերից բաղկացած թեստը, որը առաջին անգամ հրապարակվել է 1921 թվականին[80]: Հ. Ռորշախին նաև պարտական ենք «հոգեդիագնոստիկա» եզրույթի համար:

Վերջինիս 1918 թվականին մշակած թեստը ունի բավական հետաքրքիր և նույնիսկ յուրահատուկ ու բարդ պատմություն: Այն առաջ եկավ որպես շիզոֆրենիայի դիֆերենցիալ դիագնոստիկայի փորձարարական մեթոդիկա, այնուհետև առաջատար տեղ զբաղեցրեց պրոյեկտիվ մեթոդիկաների մեջ, իսկ 60-ականներին քիչ էր մնում արժանանար որակազրկման: Այս թեստն այսօր օբյեկտիվ հոգեդիագնոստիկայի ամենաինֆորմատիվ մեթոդն է համարվում: Այժմ թեստը հիմնականում կիրառվում է Էքսների ինտեգրատիվ համակարգի (Exner Comprehensive System) շրջանակներում[81]: Հենվելով այս համակարգի վրա՝ Ռորշախի թեստը դառնում է կայուն ու համապարփակ մեթոդիկա՝ մարդու հոգեկան գործունեության մասին բազմակողմանի վավեր տեղեկություններ ստանալու համար:

---

[79] ***Леонтьев Д. А.,*** Тематический апперцептивный тест. 2-е изд., - М.: Смысл, 2000. - с. 6-7.

[80] https://en.wikipedia.org/wiki/Hermann_Rorschach#cite_note-1

[81] Տե՛ս https://psyjournal.ru/psyjournal/articles/detail.php?ID=2931 ***Ассанович М. А.,*** Тест Роршаха на основе адаптированной интегративной системы Экснера: теоретические и прикладные аспекты. Журнал практической психологии и психоанализа. 2002, № 4.

Կան տվյալներ, որոնց համաձայն՝ թանաքահետքերը կիրառել են դեռ Լեոնարդո Դա Վինչին և Բոտիչելլին՝ «երևակայությունը գրգռելու» համար, իսկ հոգեբանության ոլորտ է ներմուծել Ա. Վինեն՝ դրանց միջոցով հետազոտելով ինտելեկտի որոշ առանձնահատկություններ: Ռորշախը առաջիններից է եղել, ով նշել է, որ գոյություն ունի կապ անձի տիպի և իր հորինածի միջև:

Հոգեպես առողջ և անառողջ մարդկանց կլինիկական և փորձարարական հետազոտություններում կլինիկական բնութագրիչների և պատասխանների առանձնահատկությունները համեմատելու միջոցով Ռորշախը առանձնացրել է ընկալման երկու տիպ՝ «B» և «Fb», այսինքն՝ շարժողական և գունային տիպեր: Պարզվել է, որ հետազոտվողների մի մասը հակված է ընկալել հետքերը շարժման մեջ՝ իրենց պատկերացրած մարդկանց կամ կենդանիների կերպարներում՝ շեշտը դնելով շարժման հայեցակետի վրա, իսկ մյուս հետազոտվողները, ընդհակառակը, իրենց պատասխաններում շեշտում են գունային մասը: Ըստ Ռորշախի՝ ընկալման տիպը կապված է անձի ինտրովերտային կամ էքստրավետային ուղղվածության հետ: Զուգահեռ անցկացնելով Յունգի տիպաբանության հետ՝ Ռորշախն ամեն դեպքում ընդգծում է նաև համապատասխան եզրույթների տարբերությունները[82]:

Ըստ նրա հայեցակետի՝ էքստրավերտությունը և ինտրովերտությունը ոչ թե հակադիր և փոխբացառող հասկացություններ են, այլ յուրաքանչյուր մարդու շատ թե քիչ բնորոշ միտումներ: Դրանք ներկայացնում են ոչ այնքան հարմարողականության

---

[82] ***Соколова Е. Т.,*** Проективные методы исследования личности. –М.: Изд-во МГУ, 1980. – с. 50.

արդյունավետության աստիճանը, այլ այն իրականացնող անհատական մեխանիզմները: Օրինաչափ չէ նաև էքստրա- և ինտրովերտներին՝ որպես «զգացող» և «մտածող» անձի տիպերի հակադրումը, քանի որ արդյունավետ հարմարումը ընդգրկում է ինչպես աֆեկտիվ, այնպես էլ ճանաչողական գործընթացներ[83]:

Եթե նորմալ ինտրովերտ տիպը բնութագրվում է գունայինների նկատմամբ կինեսթետիկ (հուն.՝ *kinesis aesthesis* - նշանակում է շարժումների զգացում) պատասխանների առավելությամբ, ապա պաթոլոգիկ ինտրովերտ տիպը՝ գունայինների լրիվ բացակայությամբ: Հենց այս սկզբունքով են առանձնացնում նաև նորմալ և պաթոլոգիկ էքստրավերտ տիպը: Բացի նկարագրած երկու տիպերից՝ Ռորշախը նշում է նաև «սեղմված» տիպը, որին բնորոշ է քիչ քանակությամբ պատասխաններ՝ պայմանավորված գույնով և շարժմամբ, կամ՝ ընդհանրապես դրանց բացակայություն: Առանձնացնում է նաև «ամբիէքվալ» տիպը՝ մեծ ու հավասար քանակությամբ և՛ գունային, և՛ կինեսթետիկ պատասխաններով: Նշված ապրումների տիպերը կորելյացիոն կապ ունեն ինտելեկտի որոշակի բաղադրիչների, աֆեկտիվ շարժընթացի, բնավորության գծերի և հոգեկան պաթոլոգիայի ձևի հետ[84]:

Հ. Ռորշախը մշակել է պատասխանների վերլուծման և վերծանման հիմնական սկզբունքները. հետագա տարիներին աշխատանքները հիմնականում կատարվում էին այս կամ այն ցուցանիշների ճշտման, գաղտնագրման ավելի նուրբ միջոցների ստեղծման, պաթոգնոմիկ ցուցանիշների որոնման, նաև՝ մեթոդիկայի տեսական հիմնավորման ուղղություններով: Այսօր ամե-

[83] Նույն տեղում, с. 67-71:

[84] Նույն տեղում, с. 60-90:

նաընդունված մոտեցումն է «էգո-հոգեբանության» և «New Look» էքսպերիմենտների տեսությունը: Պերցեպտիվ պատասխանը դիտվում է որպես երկու գործոնների փոխազդեցության արդյունք: Այդ գործոններն են՝ թանաքահետքի օբյեկտիվ որակները և սուբյեկտիվ պահանջմունքները, կոնֆլիկտները, դրանց կարգավորման մեխանիզմները: Այս մոտեցման լույսի ներքո Ռորշախի թեստն առավելապես ուղղված է վարքի էքսպրեսիվ կողմի կամ անձի անհատական ոճի դիագնոստիկային:

Հ. Ռորշախը նկատեց, որ փորձարկվողների պատասխանների որոշ բնութագրեր զուգադիպում են նրանց վարքային առանձնահատկություններին: Հարկ է նշել, որ թանաքահետքերը կլինիկայում կիրառվում էին դեռևս Ռորշախից առաջ: Սովորաբար փորձարկվողներին խնդրում էին արտահայտել այն ասոցացիաները (զուգորդումները), որոնք առաջանում էին թանաքահետքերը տեսնելիս: Արդյունքները մեկնաբանելիս հիմնական շեշտը դրվում էր փորձարկվողների պատասխանների բովանդակության վերլուծման վրա: Ի տարբերություն իր նախորդողների՝ Ռորշախն առաջարկեց թանաքահետքերի կիրառման սկզբունքորեն նոր տարբերակ, ինչը և պայմանավորեց նրա թեստի դիագնոստիկ աննախադեպ հնարավորությունները: Ռորշախի հայեցակարգը այն էր, որ նա ուշադրություն էր դարձնում ոչ թե փորձարկվողի ասոցիատիվ գործընթացներին, որոնք դրսևորվում էին պատասխաններում, այլ թանաքահետքերի ընկալման ընթացքում այս կամ այն օբյեկտների ճանաչմանը:

Հոգեկան հիվանդություն ունեցող մարդկանց պատասխաններում ընկալման խանգարումների դրսևորումները դարձան առողջ մարդկանց պատասխաններից դրանց տարբերակման չափանիշ: Փորձարկվողի ընկալման առանձնահատկություննե-

րը դրսևորվում էին ոչ այնքան պատասխանի բովանդակության մեջ, որքան դրա ֆորմալ բնութագրերի: Վերջիններս ընդգրկում էին փորձարկվողի նշած օբյեկտի տեղադրությունը թանաքահետքի վրա, ինչպես նաև հենց հետքի առանձնահատկություններ, որոնք ընտրում էր փորձարկվողը պատասխանը կազմելու համար: Ռորշախին է պատկանում թանաքահետքի այնպիսի որակների առանձնացումը, ինչպիսիք են հետքի ձևը և ուրվագիծը, հետքի գույնը, դրանց որոշ տարօրինակ հատկությունները, որոնք դրդում էին փորձարկվողներին ձևակերպել պատասխանները՝ բացահայտելով դրանց մեջ մարդկային շարժումներ[85]:

Այստեղ հարկ է նշել, որ Ռորշախի ստեղծած խթանող թանաքահետքերը, ի տարբերություն այլոց, օժտված էին մի շարք առանձնահատկություններով: Բանն այն էր, որ դրանք լիովին ամորֆ չէին: Նա պատրաստել էր հետքերի որոշ մասերը ավելի հստակ ուրվագծերով, որպեսզի դրանք հիշեցնեն որոշակի օբյեկտներ: Ռորշախը իրավացի էր այն հարցում, որ եթե հոգեկան հիվանդները աղճատված են ընկալում քաջ ծանոթ օբյեկտները, ապա նրանք այլ պատասխաններ կտան հետքի հենց այն մասերը բնութագրելիս, որոնք առավել որոշակի ուրվագիծ ունեն: Հետքերի տվյալ առանձնահատկությունները, հետագայում, Ռորշախ-թեստի հիմնավորման տեսական հիմք դարձան: Ցավոք, Ռորշախը չկարողացավ անձամբ զարգացնել իր գաղափարները, քանի որ մահացավ երիտասարդ հասակում:

Վերջին շրջանում՝ այդ թեստը զանգվածային տարածում է ստանում. այն տպագրվում է պրակտիկ ձեռնարկներում և ինտերնետային կայքերում, որը ներկայացվում է ավելի պարզեց-

---

[85] ***Аннелиз Ф. Корнер,*** Теоретическое исследование пределов возможностей проективных методик // Проективная психология, -М., 2000. – с. 149.

ված տարբերակով: Սակայն, անհրաժեշտ է հիշել, որ Ռորշախի թեստի մեկնաբանման համար պետք են տեսական և գործնական լուրջ հմտություններ: Այդ մասին են վկայում բազմաթիվ հետազոտություններ և հանդեսներում տեղ գտած գիտականորեն հիմնավորված հոդվածները, որոնք օգտագործվել են այս դասական պրոյեկտիվ թեստը ներկայացնելու համար[86]:

Ժամանակակից գրականության մեջ թանաքաթեստի նկարագիրը հետևյալն է. հետազոտվողին առաջարկվում է մեկնաբանել ուղղահայաց առանցքի նկատմամբ հարաբերականորեն համաչափ թանաքային հետքերով տասը քարտ: Թանաքաքարտերը լայն տարածում են գտել համացանցում, ուր կարելիէ գտնել որակյալ պատկերներ[87]: Քարտերից հինգը պատկերված են միայն սև-սպիտակով, երկուսը պարունակում են լրացուցիչ վառ կարմիր երանգով բծեր, իսկ մնացած երեքը՝ ոչ վառ երանգների համակցում: Հետազոտվողին հրահանգ է տրվում պատմել, թե ինչ է տեսնում յուրաքանչյուր քարտում. ամեն այդպիսի պատկեր ազատ զուգորդությունների խթան է: Փորձարկվողն անմիջապես պետք է հայտնի իր առաջինը եկած միտքը, բառը, գաղափարը, կերպարը: Թեստը հիմնված է այն ենթադրության վրա, որ այն, ինչ անհատը «տեսնում է» թանաքաբծերով պատկերներում, պայմանավորված է իր անձնային առանձնահատկություններով:

---

86 ***Кабанов М. М., Личко А. Е., Смирнов В. М.,*** Методы психологической диагностики и коррекции в клинике. - М.: Медицина, 1983. - 312 с.; ***Белый Б. И.,*** Тест Роршаха. Практика и теория / Под ред. Л. Н. Собчик. - СПб.: ООО «Каскад», 2005. – 240 с.; ***Рауш де Траубенберг Н. К.,*** Тест Роршаха: Практическое руководство. - М: Когито-Центр, 2005. - 255 с.

87 http://masterok.livejournal.com/2437299.html կամ http://psychok.net/testy/544-test-rorshakha-metodika-chernilnye-pyatna

Պատմություններն ամբողջությամբ գրանցվում են, նշվում են յուրաքանչյուրի անցկացման ժամանակը, քարտի դիրքը, հետազոտվողի ինքնաբուխ արտահայտությունները: Հնարավորինս գրանցվում են նաև հուզական և ոչ վերբալ ռեակցիաները: Թեստավորումից և պատասխաններն ամբողջությամբ գրանցելուց հետո հետազոտվողի հետ մանրամասն քննարկվում են պատասխանները: Նա կարող է հետ դառնալ, լրացնել իր ասածը, տալ նոր պատասխաններ, պարզաբանել նախորդները:

Գրականության մեջ գոյություն ունի Ռորշախի թեստի ցուցանիշների մշակման և մեկնաբանման մի քանի համակարգ, որոնցում հիմնական ցուցանիշները լրացվում են հետևյալ հինգ ենթակարգերով[88].

- Լոկալիզացիա (տեղադրություն). հնարավորություն է տալիս գրանցելու, թե պատասխանի համար հետքի որ մասն է ընտրվել՝ ամբողջ պատկե՞րը, թե՞ առանձին մասեր, հատկապես քարտի ո՞ր մասն է դա՝ սև՞ը, սպիտա՞կը, թե՞ համակցվածը:
- Դետերմինանտներ (պայմանավորիչներ). պատասխանների ձևավորման համար կարող են օգտագործվել պատկերի ձևը, գույնը, շարժումը, ընթացքը, ձևի և գույնի համակցությունը: Չնայած թանաքի հետքի մեջ չկա ոչ մի շարժում, այնուամենայնիվ հետազոտվողն ընկալում է այն որպես շարժվող օբյեկտ: Պետք է առավել ուշադիր լինել և ճշտել, թե փորձարկվողը ինչ է տեսնում՝ մարդու շարժու՞մ, թե՞ կենդանու, կամ՝ արդյո՞ք այդ պատկերը վերացական է:
- *Ձևի մակարդակ.* այն կարգի մեջ գնահատում է, թե որքանով է համապատասխանում արտացոլված պատկերի ձևը որպես չափանիշ,

[88] ***Белый Б. И.,*** Тест Роршаха. Практика и теория / Под ред. Л. Н. Собчик. - СПб.: ООО «Каскад», 2005. – 240 с.

• *Բովանդակություն.* պատասխանը կարող է վերաբերել մարդկանց, կենդանիներին, անշունչ առարկաներին, բույսերին և այլն,

• *Ինքնափիպություն-հայփնիություն.* ինքնատիպ են համարվում շատ հազվադեպ պատասխանները, իսկ հանրահայտ են նրանք, որոնք հանդիպում են ավելի քան 30% հետազոտվողների մոտ:

Պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի ոլորտի դասական թեստերի դիտարկելիս նկատվում է, որ անկախ դրանք կազմելու և գործնականում կիրառելու բարդություններից, այդ մեթոդիկաները ապացուցել են իրենց դիագնոստիկ և կանխատեսող արժեքը:

Կարևոր էր նաև ընդհանրացնել թվային և վերլուծական չափանիշների բազմամյա փորձի ներդրումը պրոյեկտիվ տեխնիկաների մեջ: Դա կարող է հիմք դառնալ երկրորդային հետազոտությունների շրջանում, որոնք պատճենում են արևմտյան ու ռուսական աշխատանքները և թույլ են տալիս լուծել գիտամեթոդական շատ խնդիրներ հայրենական հոգեդիագնոստիկայում:



# 4. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պրոյեկտիվ մեթոդների դասակարգման սկզբունքների վերլուծությունը նպատակ ունի հստակեցնելու երկու կարևոր հարց՝ նախ այդ մեթոդների անվանման (մեթոդ, տեխնիկա, գործիք, թեստ) չափորոշիչները, ապա բնորոշող հատկությունների տարանջատման չափորոշիչները:

Պրոյեկտիվ մեթոդների, ինչպես նաև տեխնիկաների դասակարգման դեպքում անհրաժեշտ է դրանք տարբերակել այս կամ այն հատկանիշի հիման վրա, ինչի շնորհիվ դրանք համապատասխանում են հստակ դասերի, ենթաբաժինների կամ խմբերի:

Գիտական ընկալման համար դոմինանտ դեր է խաղում տաքսոնոմիկ դասակարգումը, որը իրականացվում է ըստ իրական աշխարհում գոյություն ունեցող օբյեկտների տիպերի, դասերի, բնույթի և տեսակների:

Հետևաբար, պրոյեկտիվ մեթոդները դասակարգելիս հարկավոր է դիտարկել հետևյալ հիմնական հատկանիշները՝ հանձնարարության տեսակը, խթանող նյութի յուրահատկությունը, ընկալման յուրահատկությունը, ենթադրվող ռեակցիաները (հակազդումները), վերծանման՝ ինտերպրետացիայի յուրահատկությունները, օբյեկտիվության և սուբյեկտիվության հարաբերակցությունը:

Հոգեախտորոշման ձեռնարկներում առաջարկվում են հոգեբանական թեստեր՝ ըստ ներկայացվող թեստային նյութի ձևի, մեթոդաբանության մեջ կիրառվող թեստային խնդիրների տի-

պի, ըստ «օբյեկտիվության-սուբյեկտիվության» և ըստ ախտորոշվող առարկայի: Սակայն հաճախ դժվար է լինում ընտրել պրոյեկտիվ մոտեցումը կիրառող մեթոդի ճշգրիտ անվանումը:

Ի տարբերություն ռուսաստանցի հոգեբանների՝ Ս. Լիլիյֆելդը առաջարկում է կիրառել «պրոյեկտիվ մեթոդներ» կամ «պրոյեկտիվ գործիքներ», և ոչ թե «պրոյեկտիվ թեստեր» հասկացությունները, քանի որ տվյալ դեպքում հոգեբանական թեստերի ավանդական չափորոշիչները բացակայում են: Հետազոտության այս բաժնում կենտրոնանանք պրոյեկտիվ մեթոդների դասակարգման սկզբունքների վրա՝ դիտարկելով պրոյեկտիվ մեթոդների հիմնական տեսակները, առավելություններն ու թերությունները, ձևավորման (դիզայնի) չափանիշները և հիմնական մեթոդների կառուցվածքը, ինչպես նաև՝ դրանց վերլուծության և մեկնաբանության սկզբունքները:

Պրոյեկտիվ մեթոդիկաների դասակարգումը առաջինը մշակել է Լ. Ֆրանկը: Այն առավել լիարժեք է բնորոշում պրոյեկտիվ տեխնիկան (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.**

Պրոյեկտիվ մեթոդների դասակարգումն ըստ հանձնարարության տիպի[89]

| N | Մեթոդի տեսակը | Պահանջվող հանձնարարություն |
|---|---|---|
| • | Կոնստիտուտիվ (constitutional/ конститутивные) | Պահանջվում է իմաստ հաղորդել ներկայացվող ամբողջ խթանող նյութին (ազդակին) |

[89] ***Frank L. K.*** (1948). Projective methods. Springfield: Thomas.IL.

| | | |
|---|---|---|
| • | Կոնստրուկտիվ կամ կառուցողական (constructive/конструктивные) | Ստեղծել իմաստավորված ամբողջություն մասնիկներից կամ մասնատված նյութից |
| • | Մեկնաբանական (interpretative/интерпретативные) | Մեկնաբանել, վերծանել կամ վերլուծել որևէ իրադարձություն կամ իրավիճակ |
| • | Կատարսիսային (cataractic/катартические) | Ցուցաբերել խաղային ակտիվություն հատուկ ստեղծված պայմաններում |
| • | Ռեֆրակտիվ (refractive/рефрактивные) | Անձնային գծերի դիագնոստիկա՝ ըստ խոսքի, ձեռագրի և գործունեության այլ տեսակների |
| • | Էքսպրեսիվ (expressive/экспрессивные) | Պահանջվում է նկարել թեմատիկ նկար |
| • | Իմպրեսիվ (impressive/импрессивные) | Ըստ նախապատվության ընտրել որոշակի խթանիչ նյութ |
| • | Ադիտիվ (additive/аддитивные) | Ավարտել կիսատ տրված նախադասությունը, պատմվածքը |

Ս. Լիլյենֆելդը համահեղինակների հետ ըստ կարգավիճակի առաջարկել է պրոյեկտիվ տեխնիկաների հինգ հիմնական ենթատիպ և ներկայացրել է երկուական օրինակ յուրաքանչյուր խմբում (տե՛ս աղյուսակ 2):

**Աղյուսակ 2.**

Պրոյեկտիվ մեթոդների հիմնական ենթատիպերը ըստ Լիլյենֆելդի[90]

| | **Ենթատիպ** | **Օրինակներ** | |
|---|---|---|---|
| • | Ասոցիացիա (զուգորդություն) association/ассоциация | Ռորշախի թեստը («թանաքի հետքերի» թեստը) | Ձեռքի թեստ (Վագներ) |
| • | Կառուցում construction/строительство | «Նկարի'ր մարդ» (ըստ Կ. Մահովերի) | Թեմատիկ ապերցեպտիվ թեստ (Մյուրրեյ, Մորգան ) |
| • | Լրացում completion/завершение | Նախադասություն (Վաշինգթոնի համալսարան) Փորձարկման ավարտ (ըստ Լուվինգերի) | Պատկեր Հուսահատություն Հետազոտություն (Ռոզենվեյգ, Ֆլեմինգ, Կլարկ) |
| • | Դասավորություն/ Ընտրություն arrangement/selection/ расположение / выбор | Սոնդիի թեստ | Լյուշերի գունային թեստ (Լյուշեր, Սքոթ) |
| • | Էքսպրեսիա/ արտահայտում expression/выражение | Պրոյեկցիոն տիկնիկային խաղ (Վոլտման) | Ձեռագրի վերլուծություն (Բեյրշտեյն) |

Պրոյեկտիվ մեթոդների դիտարկված խմբերը միավորում են որոշ ընդհանուր գծեր, որոնք թույլ են տալիս բացահայտել

[90] ***Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.*** The Scientific Status of Projective Techniques / Psychological science in the public interest. Vol. 1, N 2, 2000. p. 27-66.

տվյալ սուբյեկտի զգացմունքները, համոզմունքները, վերաբերմունքը և մոտիվացիան, սուբյեկտին հատուկ որակները և նրա ընկալումները սեփական անձի և շրջապատող աշխարհի մասին: Տվյալ դիագնոստիկ ներուժը դիտարկված է հետևյալ դասակարգման մեջ (տե՛ս աղյուսակ 3-ում):

**Աղյուսակ 3.**

Լ. Ֆ. Բուրլաչուկի և Ս. Մ. Մորոզովի պրոյեկտիվ թեստերի դասակարգումը[91]

| N | Ենթատիպ | Օրինակներ | Հանձնարարության տիպ |
|---|---|---|---|
| 1 | Կոնստիտուտիվ թեստեր (конститутивные тесты) | Ռորշախի թեստ («թանաքի հետքերի» թեստը) | Նյութի իմաստավորում, կառուցարկում |
| 2 | Կոնստրուկտիվ թեստեր (конструктивные тесты) | Միրի թեստ | առանձին մասերից ամբողջի ստեղծում, կառուցում |
| 3 | Ինտերպրետատիվ (մեկնաբանվող) թեստեր (интерпретативные тесты) | «Թեմատիկ ապերցեպցիայի թեստ» (TAT), «ձեռքի թեստ» | Առաջարկվող իրադարձությունների, իրավիճակների, պատկերների ինտերպրետացիա (մեկնաբանություն) |
| 4 | Կատարսիսային թեստ (катартические тесты) | Փսիխոդրամա (Օրինակ՝ ըստ Ջ. Մորենոյի) | ստեղծագործական գործունեություն հատուկ պայմաններում |
| 5 | Էքսպրեսիվ թեստեր (экспрессивные | «Նկարիր մարդ» (ըստ Կ. Մախովերի), | նկարչություն կամ նմանօրինակ գործունեություն |

[91] ***Бурлачук Л. Ф., Морозов С. М.,*** Словарь - справочник по психодиагностике. - СПб.: Питер Ком, 1999. - 528 с.

| | | | |
|---|---|---|---|
| | тесты) | «Տուն-ծառ-մարդ» (ըստ Ջ. Բուկոմի) | ազատ կամ տրված թեմայով |
| 6 | Իմպրեսիվ թեստեր (импрессивные тесты) | Լյուշերի 8-գույնանի թեստը | Ազդակի ընտրություն, նախապատվություն մյուսների համեմատ |
| 7 | Ադիտիվ թեստեր (аддитивные тесты) | «Անավարտ նախադասություն», Վարտեգի թեստը | Նախադասությունը, պատմությունը կամ պատկերը ավարտելը |

Նախորդ դասակարգման տարբերակում ներառնված պրոյեկտիվ մեթոդները առկա են նաև մեկ այլ մոտեցման մեջ, որը առաջարկում է Դ. Հոլմսը[92] (տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.**

Պրոյեկցիայի տեսակները և դրանց դասակարգումը երկու հարթություններում՝ ըստ Դ. Հոլմսի

| Սուբյեկտի կողմից պրոյեկտվող հատկանիշի գիտակցում | Սուբյեկտի մոտ պրոյեկտվող հատկանիշի առկայություն | Սուբյեկտի մոտ պրոյեկտվող հատկանիշի բացակայություն |
|---|---|---|
| Սուբյեկտը չի գիտակցում սեփական հատկանիշը | Սիմիլյատիվ պրոյեկցիա | Պանգլոսի և Կասանդրայի պրոյեկցիա |
| Սուբյեկտը գիտակցում է սեփական հատկանիշը | Ատրիբուտիվ պրոյեկցիա | Կոմպլեմենտար պրոյեկցիա |

[92] ***Бурлачук Л. Ф.,*** Психодиагностика: Учебник для вузов. - СПб.: Питер, 2006. - с. 289.

Դիտարկելով անձի դիագնոստիկայի պրոյեկտիվ մոտեցման բազմաթիվ տեսական հիմնավորումներ՝ Լ. Ֆ. Բուրլաչուկը եզրակացնում է, որ պրոյեկտիվ մեթոդիկաները հարկ է դիտարկել որպես անձի ուսումնասիրության միջնորդավորված հնարքներ, որոնք հիմնվում են խթանող իրավիճակի յուրօրինակ ճկուն լինելու վրա: Այն լուծելու ձգտումը նպաստում է ընկալման մեջ համապատասխան միտումների, դիրքորոշումների, վերաբերմունքների և անձնային այլ առանձնահատկությունների արդիականացմանը[93]:

«Հասարակական գիտությունների միջազգային հանրագիտարանի» պաշտոնական կայքում բերված է առավել ընդհանրացված դասակարգում, որտեղ դիտարկվում է պրոյեկտիվ մեթոդների չորս խումբ. ա) «association» - ասոցիացիաներ, զուգորդություններ, բ) «construction» - կառուցում, գ) «completion» - ամփոփում, դ) «choice or ordering» - ընտրություն կամ դասակարգում; ե) «expression» - էքսպրեսիա կամ արտահայտում[94]: Այս պարագայում Լենդզեյի (Lindzey, 1959) հայեցակարգային մոտեցումը կենտրոնացած է սուբյեկտի մոտ առաջացնող հակազդման բնույթի վրա:

Օ. Վ. Բելովի կարծիքով՝ գոյություն ունի դասակարգում, որն առավել լայն է ընդգրկուն է դարձնում գոյություն ունեցող պրոյեկտիվ մեթոդիկաների շրջանակը: Առաջին խմբի մեջ են մտնում այն լրացման մեթոդիկաները, որոնք ենթադրում են ազդակ-բառերից կազմված խթանող նյութ (հետազոտության մասնակցից պահանջվում է լսված բառերից նշել մտքով անցածը,

[93] Տե՛ս նույնը, էջ 308:
[94] http://www.encyclopedia.com/social-sciences/applied-and-social-sciences-magazines/projective-methods

ավարտին հասցնել անավարտ նախադասություններ կամ անավարտ պատմություն):

Երկրորդ խմբի մեջ են ինտերպրետացիայի մեթոդիկաները, որոնք ենթադրում են նկարներից կամ լուսանկարներից բաղկացած խթանող նյութեր (պատասխանողից պահանջվում է կազմել պատմվածք առաջարկվող պատկերներից, պատասխանել նկարներում ներկայացված իրավիճակներին վերաբերող հարցերին, առանձնացնել հաճելի և տհաճ նկարներ և ֆոտոներ): Երրորդ խմբի մեջ են կառուցվածքավորված մեթոդիկաները, որոնց խթանող նյութը քիչ է կառուցվածքավորված (պատասխանողից պահանջվում է մեկնաբանել պատահական պատկերներ, թանաքի հետքեր և այլն): Չորրորդ խումբը՝ էքսպրեսիայի ուսումնասիրման մեթոդիկաներն են (ձեռագրի և խոսքային վարքագծի վերլուծություն): Եվ հինգերորդը ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծության մեթոդիկաների խումբն է (վերլուծության առարկա է թեստավորման մասնակցի նկարածը)[95]:

Ըստ Լ. Է. Էբոտի[96]՝ պրոյեկտիվ հոգեբանության ժամանակակից հայեցակարգային միտումները հիմնվում են անձի վարքագծի կոնցեպտուալիզացիայի էական ուղղությունների վրա, որոնք պրոյեկտիվ ախտորոշման մեթոդների դասակարգման հիմնական նախադրյալներն են.

1) անձն ավելի հաճախ դիտարկվում է որպես գործընթացի մեջ գտնվող մարդ, ոչ թե հարաբերականորեն կայուն այնպիսի

---

[95] http://psylib.org.ua/books/beloo01/txt05.htm ***Белова О. В.,*** Общая психодиагностика / методические указания, Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996

[96] Проективная психология / Пер. с англ. - М.: Апрель Пресс, Изд-во ЭКСМО-Пресс, 2000. - 528 с.

գծերի համախումբ, որոնք անհատը կիրառում է՝ ի պատասխան ազդակների,

2) պրոյեկտիվ եղանակներով ուսումնասիրվող անձը համարվում է գործընթաց, որի վրա մշտապես ազդում են մի կողմից՝ ֆիզիկական և սոցիալական միջավայրերի հետ անհատի հարաբերությունները, մյուս կողմից՝ նրա պահանջմունքների վիճակը և ուժը,

3) պրոյեկտիվ հոգեբանության մեջ ուժգնանում է դաշտի տեսության վրա հիմնվելու միտումը՝ որպես պրոյեկտիվ վարքային դրսևորումների բավարար չափանիշ,

4) հոգեվերլուծական մտածողության ազդեցությամբ՝ նկատվում է անհատի դասակարգման երկու տեսակ՝ դինամիկ (դաշտային) և գենետիկ (պատմական և էվոլյուցիոն),

5) անձի պատկերը՝ որպես մի «ամբողջություն», որը ստեղծվում է պրոյեկտիվ մեթոդիկաների տվյալների օգտագործմամբ, ամենայն հավանականությամբ, վերաբերում է միայն «անձի մաս կազմող գործընթացների» ամբողջականությանը և ինտեգրացիային ուսումնասիրվող անհատի կյանքի տվյալ ժամանակահատվածում,

6) գոյություն ունի կոնցեպտուալ սխեմայի կազմավորման տեսանելի միտում, որի վերաբերյալ կլինիկական նպատակներով կարելի է կատարել տարբեր անհատներին վերաբերող համապատասխան ձևակերպումներ:

Բերված տեսակետների վերլուծությունից հետո իրավամբ կարելի է եզրակացնել, որ պրոյեկտիվ հոգեբանության հիմնական հիմնախնդիրն անձի մասին առավել սպառիչ, հետևողական և հարմար տեսություն ստեղծելն է, որը հնարավորինս կհամապատասխանի գիտության երկակի նպատակին, այն է՝ բա-

ցատրել անհատի նախկին վարքագիծը և կանխատեսել գալիք վարքագիծը: Այդ հիմնադրույթը նաև մատնանշում է, որ պրոյեկ-տիվ մեթոդների դասակարգումը չի կարող լինել միասնական, քանի որ այդ մեթոդիկաները բխում են տեսական տարբեր նա-խադրյալներից:

Հիմնվելով վերլուծության վրա՝ մշակված պրոյեկտիվ թեստը հա-մապատասխանում է դասակարգումների որոշակի տեսակներին և հանձնարարականների պահանջներին:



# 5. ՊՐՈՅԵԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ներկայումս նույնպես, ինչպես նախկինում, հարցեր են առաջանում պրոյեկտիվ հոգեբանության տեսական հիմքերի՝ նրա մեթոդաբանական և հայեցակարգային սկզբունքների վերաբերյալ:

Վիճելի են մնում այն հիմնախնդիրները, որոնք վերաբերվում են պրոյեկտիվ հոգեախտորոշման մեթոդների զարգացման միտման ուրվագծման, նրանց՝ փորձարարական հոգեբանության պահանջներին համապատասխանեցման, ինչպես նաև նրա հետազոտական և ախտորոշիչ հնարավորություններին: Հոգեբանական գիտության զարգացման գործընթացում ընդունված է դիմել այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են «շրջադարձը» և «վերելքը». եթե առաջին հասկացությունը կապված է Զ. Ֆրեյդի հետ, ապա երկրորդը, անպատճառ, վերաբերում է Գ. Ռորշարխին, այսինքն՝ «թանաքաթեստ» պրոյեկտիվ մեթոդի վերլուծությանը[97]:

Պրոյեկտիվ հոգեբանության տեսական հիմքերի վերլուծությունն առավել մանրամասն տրված է Լ. Էբթի, Լ. Բելակի և Բ.

[97] **Հերման Ռորշախ** (1884-1922) – շվեյցարացի հոգեբույժ և հոգեբան, անձի ուսումնասիրման՝ «Ռերշախի թանաքաբծեր» թեստի հեղինակ (Psychodiagnostik.In W. Morgenthaler (ed.). Arbeiten zur angewandten Psychiatry. vol. 2, Bircher. 1921). Շրջանառության մեջ է դրել «Հոգեդիագնոստիկա» եզրույթը: Դասական դարձան նրա հեղինակած «Հոգեդիագնոստիկա» և «Ձևերի մեկնաբանման մասին գիտափորձի ներկայացման» զեկույցը (տե՛ս http://psychojournal.ru/psychologists/381-germanrorshah.html#t20c.)

Մուրսթեյնի ձեռնարկներում[98], որոնք թարգմանաբար տպագրվել են ռուսերեն: Ցավոք, ներկայումս չկա պրոյեկտիվ հոգեբանության և նրա մեթոդների համակողմանի հայալեզու վերլուծություն: Սա բարդացնում է այդ մեթոդների կիրառումը ինչպես հետազոտական, այնպես էլ հոգեբանի պրակտիկ աշխատանքում: Ի տարբերություն հոգեբանական դիագնոստիկայի ավանդական մեթոդների (հարցարաններ և թեստեր)՝ այս դեպքում խոսքը մեթոդների տեղայնացման գործընթացի մասին չէ, այլ դրանց տեսական հիմնավորման, եզրույթային թեզարուսի (հոմանիշարան) և վերլուծության տեխնիկայի մասին է: Վերջիններս ունեն բավականին բարդ բովանդակություն և պահանջում են արհեստավարժություն՝ գիտակցական և անգիտակցական պահանջմունքների, քողարկված ազդակների, վախերի գնահատման, ցանկությունների, մղումների, կոնֆլիկտների, իմաստային համակարգի և անձի կոգնիտիվ առանձնահատկությունների ոճը բացահայտելու համար: Անխոս, այս ամենը որոշակիորեն կապված է ազգային մտածելակերպի և ինքնագիտակցության, էթնիկական կարծրատիպերի, լեզվական տարրերի բնութագրիչների և նմանատիպ այլ գործոնների հետ: Միաժամանակ, պրոյեկտիվ թեստավորման առավելություն կարելի է համարել եզրույթների թարգմանության համարժեքության խնդրի հաղթահարումը և տարբեր լեզվական խմբերի հետազոտման արդյունքները համեմատելու հնարավորությունը:

Պրոյեկտիվ տեխնիկաների ախտորոշման մեթոդաբանական հիմնախնդրի ձևավորման մեջ նկատելի է հոգեդինամիկ առանձնահատկությունների հեռանկարը, որը կապված է հա-

---

[98] ***Abt L., Bellak L.*** Projective Psychology. - N.Y., 1950; Handbook of Projective Techniques, Ed. B. Murstein, Published by Basic Books, 1965.

կազդման ձևերի, նորմավորման և լեզվի հետ: Ընդհանուր առմամբ ամեն ինչ հանգեցնում է հետազոտության մեթոդաբանության որակյալ սկզբունքների, որը թույլ է տալիս բացահայտել ինչպես ճանաչողական, այնպես է վարքային գործունեության սուբյեկտիվ պատճառները[99]:

Պրոյեկտիվ հոգեբանության մեթոդաբանական հայեցակարգը հակադրվում է վարքաբանական մեթոդաբանությանը և դիտարկվում է որպես «լուրջ ապստամբություն» տեսական հոգեբանության հիմնական հոսքերից շատերի դեմ (որոնց հանդեպ նա պարտավորվածություն ունի): «Հոգեբանության պրոյեկտիվ մոտեցումը կտրուկ հակասում է ամերիկյան վարքաբանական ավանդույթներին, որը մինչ այժմ համարվում է ժամանակակից տեսական հոգեբանության հարստացման կարևորագույն հիմքը»[100]: Հակադրվելով հոգեվերլուծողների, հոգեբույժների և փորձարարական հոգեբանության կողմնակիցների մոտեցումներին՝ հեղինակը եզրահանգում է, որ այս ամենը զգալիորեն նպաստել է փորձարարական հոգեպաթոլոգիա ուղղության առաջընթացին: Պրոյեկտիվ մեթոդների այս վերլուծության արդյունքում նշվում է, որ նմանատիպ հետազոտություններում պետք է հրաժարվել քանակական և որակական տվյալների սխալ սահմանազատումից, քանի որ անձի ուսումնասիրման ժամանակ կարող են առաջանալ այդ տվյալներից երկուսն էլ, և անհրաժեշտ է մշակել դրանց մեկնաբանման համակողմանի միջոցներ: Միաժամանակ պետք է նշել, պրոյեկցիաներն ունեն

[99] ***Molish H. B.,*** Projective Methodologies//Annual Review of Psychology, 1972, Vol. 23: 577-614.

[100] ***Беллак Л., Эбт Л.,*** Проективная психология / Пер. с англ. - 2-е изд., сокр., испр. - М.: Психотерапия, 2010. - с. 30.

նաև ներազդող գործառույթ՝ այսպես կոչված գիտակցության սիմվոլային վերաձևավորման, իմաստային և հուզական ներազդման տեխնիկաներ, որոնք կարևոր նշանակություն ունեն կիրառական հոգեբանության մեջ (հեքիաթ, արտթերապիա և երաժշտաթերապիա) և լայնորեն կիրառվում են քաղաքական բանավեճերում, գովազդում, PR-ում, հարցազրույցում (ՄՌԿ) և իմիջաբանության մեջ: Սակայն դա առանձին քննարկման ոչ պակաս կարևոր թեմա է:

Հետազոտության տվյալ բաժնում որոշվում է մի քանի խնդիր. ո՞ր սկզբունքների վրա է հիմնված պրոյեկտիվ մեթոդների դասակարգումը, որո՞նք են դրանց առավելություններն ու թերությունները, ինչպես նաև՝ դրանց մեկնաբանման և այլ մեթոդիկաների հետ համադրման ժամանակակից սկզբունքները: Հիմնական վարկածները վերաբերում են այն բանին, որ փորձարարական հետազոտությունների գործընթացում պրոյեկտիվ մեթոդները նպատակահարմար չէ կիրառել ստանդարտիզացված հոգեչափական մեթոդներից առանձին, սակայն նրանց պահանջարկը պայմանավորված է հոգեդիագնոստիկ արժեքով, այսինքն՝ անձի անգիտակցական կաղապարների լիարժեք նկարագրման և բացահայտման առավել ամբողջական հնարավորությամբ:

Լ. Կ. Ֆրանկը, առանձնացնելով պրոյեկտիվ մեթոդի արժանիքները, նշում է, որ շատ արարողակարգեր, որոնք միտված են անձի ուսումնասիրմանը, հիմնվում են սուբյեկտի ինքնախտորոշման և սեփական ներաշխարհի անձնային իմաստների և զգացմունքների բացահայտման վրա (նրանց սոցիալական վիճակը, եթե նույնիսկ բացառության կարգով նա հստակ պատկերացում ունի իր մասին, ստիպում է անհատին թաքցնել այն):

երբ անհատին հարցնում են՝ ինչ է նա մտածում, զգում, կամ խնդրում են մատնանշել իր պատկանելիությունն ու համապատասխանությունը ինչ-որ կատեգորիայի կամ խմբային չափանիշների, սոցիալականը ճնշում է նրան և խանգարում ինքնախտորոշմանը[101]: Ամեն դեպքում, հեղինակը չի բացառում դիտման մեթոդի կամ փորձարարական իրավիճակի ստեղծման կարևորությունը, քանի որ մարդու կողմից դրանց ընկալումը մեկնաբանությունների բազմազանության հնարավորություն է տալիս:

Ախտորոշման հավաստիությունը շատ դեպքերում որոշվում է միևնույն հոգեկան հատկանիշը տարբեր մեթոդների հետ համադրելու կամ չափելու սկզբունքի կիրառմամբ, որի արդյունքում հետազոտության օբյեկտը դիտարկվում է տարբեր «հարթություններում» և բոլոր «կողմերից»: Մենք հակված ենք այն մոտեցմանը, որ դիագնոստիկայի պրոյեկտիվ մեթոդները նպատակահարմար է միաժամանակ օգտագործել առավել հստակ մեթոդների հետ, ինչը թույլ կտա ստանալ ավելի լիարժեք պատկեր անձի մասին և համեմատել այն տարբեր տեսակի տվյալների հետ: Այս ամենի հետ մեկտեղ՝ նպատակահարմար է դիտարկել Գ. Ո. Օլպորտի առաջարկած դիագնոստիկ միտումը, ըստ որի՝ «նորմալ, հստակ նպատակաուղղված և համարժեք համարվող սուբյեկտը կարող է արձագանքել պրոյեկտիվ մեթոդներին երկու եղանակով: Կա՛մ նա տալիս է նյութ, որը գիտակցական հաշվետվությանը համարժեք է, կա՛մ ոչ մի կերպ չի արտահայտում իր գերակայող դրդապատճառները»[102]: Պրոյեկտիվ մեթոդները հատուկ նշանակություն ունեն այն ժամանակ, երբ պրոյեկտիվ ռեակցիաներում հայտնաբերվում է հուզականորեն ծանրա-

[101] Նույն տեղում, էջ 79:
[102] Նույն տեղում, էջ 64:

բեռնված նյութ, այդ դեպքում բացառվում է գիտակցված պատասխանը[103]: Իր եզրահանգման մեջ հեղինակը ճիշտ է այնքանով, որ պրոյեկտիվ մեթոդները պետք չէ կարևորել միայն հոգեդինամիկ մոտեցման տեսանկյունից և հետազոտություններում բավարարվել միայն դրանցով: Այդպիսով, հետազոտական աշխատանքում կարելի է խուսափել միակողմանիությունից և արտեֆակտներից:

Վերոնշյալին հավասարազոր է այն միտքը, որ փորձարկված և մանրամասն մշակված որոշ պրոյեկտիվ մեթոդներ համարվում են իսկապես հուսալի և հավաստի: Հետևաբար, ըստ պրոյեկտիվ մեթոդների կիրառման երկարամյա փորձի մետավերլուծության արդյունքների (ԹԱԹ, Ռոզենցվեյգի, Ռորշախի, Սոնդիի և այլ մեթոդիկաներ), սխալ և չփաստարկված է այն կարծիքը, որ լայն իմաստով պրոյեկտիվ տեխնիկաները անհուսալի են և ոչ հավաստի կլինիկական և հետախուզական փորձաքննության համար[104]:

Հարցարանների և առավել օբյեկտիվ գնահատող անձնային թեստերի համեմատ, պրոյեկտիվ թեստերը դժվարությամբ են ենթարկվում քանակական ցուցանիշների և հաշվարկների, այդ պատճառով հաճախ առաջանում են հարցեր դրանց հուսալիության, վալիդության և հավաստիության վերաբերյալ: Բայց մեկ այլ տեսանկյունից՝ պրոյեկտիվ մեթոդները թույլ են տալիս խուսափել բարդություններից, որոնք առաջանում են ստանդարտիզացված մեթոդիկաներ կիրառելիս, քանի որ դրանց մեծ մասը չունի տարիքային, սեռային, կրթական, մշակութային և այլ սահ-

---

[103] Նույն տեղում:

[104] ***Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.*** The Scientific Status of Projective Techniques / Psychological science in the public interest. Vol. 1, N 2, 2000. p. 53.

մանափակումներ: Չափորոշիչային սանդղակների բացակայության հարցը պրոյեկտիվ մեթոդիկաներում փոխհատուցվում է խթանիչ նյութի կրկնօրինակմամբ և փորձարկվողի լրացուցիչ ինքնահաշվետվությամբ: Այդպիսի չափանիշներով են առանձնանում Վարտեգի, Ռոզենցվեյգի և Տորենսի մի շարք արժանիքներ ունեցող մեթոդները (օպերատիվություն, տարիքային լայն շրջանակ, սոցիալապես ընդունելի ռեակցիաների բացակայություն): Մեթոդիկաների այս խմբի օգնությամբ կատարված թեստավորման արդյունքները ենթարկվում են վիճակագրական վերլուծության, քանի որ համարվում են առավել կառուցարկված և օբյեկտիվ են վերոնշյալ չափանիշների հաշվին: Այդ պատճառով կասկած է առաջացնում այն միտքը, որ պրոյեկտիվ մեթոդը մինչ այժմ լիարժեք հիմնավորված չէ. հարցն այն է, թե որքանով է այն թույլ տալիս ներխուժել անձի ներաշխարհ: Պրոյեկտիվ թեստերի հուսալիության և հավաստիության հարցի միանշանակ լուծում դեռևս գոյություն չունի[105]:

Այսպիսով, հոգեբանական թեստավորման դասական աշխատությունում նշվում է, որ մեթոդիկան կարող է համարվել գործնականորեն օգտակար կամ էմպիրիկ տեսանկյունից արժեքավոր միանգամայն այլ պատճառներով և ոչ թե դրանց ներմուծումը արդարացնելու համար նշվածներով[106]: Պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայում, ինչպես «օբյեկտիվ» մեթոդիկաների թեստավորման դեպքում, կարող են առաջանալ այնպիսի հայտնի բարդություններ, ինչպիսիք են՝ «կույր սխալները», սթրեսածին

---

[105] ***Евсеева О. Е.,*** Проблема применения проективных методик в современной психодиагностике // Актуальные проблемы психологии личности. – Новосибирск: СибАК, 2011 / https://sibac.info/conf/psych/vi/36226

[106] ***Анастази А., Урбина С.,*** Психологическое тестирование.-7-ое изд. – СПб.: Питер, 2007. – с. 451.

լինելը, պրոֆանցիան, ռեպրոդուկտիվությունը (վերարտադրողականություն) և «պլացեբո» էֆեկտը: Այս եզրահանգումը հաստատվում է պրոյեկտիվ մեթոդների տարածվածությամբ, որոնց հազարավոր տեսակները օգտագործվում են հետազոտություններում: Լ. Ֆ. Բուրլաչուկը նշում է, որ դասական և ատրիբուտային պրոյեկցիան, տարբեր հեղինակների կարծիքով, կարելի է տարբերակել պրոյեկցիայի համար ընտրված «թիրախով»: Ենթադրվում է, որ դասական պրոյեկցիան ուղղված է բացասական գնահատվող մարդկանց, իսկ երբ անհատը գիտակցում է, որ ունի բացասական գծեր, նա դրանք վերագրում է այն մարդկանց, որոնց նկատմամբ դրական վերաբերմունք ունի: Սեփական դրդապատճառները, պահանջմունքները, զգացմունքները այլ մարդկանց վերագրելու պրոյեկցիայի հասկացությունը հիմնված է ինչպես միջգիտական դիտարկումների, այնպես էլ փորձարարական հետազոտությունների վրա, այս պատճառով պատահական չէ, որ որոշ հոգեբանները այն համարում են միակ հիմնավորումը[107]: Այսպիսով, ինչպես միշտ, սուբյեկտիվության գործոնի հաղթահարման և պրոյեկտիվ թեստավորման մեջ ընդամենը մեկ մեթոդական հնարքի կիրառման խնդիր է դիտարկվում: Զուգահեռաբար պետք է նշել պրոյեկտիվ թեստերի զարգացման ևս մեկ միտումի մասին. այն, որ մեթոդիկաներից շատերը ի սկզբանե ստեղծվել են երեխաների և դեռահասների համար, իսկ հետագայում ձևափոխվել են մեծահասակների խմբի համար:

Պրոյեկտիվ մեթոդների համեմատական վերլուծությունը, իհարկե, մատնանշում է նաև դրանց թերությունները հենց ընդունված չափանիշների՝ հավաստիության և հուսալիության տե-

---

[107] ***Бурлачук Л. Ф.,*** Психодиагностика: Учебник для вузов. - СПб.: Питер, 2006. - с. 288.

սանկյունից: Ակնհայտ է նաև այն փաստը, որ դիագնոստիկ «համակարգը» ենթադրում է ուսուցման և մասնագիտական հատուկ հմտությունների առկայություն: Սակայն, շատ դեպքերում, նամանավանդ երբ մեթոդիկաները կիրառվում են գիտահետազոտական նպատակով, օբյեկտիվության համար այդ ամենը բավարար չէ:

Այպիսով, պրոյեկտիվ մեթոդիկան չի կարելի համարել հոգեբանական ախտորոշման միակ և ընդգրկուն գործիքը, քանի որ այն համակարգային մոտեցման համատեքստում այլ մեթոդների հետ զուգահեռ կիրառման կարիք ունի: Հոգեբանական ախտորոշման օբյեկտիվության չափանիշները կբարձրանան, եթե պրոյեկտիվ մեթոդիկաները համադրվեն այլ՝ այդ թվում նաև՝ պրոյեկտիվ թեստերի, կենսագրական մեթոդների և փորձարկողի անձնական դիտումի հետ: Աւռելի քանակությամբ պրոյեկտիվ մեթոդիկաների մեջ առանձնանում են նրանք, որոնք առավել օպերատիվ են օգտագործման առումով, ունեն հիմնավորված մեթոդաբանական հիմք, օժտված են հստակ մեկնաբանման համակարգով և հուսալիությամբ:

Այս իմաստով կարելի է ուսումնասիրել Ս. Տաբերի աշխատանքները, ով նպատակ է դրել, հիմնվելով անձի զարգացման հոգեդինամիկ մոտեցման վրա, սահմանազատել դրա համարժեքությունը, օգտագործում է պրոյեկտիվ թեստերի կոնկրետ համակարգ՝ «Ռոշարխի թանաքաթեստը», «Թեմատիկ ապերցեպցիայի թեստը», «Անավարտ նախադասությունների թեստը» և «Նախընտրելի կենդանու թեստը»: Հեղինակը, այս չորս թեստերը համարում է լավագույն հավաքածուն, քանի որ ֆենոմենոլոգիապես համապատասխանում են անձի առողջ և ոչ համարժեք հայեցակետերի լուսաբանմանը: Զուգահեռաբար պարտա-

դիր պայման է համարվում այն, որ այդպիսի ֆենոմենոլոգիան պետք է ներառված լինի անձի տեսության մեջ, որը «անհատական փորձը կապում է անձի հարմարման առավել լայն համատեքստում»[108]:

Լայնածավալ հետազոտություններից մեկում թեստավորման հոգեբանական մեթոդների խնդիր էր առաջ քաշվել: Դրանք հաճախ օգտագործվում են կլինիկական հոգեբանների կողմից երեխաների, դեռահասների և մեծահասակների հետ աշխատանքում: Հարցը այն էր, թե ինչպես են գնահատում մասնագետները այդ թեստերի ազդեցության արդյունավետությունը մասնավոր պրակտիկայում, ամբուլատոր և ստացիոնար պայմաններում, ինչպես նաև՝ ԱՄՆ-ի դպրոցներում: Այսպիսով, հարցվողների 40%-ը նշել է հոգեբանական թեստավորման զգալի սահմանափակումների մասին, այդ թվում՝ նաև պրոյեկտիվ թեստերի՝ պայմանավորված տարբեր տեսակի մարդկանց ուսումնասիրման քաղաքականությամբ: Այս հեղինակների հետազոտությունները վերլուծելուց բացի՝ 2001 թվականին անցկացվել է նաև հարցում պրակտիկ հոգեբանների հետ, ովքեր պատասխանել են հետևյալ հասկացություններին վերաբերող հարցերին՝ կրթություն, փորձ, տեսական կողմնորոշում, թեստերի անցկացման հաճախականություն, 45 դեպքերի նկարագրություն, դրանց կապը թեստավորման հետ և այլն[109]: Արդյունքում դուրս է բերվել մեթոդների 5 խումբ (կլինիկական հարցազրույց, վարքաբանական դիտում, վարքային - վարկանշային ձևեր, ինքնահաշվետ-

[108] ***Tuber S.*** Understanding personality through projective testing,. Reviewed by Anthony D. Bram // Psychoanalytic Psychology, 2013, Vol. 30, No. 3, pp. 497–502.

[109] ***Cashel M. L.*** Child and adolescent psychological assessment: current clinical practices and the impact of managed care/ Professional Psychology: Research and Practice. APA, 2002, Vol. 33, No. 5, pp. 446-453.

վության արխիվներ, պրոյեկտիվ թեստեր) և հաճախ կիրառվող 30 և ավելի տարածված թեստեր, որոնք նպատակահարմար են երեխաների և դեռահասների հետ աշխատանքում (ըստ տեսակավորման՝ դրանցից առաջին հինգն են՝ Վեքսլերի սանդղակը, երեխայի վարքի վերահսկիչ սանդղակը, անավարտ նախադասությունները, դասավանդողի հաշվետվության սանդղակը և «նկարիր մարդ» թեստը): Պետք է նշել, որ պրոյեկտիվ թեստերի մեջ առավել տարածված են «տուն-ծառ-մարդ», «ընտանիքի կինետիկ նկար» և «բառապաշարի նկարներ» մեթոդիկաները[110]:

Պրոյեկտիվ թեստեր կիրառող մարդկանց հետազոտությունների վերլուծությունը աներկբա ցույց է տալիս, որ անավարտ նախադասությունների թեստը («Ավարտի՛ր նախադասությունը»-Sentence completion tests) համարվում է պրակտիկ հոգեբանների կողմից կիրառվող՝ անձի գնահատման ամենատարածված և պահանջված գործիքներից մեկը: Չնայած այս հանրաճանաչությանը դեռևս մնում են վիճելի հարցեր, թե որքանով են պրակտիկ հոգեբանները հաշվի առնում այս կամ այն տեսությունը կամ հայեցակետը, ինչ սանդղակներ են կիրառվում մեկնաբանման ժամանակ, ինչպես են համադրվում տարբեր մեթոդիկաներ: Նմանատիպ տեղեկատվությունը կարևոր է ուսուցման ակադեմիական կուրսերի համար, որոնց ընթացքում ապագա հոգեբաններին սովորեցնում են զգուշորեն ընտրել և կիրառել պրոյեկտիվ թեստեր, մշակել թեստային փաթեթներ և վերլուծել ստացված արդյունքները: Անավարտ նախադասությունների անցկացման չափանիշներին ծանոթանալու նպատակով մի խումբ հոգեբանների հետ անցկացվել են բազմաթիվ հետազոտություն-

[110] Նույն տեղում, էջ 448-449:

ներ, որոնք դուրս են բերել հետևյալ բնութագրիչները՝ թեստի անվանումը, հեղինակները, առաջին քննարկման ժամանակաշրջանը, հիմնավորման տեսությունը, նպատակը, մարդկանց խումբը, որի համար մշակվել է այդ թեստը, մասնիկների քանակը, ենթասանդղակների քանակը, հուսալիությունը, վալիդությունը և այլ անհրաժեշտ տեղեկություններ[111]:

Լայնածավալ վերլուծությունը ցույց տվեց, որ ամենապահանջվածը Ռոտերի անավարտ նախադասությունների թեստն է, որը նա մշակել է համահեղինակների հետ 1992 թվականին բոլոր տարիքային խմբերի համար: Դիտարկված 15 թեստերից այն եղել է այն հնգյակի մեջ, որոնք ունեն հեղինակային իրավունք: Թեստը տրամադրում են միայն ներկրողների միջոցով, այն վճարովի է (Directory of Test Publishers and Test Distributors): Նշվում է, որ անավարտ նախադասությունների լրացման թերթիկը չի կարելի պատճենել. պրակտիկ հոգեբանները այդ թեստը պետք է պատվիրեն ներկայացուցչից: Այն չունի հարցեր, որոնք կվերաբերեն երիտասարդ այցելուներին, ծեր մարդկանց կամ այցելուների, ովքեր պատկանում են մշակութային տարբեր ավանդույթների: Ամեն դեպքում, հետազոտողները պետք է թեստի անցկացումից առաջ մշակեն տեղացիների համար չափանիշներ, որպեսզի դրանք վերլուծելու հնարավորություն ունենան: Տեսական հետազոտության հիման վրա մշակվել են ցուցումներ ակադեմիական հաստատություններում դասավանդողների համար, որոնց համապատասխան՝ ուսանողները պետք է ստանան «անավարտ նախադասություններ» թեստերի մեծ պաշար և

---

111 ***Holaday M., Smith D. A., Sherry A.*** Sentence completion tests: a review of the literature and results of a survey of members of the society for personality assessment/Journal of personality assessment, 74(3), pp. 371–383.

դրանցից ընտրեն նրանք, որոնք ունեն այցելուի տարիքին, հոգեբանական առանձնահատկություններին և մշակութային միջավայրին համապատասխան տեսական հիմքեր[112]:

Պրոյեկտիվ թեստերի անցկացման տեխնիկաների ուսուցման գործընթացում կարևոր հանգամանք է համարվում դրանց մոդիֆիկացիայի և ենթասանդղակների առանձնացման խնդիրը: Առաջին հերթին, ըստ միջազգային չափանիշների, պետք է ստանալ հեղինակի կամ ներկայացուցչի համաձայնությունը: Երկրորդ, պետք է նախապես զգալի աշխատանք կատարել թեստերի առաջադրանքների և դրանց մեկնաբանման չափորոշիչների հոգեչափական հարմարեցման ուղղությամբ: Պետք է նաև հաշվի առնել այն պահանջները, որոնք քննարկվել են նախորդ հետազոտություններում՝ տարիք, սեռ, ազգային և մշակութային ավանդույթներ, սոցիալական կարգավիճակ և այլ իրավիճակային պահանջներ:

Փորձարարական հետազոտություններից մեկում կիրառվել է Ռոզենցվեյգի թեստի կրճատ տարբերակը, որի նպատակն էր ապացուցել ֆիզկուլտուրայի և սպորտային տարբեր միջոցառումների դրական ազդեցությունը ուսանողների հուզական վիճակի վրա: Միաժամանակ ենթադրվում էր, որ ֆիզկուլտուրայի ժամաքանակի կրճատումը կհանգեցնի անվստահության, անհամբերության և հաճախակի ագրեսիվ ռեակցիաների:

Աշխատանքում կիրառվել է «Ռոզենցվեյգի ֆրուստրացիայի նկատմամբ տոլերանտություն» թեստի մոդիֆիկացված տարբերակը, որը ներառում է 6 սոցիալական իրավիճակներ՝ ներկայացված համապատասխան նկարի տեսքով: Փորձարկվողների

[112] Նույն տեղում, էջ 381:

երեք տարբեր խմբերի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել զգալի տարբերություններ և որպես հետևություն ընդգծվել է ֆիզկուլտուրայի կարևորությունը ինքնակառավարման ձևավորման և հիասթափությունների նվազեցման գործում[113]:

Կլինիկական հոգեբանության շրջանակում մշակվել է ևս մեկ տարածված և պահանջարկ ունեցող թեստ, որը չափում է մանկահասակների և դեռահասների մտավոր զարգացման մակարդակը: Հերթական կլինիկական հետազոտության մեջ հուզական խանգարման բացահայտման ընթացքում փորձարկվել է «Նկարի՛ր մարդ» (Draw-A-Person, Machover, 1948) թեստի վալիդության աստիճանը:

Հեղինակն ապացուցել է, որ թեստի արդյունքներն օգնում են տարիքային հապաղման կանխատեսումներ կատարել (6-12 տարեկան) և վարքային գործառութավորման մեջ փոփոխություններ մտցնել: Լրացուցիչ դիագնոստիկ տեղեկություն ստանալու համար օգտագործվել են ծնողների և ուսուցիչների կողմից տրամադրված տվյալները երեխաների վարքային և հուզական ռեակցիաների վերաբերյալ: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՆՄԱ (Draw-A-Person: Sped) մեթոդիկայի ցուցանիշները համարվում են վարքային խանգարումների ինտերնալիզացիան կանխատեսող կարևոր գործոն[114]:

---

[113] ***Lupu E.*** The Importance of Physical Education Lessons for The Formation of Self-Control and The Decrease of The Reaction to Frustration of Students (The Rosenzweig Projective Test)// Procedia - Social and Behavioral Sciences, N 159, 2014, pp. 273-277.

[114] ***Matto H. C.*** Investigating the validity of the Draw-A-Person: screening procedure for emotional disturbance: a measurement validation study with high-risk youth / Psychological Assessment, 2002, Vol. 14, No. 2, pp. 221–225.

Արդյունքում, ՆԿԱ մեթոդիկան երաշխավորվել է ներառել ուսումնական ծրագիր: Թեստավորումը տևում է 10 րոպե և բավականին ինֆորմատիվ է համարվում: Թեստի վալիդացման հետազոտությունները շարունակելու կարիք կա: Ամեն դեպքում, այդ հետազոտությունը ենթադրում է, որ ՆԿԱՐ-ը կարևոր է և էմպիրիկ տեսանկյունից նշանակալի տեղեկություն կարող է տալ երեխաների վարքային խանգարումների մասին, ինչն օգտագործվում է երեխաների հոգեբանական ծառայություններում կլինիկական խնդիրները լուծելիս[115]:

Անձի ուսումնասիրման պրոյեկտիվ մոտեցման առաջացման և զարգացման պատմական փուլերի վերլուծությունը թույլ է տալիս խոսել պրոյեկտիվ մեթոդի երեք աղբյուրների հոգեվերլուծության, հոլիստիկ հոգեբանության և «Նոր հայացքի» (կամ «New Look») փորձարարական հետազոտությունների մասին[116]: Տվյալ պնդումն առավել ընդունելի է մասնավորապես հոգեվերլուծական մոտեցման համար, առանձին դեպքերում կլինիկական հետազոտություններում, հոգեթերապիայում և անհատական հոգեբանական խորհրդատվության մեջ, քանի որ տվյալ դեպքերում սուբյեկտի պրոյեկտիվ հոգեդիագնոստիկան լրացվում է փորձարկվողի մեկնաբանություններով և հոգեբանի նպատակային դիտումով: Որոշ դեպքերում հոգեդիագնոստիկայի պրոյեկտիվ տեխնիկաներին հարում է հոլիստիկ մոտեցումը, որի գաղափարը հաստատում է անձին՝ որպես համակարգ ուսումնասիրելու անհրաժեշտությունը, համակարգ, որի ամեն մասնիկ փոխկա-

---

[115] Նույն տեղում, էջ 224:

[116] ***Шляпникова И. А.,*** Проективные методы психодиагностики. Учебное пособие / Под ред. Е. Л. Солдатовой. - Челябинск, Изд-во ЮУрГУ, 2005 / http://window. edu.ru/catalog/pdf2txt/011/73011/51232?p_page=1

պակցված է: «New Look»-ի փորձարարական հետազոտությունները պրոյեկտիվ մեթոդիկաներ են ներմուծել «վերահսկողություն» և «կոգնիտիվ ոճ» կատեգորիաների նոր բացատրություններ, միաժամանակ՝ ընկալման գործընթացը դիտարկել են որպես դրդիչներին վերաբերող ընտրողականություն[117]:

Ե.Դոցենկոն և Մ.Բոգդանովան առաջարկում են հոգեդիագնոստիկ մեթոդների ընտրության և համադրման գործընթացի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին անվանել «սիբլինգային», որը թարգմանաբար նշանակում է «եղբայրական»: Նշված հեղինակների հիմնական եզրակացությունը վերաբերում է հարցարանի, սեմանտիկ և պրոյեկտիվ մեթոդիկաների համակցված օգտագործման հիմնավորմանը, որը հոգեբանական դիագնոստիկայի համար բացում է որոշակի հեռանկարներ:

Հոդվածում մատնանշվում է այն, որ «սիբլինգային փաթեթը» ներառում է տիպով և կազմման ձևով տարբեր թեստեր, որոնք համաձայնեցված չափում են հոգեկան իրականությունից միակ հիմքով առանձնացված մի հատված: Այն հնարավորություն է տալիս ինչպես համաձայնեցված մեկնաբանման, այնպես էլ՝ մեկնաբանման ըստ առանձին թեստերի, հետազոտվող առարկայի (աշխարհի պատկերի) այն մակարդակի վրա, որին համապատասխանում է տվյալ թեստը[118]:

---

117 http://psylib.org.ua/books/beloo01/txt05.htm ***Белова О. В.,*** Общая психодиагностика / методические указания, Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996

118 ***Доценко Е. Л., Богданова М. В.***, «Сиблинговые» методы психодиагностики. / Вестник Тюменского государственного университета. Социально-экономические и правовые исследования, 2013, № 9, - с. 169-177.

Ժամանակակից հոգեբանության մեջ նման մոտեցումն ունի հեռանկարներ, քանի որ բազմամյա փորձը ցույց է տվել տարբեր կառուցվածքներ, տեսակներ և մեկնաբանման չափանիշներ ունեցող թեստերի համակցման արդյունավետությունը: Մենք առաջարկում ենք հիմնվել ինտեգրալ մոտեցման վրա, որը հիմնված է Վիլբերդ Քենի՝ բոլոր մակարդակները և բաժինները ներառող մոդելի վրա (All Quadrants, all Levels -AQAL)[119]: Այս հավաքումը շատ հակիրճ հարաբերվում է մեր առաջարկած «համակցված անավարտ նկարներ» թեստի մոտեցմանը, այն դիտարկում է բոլոր բաժինները, մակարդակները, շերտերը և տիպերը (all-quadrants, levels, lines, states, and all-types): Բոլոր բաղադրիչների օգտագործումը ընդլայնում է հնարավորությունները ինչպես հոգեդիագնոստիկայում, այնպես էլ հոգեթերապիայում:

Այս ամենը ցույց է տալիս, որ ներկայումս անձի հոգեբանության հետազոտական աշխատանքներում ավելի տարածված են դառնում ինտեգրալ հոգեբանության դիտարկումները, այսինքն՝ հոգեբանության այսպես կոչված ընդհանուր մոտեցումը, որը ձգտում է միավորել հոգեբանական տարբեր տեսություններ, աշխատություններ: Ինտեգրալ հոգեբանությունը, առանձնացնելով գիտակցության ինը կամ տասը ընդհանուր մակարդակներ, բացի այդ, ներառում է հոգեբանության զարգացման և էվոլյուցիոն հոգեբանության բացահայտումները, խորքային հոգեբանության և կոգնիտիվ գիտությունները, տրանսպերսոնալ հոգեբանության և առեղծվածային տարբեր գիտությունների համակարգը, որը ոչ ինտեգրատիվ աշխարհայացքների շրջանակներում կարևոր ուղ-

[119] ***Wilber, Ken*** "AQAL Glossary,""Introduction to Integral Theory and Practice: IOS Basic and the AQAL Map," Vol. 1, No. 3. Retrieved on Jan. 7, 2010.

դություն է[120]: Հոգեթերապիայում տեխնիկական էկլեկտիզմի ջատագով Ջ. Նոկրոսը մշակել է ուղղություն, որի համաձայն, վերաբերմունքը այցելուի նկատմամբ հիմնվում է մի քանի տրանսդիագնոստիկ գործառույթների վրա, ներառյալ՝ փոփոխությունների փուլը, ռեակտիվ դիմադրության մակարդակը, մշակույթը և նախընտրությունները[121]: Այսպիսի գիտական մոտեցումը համակարգային մոտեցման հետ ունի ընդհանուր սահմաններ, ինչը թույլ է տալիս բարձրացնել պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի հուսալիության և հավաստիության արդյունքները: Իսկ համակարգային մոտեցման առավելություններն ապացուցված են բազմաթիվ հետազոտություններով: «Experimental Psychology» հայտնի գրքում ասվում է այն մասին, որ համակարգային մոտեցումը մեծ ներդրում ունի փորձարարական հոգեբանության ձեռքբերումներում և խոստանում է առավել արդյունավետ արդյունքներ հետագա հետազոտություններում[122]: Հետևաբար, պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի դիրքերի ամրապնդման մասին կարելի է խոսել հոգեբանության միջառարկայական տարածման շրջանակներում, այսինքն՝ անձի տեսությունների գիտական տարբեր ասպեկտները հույզերի հոգեբանության, կոգնիտիվ հոգեբանության, անգիտակցական հոգեբանության և նույնիսկ սոցիալական հոգեբանության մեջ ներգրավելու համատեքստում:

---

[120] ***Уилбер К.,*** Интегральная психология: Сознание, Дух, Психология, Терапия. – М.: ООО «Издательство АСТ»., 2004, - с. 77-78.
[121] ***Norcross J. C.,*** A primer on psychotherapy integration. In J.C. Norcross & M.R. Goldfried (Eds.), Handbook of Psychotherapy Integration, 2nd ed., pp. 3–23.
[122] ***Weiner I. B., Healy A. F., Proctor R. W.,*** Handbook of Psychology, Volume 4, Experimental Psychology, 2nd Edition, 2012. - 784 p.


փորձարարական հետազոտություն
պրոյեկտիվ մեթոդներ, թեստեր

# 6. ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության սույն հատվածում վերլուծվում են պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի մեթոդիկաների զարգացմանը վերաբերող միտումները, որոնք անհրաժեշտ է գործածել ոչ միայն հետազոտական և դիագնոստիկ, այլև ուսումնական նպատակներով: Վերլուծված են սկզբունքները, որոնց վրա հիմնվում է դասավանդման մեթոդիկան, հատկապես՝ թե որ գիտակարգերի շրջանակներում է անհրաժեշտ դիտարկել պրոյեկտիվ թեստերը:

Արդի ժամանակներում մշտապես առաջանում են «պրոյեկտիվ հոգեբանության» տեսական, մեթոդաբանական և կիրառական հիմքերի, դրանց հայեցակարգային սկզբունքների, ինչպես նաև հոգեբան-ուսանողներին դրանք դասավանդելու մասին հիմնահարցեր: Վիճահարույց են պրոյեկտիվ դիագնոստիկայի մեթոդների զարգացման միտումները ուրվագծելու, փորձարարական հոգեբանության պահանջներին համապատասխանելու, տարբեր հոգեբանական գիտակարգեր դասավանդելու գործընթացում դրանց կիրառության անհրաժեշտության մասին հիմնահարցերը:

Պրոյեկտիվ հոգեբանության առավել հանգամանալից տեսական վերլուծություն իրականացվել է Ջ. Մուրեյի, Չ.Պետերսոնի, Լ. Բելլակայի, Հ. Մոլիշի, Լ. Էբթայի, Ի.Վայների և այլոց գիտական հրապարակումներում, որոնցից շատերը թարգմանվել են ռուսերեն: Գիտական այդ ձեռնարկները կիրառվում են հոգեբանների համալսարանական կրթության գործընթացում և են-

թադրում են պարտադիր որակավորման պահանջներ, որոնցից են պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի վերաբերյալ գիտելիքներն ու գործնական հմտությունները:

Հոգեբան-ախտորոշողը միաժամանակ պետք է օժտված լինի մասնագիտական ինտուիցիայով՝ գնահատելու անձի հոգեկան վիճակի, վախերի, ցանկությունների, մղումների, ներքին կոնֆլիկտների, իմաստների և կոգնիտիվ ոճի առանձնահատկությունների մասին «քողարկված» ազդակները: Այս նրբերանգները համընդհանուր են և բնորոշ հոգեդիագնոստիկայի մեջ պրոյեկտիվ մոտեցմանը: Սրանք իրենց հերթին վեր են հանում պրոյեկտիվ թեստերը դասավանդելու մեթոդիկայի հիմնահարցը, որն ընդգրկված է հոգեբանության բոլոր ֆակուլտետների հոգեդիագնոստիկա առարկայի ծրագրերում (օր. անգլ.՝ Psychological Assessment Methods[123]):

Հոգեդիագնոստիկայի պրոյեկտիվ տեխնիկաների կայացման մեթոդաբանական հիմնահարցերը վերաբերում են հոգեդինամիկ հեռանկարի առանձնահատկություններին, որոնք պայմանավորված են մի շարք հարցերով՝ կապված արձագանքելու տեսակներով, չափորոշմամբ և լեզվով: Ամեն ինչ հանգեցվում է հետազոտության որակական մեթոդաբանության սկզբունքին, որը հնարավորություն է տալիս բացահայտելու ճանաչողական գործունեության և վարքի սուբյեկտիվ պատճառները[124]:

---

[123] ***Noronha A. P.*** Ribeiro de Castro N. & others. Contents and Methods of Psychological Assessment Teaching: a Study Involving Professors // Paidéia jan.-abr. 2013, Brasil, Vol. 23, No. 54, 129-139.; Psychology Techniques - Program Evaluation // Published in: Health & Medicine, Technology, Education.; Psychological Assessment. The assessment of personality variables. // http://psychology.jrank.org/pages/46/Assessment-Psychological.html

[124] ***Molish H. B.*** Projective Methodologies//Annual Review of Psychology, 1972, Vol.

Վերլուծությունը ցույց է տվել, որ պրոյեկտիվ հոգեբանության մեթոդաբանական ասպեկտների մեկնաբանություններից մեկում այն հակադրվում է բիհևորալ հայեցակարգին և համարվում է «լուրջ ապստամբություն» տեսական հոգեբանության հիմնական ուղղությունների դեմ, որոնց իրականում պարտական է: Հոգեբանության մեջ պրոյեկտիվ հայացքը խիստ տարբերվում է ամերիկյան բիհևորիալ ավանդույթից, որը մինչ օրս ժամանակակից տեսական հոգեբանությունը համալրող հարուստ աղբյուրներից է[125]: Հակադրելով հոգեվերլուծողների, հոգեբույժների և փորձարարական հոգեբանության կողմնակիցների մոտեցումները՝ աշխատության հեղինակը հանգում է եզրակացության, որ այդ ամենը նշանակալի չափով նպաստել է փորձարարական հոգեպաթոլոգիայի առաջընթացին:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ պրոյեկցիան միաժամանակ ունի ազդեցության գործառույթ, այսպես կոչված՝ գիտակցության սիմվոլիկ վերափոխում, իմաստային և հուզական ազդեցություն, տեխնիկաներ, որոնք հատուկ նշանակություն ունեն կիրառական հոգեբանության մեջ և լայնորեն գործածվում են քաղաքական բանավեճերում, գովազդում, իմիջաբանության, մարքեթինգի մեջ և այլն:

Այս յուրահատկությունն անհրաժեշտ է առանձին դիտարկել նշված առարկայական գիտակարգերի ծրագրերը կազմելիս: Հետևաբար անհրաժեշտ է պրոյեկտիվ տեխնիկաների մասին ուսանողներին տեղեկացնել հոգեբանության տարբեր բաժիննե-

23: 577-614.

[125] ***Беллак Л., Эбт Л.,*** Проективная психология / Пер. с англ. - 2-е изд., сокр., испр. - М.: Психотерапия, 2010. - с. 30.

րի հետազոտության մեթոդների հատվածում, հատկապես փորձարարական հոգեբանության շրջանակներում:

Հոգեբանության դասավանդման մեթոդիկայի ձեռնարկներում նշվում է, որ հոգեբանության դասավանդման մեթոդիկայի հիմքը ուսուցման, ուսումնական գործունեության և զարգացնող ուսուցման հոգեբանական տեսություններն են, որոնք բացահայտում են ուսանողների ստեղծագործական մտածողության ձևավորման, ինչպես նաև գիտելիքների յուրացման կառուցակարգերը և ուսուցման ակտիվ մեթոդները, որոնք կիրառվում են մանկավարժական փորձի մեջ[126]:

Լուծում պահանջող հիմնահարցերից է ուսանողների շրջանում ձևավորել անձի հոգեբանական մշակույթի մակարդակն ախտորոշելու մեթոդիկաներ ընտրելու և մշակելու կարողություն: Սակայն չի հստակեցվում, թե մեթոդների կոնկրետ որ խումբն է անհրաժեշտ դասավանդել և որ առարկաների շրջանակներում:

Մեկ այլ ձեռնարկում շեշտադրվում է, որ ուսանող-հոգեբանը պետք է ունենա արդյունքների, ուսումնասիրվող երևույթների վերլուծության և դիտարկվող հոգեբանական երևույթների տեսական մեկնաբանության որոշակի մակարդակ՝ սարքերով աշխատելու, անկետավորման, թեստավորման, զրույցի և հարցազրույցի պարզագույն մեթոդների ուսուցում լաբորատոր և գործնական պարապմունքներին[127]: Ձեռնարկի հատվածներից մեկում հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ հոգեբանության՝ որպես կիրառական գիտության դասավանդման առանձնահատ-

---

[126] ***Якубовская Л. П.,*** Методика преподавания психологии: Учебное пособие. Интернет-ресурс. - 28 с. // http://www.twirpx.com/file/118499/

[127] ***Окулич Н. А.,*** Учебно-методический комплекс по учебной дисциплине «Методика преподавания психологии» для специальности 1-23 01.04 Психология / Брест: БрГУ, 2014. – 224 с.

կություններն ընդգրկում են գիտակարգերի լայն շառավիղ. դրանք են՝ մանկավարժական մասնագիտությունների համար տարիքային, մանկավարժական և բժշկական հոգեբանության, սոցիալական հոգեբանության, կառավարման հոգեբանության, գովազդի հոգեբանության, կառավարման, մարքեթինգի ոլորտում աշխատանքի հոգեբանության, իրավաբանների համար՝ իրավաբանական, բժշկական և սոցիալական հոգեբանության դասավանդման մեթոդական առանձնահատկությունները[128]: Այս պնդումն առավել հիմնավորված կլիներ, եթե մատնանշվեին հետազոտության և դիագնոստիկայի այն կոնկրետ մեթոդները, որոնք այդ դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել:

Այս և այլ պատճառներ մատնանշում են, որ այսօր արդիական են այն հարցերը, թե ինչպիսի՞ սկզբունքների վրա պետք է հենվի դասավանդման մեթոդիկան, ո՞ր գիտակարգերի շրջանակում է անհրաժեշտ դիտարկել պրոյեկտիվ թեստերը, և դրանցից որո՞նք է անհրաժեշտ ներառել ուսումնական ծրագրում, ո՞ր սկզբունքների հիման վրա սովորեցնել տարբեր մեթոդիկաների հարաբերակցության հարցը:

Տարբեր բնույթի ախտորոշիչ մեթոդիկաների հարաբերակցության հիմնահարցին նվիրված հետազոտություններից մեր ուշադրությանն արժանացել է Ե. Դոցենկոյի հոդվածը, ով համահեղինակների հետ առաջ է քաշել «սիբլինգ» սկզբունքը: Այս եզրույթն ընտրվել է՝ հավանաբար նկատի ունենալով թեստերի համաձայնեցվածության բարձր մակարդակը, քանի որ այն բառացի նշանակում է հարազատ քույր և եղբայր (անգլ.՝ «sibling»): Հեղինակների հետազոտության հիմնական եզրակացությունը վե-

[128] Նույն տեղում, էջ 13:

րաբերում է հարցարանների, սեմանտիկ և պրոյեկտիվ մեթոդիկաների զուգորդված կիրառությանը, որը բացահայտում է հոգեբանական դիագնոստիկայի համար որոշակի հեռանկարներ: Հոդվածում նշված է, որ սիբլինգային փաթեթը ներառում է տարբեր բնույթի և կառուցվածքի թեստեր, որոնք համաձայնեցված չափում են միանման հիմքով առանձնացված հոգեկան իրողությունը: Դրանք ունեն ինչպես համաձայնեցված մեկնաբանության, այնպես էլ յուրաքանչյուր թեստի առանձին մեկնաբանության հնարավորություն այն մակարդակի համապատասխանությամբ, որի նկատմամբ զգայուն է թեստը[129]:

Մենք հակված ենք ընդունելու այն մոտեցումը, ըստ որի՝ հոգեդիագնոստիկայի պրոյեկտիվ մեթոդները նպատակահարմար է դիտարկել հոգեբանական գնահատման այլ մեթոդների հետ համալիր, ինչը թույլ է տալիս ստանալ հոգեկան երևույթների մասին ամբողջական պատկեր և համեմատել տարբեր բնույթի տվյալներ: Այդ առումով ուշագրավ է Գ. Ւ. Օլպորտի դիտարկումը դիագնոստիկայի մասին, ըստ որի՝ նորմալ, համարժեք հարմարված, հստակ ուղղվածություն ունեցող սուբյեկտը կարող է արձագանքել պրոյեկտիվ մեթոդներին երկակի. Կա՛մ նա տալիս է նյութ, որը նույնական է գիտակցական հաշվետվությանը, կա՛մ ոչ մի կերպ չի դրսևորում իր գերիշխող մոտիվները:

Պրոյեկտիվ թեստավորումը հատուկ նշանակություն է ստանում այն ժամանակ, երբ պրոյեկտիվ արձագանքներում հայտնաբերվում է հուզական հագեցած նյութ. այն հակադրվում է գի-

[129] ***Доценко Е. Л., Богданова М. В.***, «Сиблинговые» методы психодиагностики. / Вестник Тюменского государственного университета. Социально-экономические и правовые исследования, 2013, № 9, - с. 169-177.

տակցական հաշվետվություններին[130]: Տվյալ դեպքում տեղին է այն եզրակացությունը, որ պրոյեկտիվ մեթոդները պետք չէ նշանակել միայն համաձայն հոգեդինամիկ մոտեցման սկզբունքի և հետազոտություններում սահմանափակվել միայն դրանցով: Դրանով իսկ կարելի է խուսափել միակողմանիությունից և հետազոտական աշխատանքում արտեֆակտներից (արհեստականորեն ստեղծված փորձագիտական արդյունք): Այնուհետև ընդգծվում է, որ փորձարկված և հանգամանորեն մշակված պրոյեկտիվ որոշ մեթոդներ իրականում հուսալի են և նշանակալի մակարդակում՝ հավաստի:

Պրոյեկտիվ մեթոդիկաների երկարատև կիրառության (օր՝ ԹԱԹ, Ռոզենցվեյգ, Ռորշախ և Սոնդի) արդյունքների վերլուծության հիման վրա թյուր եզրակացություն է կատարվել, թե բոլոր պրոյեկտիվ տեխնիկաները լայն առումով անհուսալի են և բժշկական ու հետազոտական փորձաքննության համար ոչ պիտանի[131]:

Այլ դեպքերում պրոյեկտիվ մեթոդների նորմատիվ սանդղակների բացակայության հարցը փոխհատուցվում է կրկնակի խթանիչ նյութի և փորձարկվողի լրացուցիչ ինքնահաշվետվությունների հաշվին: Այդպիսի որակներ հատուկ են Վարտեգի, Տորենսի, Ռոզենցվայգի, Լյուշերի մեթոդիկաներին, որոնք ունեն մի շարք առավելություններ՝ օպերատիվություն, տարիքային լայն միջակայք, սոցիալապես ցանկալի արձագանքների բացակայություն: Մեթոդիկաների այս խմբերի միջոցով ստացված

---

[130] ***Беллак Л., Эбт Л.,*** Проективная психология / Пер. с англ. - 2-е изд., сокр., испр. - М.: Психотерапия, 2010. - с. 64.

[131] ***Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.,*** The Scientific Status of Projective Techniques / Psychological science in the public interest. Vol. 1, N 2, 2000. p. 53.

թեստավորման արդյունքները ենթարկվում են վիճակագրական վերլուծության, քանի որ ունեն կառուցվածք և որոշակի օբյեկտիվություն՝ վերը նշված չափորոշիչների հաշվին:

Թ. Տորենսն առաջարկել է պրոյեկտիվ մեթոդների կիրառման բազմակողմանի մոտեցում, որը հատկապես վերաբերում է նկարչական-լրացման տեսակի թեստերին: Դրանք մասնավորապես կարող են ունենալ հետևյալ նպատակները՝

- հասկանալ մարդու հոգեկանի բարձրագույն մակարդակները, դրա զարգացումը և գործառությունը,
- բացահայտել անհատական ուսուցման արդյունավետ միջոցները,
- բացահայտել վերականգնողական ու թերապևտիկ ծրագրերի ուղիները,
- գնահատել կրթական, ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական ծրագրերի ազդեցությունը,
- իրազեկ լինել անձի թաքնված հնարավորություններին:

Այս խմբի պրոյեկտիվ թեստերի ներուժը հստակ ձևակերպված է և ի ցույց է դնում դրանց կիրառման հիմնական տարբերակները:

Այսօր անձի հոգեբանության մասին հետազոտական աշխատանքներում առավել հանրահայտ է ինտեգրալ հոգեբանությունը, այն է՝ հոգեբանության նկատմամբ ընդհանուր մոտեցումը, որը ձգտում է միավորել տարբեր հոգեբանական տեսությունների զարգացումները: Ինտեգրալ հոգեբանությունը, առանձնացնելով գիտակցության մի քանի ընդհանուր մակարդակներ, ներառում է զարգացման և էվոլյուցիոն հոգեբանության, խորքային հոգեբանության և կոգնիտիվ գիտությունների, տրանսպերսոնալ հոգեբանության և առեղծվածային տարբեր

ուսմունքների բացահայտումները: Այն կարևոր ուղղություն է ոչ ինտեգրատիվ աշխարհայացքների շրջանակներում[132]:

Նման գիտական մոտեցումը առավել բազմակողմանի է և աղերսներ ունի համալիր մոտեցման հետ, որը թույլ է տալիս բարձրացնել պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի արդյունքների հուսալիությունը և հավաստիության մակարդակը: Իսկ համալիր մոտեցման առավելությունները ապացուցված են բազմաթիվ հետազոտություններով և մեր հետազոտական երկարամյա փորձով:

Հետևաբար՝ պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայի կարգավիճակը բարձրացնելու մասին անհրաժեշտ է խոսել հենց հոգեբանության շրջանակում միջգիտակարգային լեզվով, որն ընդգրկում է անձի տարբեր տեսությունների, հույզերի հոգեբանության, կոգնիտիվ հոգեբանության, անգիտակցականի հոգեբանության, նույնիսկ սոցիալական հոգեբանության գիտական տեսակետները:

Պրոյեկտիվ մեթոդների կարգավիճակի լիարժեք վերլուծության և դրանց ուսուցման առանձնահատկությունները բացահայտելու համար հոգեբանության տարբեր ոլորտներում վերլուծվել են ուսումնական ձեռնարկներ և կիրառական ուղղվածությամբ բազմաթիվ հրապարակումներ (Գ. Աբրամովա, Լ. Բելակ, Կ. Մաhովեր, Լ. Բուրլաչուկ, Գ. Մուզիչենկո, Կ. Գուրեվիչ):

Կառավարման հոգեբանության մեջ և այնպիսի հարակից ոլորտներում, ինչպիսիք են կազմակերպչական հոգեբանությունը, բիզնեսի հոգեբանությունը և այլն, պրոյեկտիվ մեթոդները կիրառվում են երկար տարիներ տարաբնույթ խնդիրներ լուծելու

---

132 ***Уилбер К.,*** Интегральная психология: Сознание, Дух, Психология, Терапия. – М.: ООО «Издательство АСТ»., 2004, - с. 77-78.

համար: Պրոյեկտիվ թեստերը լայն կիրառություն են ստացել ներխմբային երևույթների, դրանց զարգացման դինամիկայի մասին սոցիալ-հոգեբանական հետազոտություններում և մասնագիտական գործունեության ընթացքում մասնագիտական պիտանելիության, անձնային և հուզական դրսևորումները գնահատելու համար:

Այսպես, Տ. Կաբաչենկոյի կառավարման հոգեբանությանը վերաբերող գրքում միայն մեկ անգամ է հիշատակվում պրոյեկտիվ մեթոդների մասին: Նշվում է, որ ղեկավարին արտաքին և հոգեբանական չափանիշների հիման վրա գնահատելու համար առաջնային տեղեկությունը կարող է ստացվել մի քանի ճանապարհով՝ փաստաթղթերի վերլուծություն, փորձագիտական միջոցներ, հոգեախտորոշիչ հատուկ գործիքներ (թեստեր, հարցարաններ, պրոյեկտիվ մեթոդներ)[133]:

Համանման մոտեցում է առկա նաև կազմակերպչական սոցիալական հոգեբանության մեջ: Անձնակազմի գնահատման և ընտրության բաժնում նախապատվություն է տրվում դիագնոստիկայի քանակական, որակական և համակցված մեթոդներին: Բավականին հիմնավորված է մեթոդների մեծ մասը համալիր ձևով գործածելու միտքը: Ղեկավարի՝ սթրեսային իրադրության մեջ գործելու ընդունակությունը չափելուն է ուղղված «Գործարար իրադրություններ» թեստը՝ կազմված Ն. Գ. Խիտրովի կողմից Ռոզենցվեյգի թեստի համանմանությամբ (մարդու վարքի ուսումնասիրությունը ֆրուստրացիայի իրավիճակում)[134]:

---

[133] ***Кабаченко Т. С.***, Психология управления: Учебн. пособие. М.: Педагогическое общество России, 2000. – с. 190.

[134] ***Почебут Л. Г., Чикер В. А.,*** Организационная социальная психология: Учебное пособие. - СПб.: Изд-во «Речь», 2002. - с. 183-187.

Մեկ այլ դեպքում պրոյեկտիվ թեստերը ներառված են դըրդապատճառների և հետաքրքրությունների ստանդարտ խմբում՝ անկետավորման, հարցման, հարցազրույցի, զրույցի, ասոցիատիվ գիտափորձի, սեմանտիկ դիֆերենցիալի, ֆոկուս խմբի մեթոդի և սոցիոդրամայի մեջ: Այնուհետև իրավացիորեն նշվում է, որ մոտիվացիայի որակավորված մասնագետը նույնիսկ գնորդներին դիտելու նվազագույն օրինակներից կարող է քաղել շատ հետաքրքիր և թաքնված տեղեկություն: Այդ նպատակով խորհուրդ է տրվում գործածել չկառուցված հարցազրույց (այսինքն՝ փորձարկվողն ասում է այն, ինչ իրեն հետաքրքրում է), տարբեր պրոյեկտիվ մեթոդիկաներ, որոնց նպատակն է երերուն դարձնել սպառողների «ես»-ի պաշտպանությունը[135]:

Որոշ ձեռնարկներում նկատվում է պրոյեկտիվ թեստերից հրաժարվելու միտում, որը կարող է հիմնավորվել մի քանի պատճառներով: Առաջինը թեստերի մեծամասնության օբյեկտիվության աստիճանն է: Երկրորդը մեկնաբանության հետ կապված խնդիրներն են: Երրորդ՝ կառավարման հոգեբանության մեջ ընտրության գործընթացում հնարավոր են բողոքներ գնահատման չափանիշների վերաբերյալ:

Այսպես, օրինակ, պրոյեկցիան հիշատակվում է անձնակազմի ընտրության գործընթացի վրա ազդեցություն գործելու համատեքստում, ըստ որի՝ հարցազրույցի ընթացքում սխալներ առաջանում են պրոյեկցիայի պատճառով, որի հետևանքով գնահատվողին վերագրվում են գնահատողի զգացմունքները և մտքերը[136]:

---

[135] ***Никифоров Г. С.,*** Психология менеджмента: Учебник для вузов / 2-е изд., доп. и перераб. - СПб.: Питер, 2004. - 639 с.

[136] ***Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,*** Психология управления.

Ա. Բանդուրկայի՝ համահեղինակների հետ իրականացրած կազմակերպչական կոնֆլիկտների վերլուծության մասում դիտարկվում է ռացիոնալիզացիա երևույթը, որտեղ ինքնարդարացման մեխանիզմը կապվում է պրոյեկցիայի հետ: Մարդը չի զգում իր մեղքը կամ բացասական գիծը, բայց տեսնում է դա ուրիշների մեջ, այսինքն՝ նա դրանք պրոյեկտում է[137]: Սույն գրքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անձի գծերի հետազոտության մեթոդների բաժնում չի հիշատակվում պրոյեկտիվ մեթոդների մասին, որոնք բավականին հանրահայտ են ինչպես հետազոտական փորձի, այնպես էլ կադրերի ընտրության դեպքում (օրինակ՝ Ռոզենցվեյգի թեստը):

Հոգեբանների թերահավատությունը պրոյեկտիվ տեխնիկաների նկատմամբ պայմանավորված է դրանց հոգեչափական գործիքների հնարավորություններով, մասնավորապես՝ այդ թեստերի ոչ հուսալիությամբ և վալիդությամբ, ինչպես նաև արդյունքների անկայունությամբ, տվյալների վերլուծության հակասականությամբ և սուբյեկտիվությամբ:

Հավանաբար հենց դա է պատճառը, որ անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների դիագնոստիկայի մեթոդիկաներին նվիրված բաժնում 12 թեստերից միայն մեկն է պրոյեկտիվ. անձի կյանքի արժեքների թեստ (Must - Պ. Ն. Իվանովա, Ե. Ֆ. Կոլոբովա): Այս մեթոդիկան վերբալ պրոյեկտիվ թեստ է և թույլ է տալիս որոշել կյանքի 15 արժեքներ դպրոցական և հետդպրոցական տարիքի անձանց մոտ: Դժվար է հասկանալ նաև, թե ինչ են նկատի ունեցել հեղինակները, երբ տարբերակել

- Харьков: ООО. "Фортуна-пресс", 1998. - с. 252.

[137] Նույն տեղում, էջ 324:

են դպրոցական և հետ դպրոցական տարիքները («послешкольного» возраста)[138]։

Պրոյեկտիվ մեթոդիկաների տարիքային յուրահատկությանը առնչվող ևս մի հետաքրքիր առանձնահատկության մասին մատնանշվում է կիրառական հոգեբանության դասագրքում։ Տարբեր տարիքի երեխաների հետ պրոյեկտիվ մեթոդիկաներ անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխաներին բնորոշ տպավորվողականությունը։ Ծնողները մանկական ստեղծագործություններն ուսումնասիրելիս նկատել են, որ նույնիսկ ֆիլմ դիտելուց հետո երեխաները նկարում են դրա բովանդակությանը համապատասխան։

Անհատական տարբերությունները և ախտորոշվող փոփոխականները գնահատող հոգեչափական պահանջները վերաբերում են թեստերի տարբեր խմբերին, տվյալ դեպքում՝ առավել շատ օբյեկտիվ թեստերին, անձնային հարցարաններին, առավել քիչ՝ պրոյեկտիվ տեխնիկաներին[139]։

Հետաքրքրական են գովազդի ոլորտին վերաբերող գործնական բնույթի սոցիալ-հոգեբանական հետազոտությունները։ Հեղինակը գրում է, որ սովորաբար պրոյեկտիվ մեթոդները կիրառվում են ապրանքն անձնավորելու համար, ասել է թե՝ դրա տարբեր պիտակների վերագրվում են մարդկային որակներ, արտահայտություններ և արարքներ։ Դա հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու, թե տվյալ պիտակը ինչ ոճի, կենսակերպի, հասարակական արժեքների, բնակչության որ

[138] ***Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.,*** Социально-психологическая диагностика развития личности и малых групп. - М.: Изд-во Института Психотерапии. 2002. - 490 с.

[139] ***Болотова А. К., Макарова И. В.,*** Прикладная психология: Учебник для вузов. - М., Аспект Пресс, 2001.– с. 31 и 56.

դասի հետ է կապվում, և դրա ձևակերպման, գովազդի համար ինչը պետք է փոխել՝ առավել գրավիչ դարձնելու մարդկանց այն խմբի համար, որին դա հասցեագրված է[140]:

Ի տարբերություն դիտարկված ոլորտների՝ փորձարարական հոգեբանության մեջ առանձնահատուկ ուշադրություն են արժանանում պրոյեկտիվ մեթոդների համախմբումը և տեսական հիմնավորումը: Ա. Բատիրշինան փորձարարական հոգեբանության հոդվածներից մեկում դիտարկելով անձի կամային որակների ուսումնասիրության արժեքաիմաստային մոտեցումը, առանձնացնում է երկու ուղղություն: Դրանցից մեկում պրոյեկտիվ մեթոդները մտնում են թեստերի կազմ, որը տալիս է ռելեվանտ տեղեկություն հետազոտվող իրողության մասին (Ռոտերի սուբյեկտիվ հսկողության մակարդակը, Յու. Կուլի գործողության կողմնորոշումը)[141]: Հետևաբար, ներառելով պրոյեկտիվ թեստերը ախտորոշիչ համալիր՝ ընդլայնվում է անձի մասին առավել բովանդակային և հանգամանալից տեղեկություն կազմելու հնարավորությունը[142]:

Գտնում ենք, որ համալսարանական կրթության դասագրքերում անթույլատրելի է այս կամ այն եզրույթի ոչ լիարժեք նկարագրությունը: Դա վերաբերում է նշված դասագրքի եզրույթների բառարանին, որը պարունակում է ոչ պարզ, երկիմաստ խթանիչ

---

[140] ***Жуков Ю. М., Петровская Л. А., Соловьева О. В.,*** Введение в практическую социальную психологию / 3-е, исправленное изд. -М.: Смысл, 1999. – 377 с.

[141] ***Батыршина А. Р.*** К истории экспериментального исследования воли в отечественной психологии / Экспериментальная психология в России: традиции и перспективы / Под ред. В. А. Барабанщикова. – М.: Изд-во «Институт психологии РАН», 2010. - с. 27-32.

[142] ***Болотова А. К., Макарова И. В.,*** Прикладная психология: Учебник для вузов. - М., Аспект Пресс, 2001. – с. 288.

նյութեր, որոնք նախատեսված են անձի ուսումնասիրության համար:

Հուզական-աֆեկտիվ ոլորտում կարելի է գործածել նկարային տարբեր մեթոդիկաներ, օրինակ՝ «Նկարի՛ր մարդ», «Ընտանիքի նկար» կամ «Տուն, ծառ, մարդ», որոնց միջոցով լավ ախտորոշվում է տագնապայնությունը և ագրեսիվ միտումների առկայությունը: Երկիմաստ նկարներն ունեն պրոյեկտիվ հագեցվածություն, և շատ կարևոր է գնահատել այն, թե ինչպիսի հուզական իմաստ է վերագրում դրան երեխան, ցույց է տալիս նրա վերաբերմունքը, նորմալ կամ տրավմացնող շփման փորձը[143]:

Կարևոր է նաև երեխայի և ծնողների միջանձնային փոխհարաբերությունների ուսումնասիրումը: Ընտանիքում փոխհարաբերությունները գնահատելու համար կարելի է գործածել «Ընտանիքի նկար» թեստը: Այդ դեպքում խորհուրդ չի տրվում բացատրել, թե ինչ է նշանակում «ընտանիք»: Իսկ եթե ծագում են ինչ նկարելու վերաբերյալ հարցեր, անհրաժեշտ է ևս մեկ անգամ կրկնել հրահանգը: Անհրաժեշտ է խուսափել ուղիղ հարցերից, չպարտադրել պատասխան, քանի որ դա կարող է հրահրել տագնապ, պաշտպանական ռեակցիաներ: Հաճախ օգտակար են պրոյեկտիվ հարցերը, օրինակ՝ «Եթե թռչունի փոխարեն նկարված լիներ մարդ, ապա ո՞վ կլիներ», «Ո՞վ կհաղթեր քո և եղբորդ միջև մրցույթում», «Ո՞ւմ մայրիկը կկանչի իր հետ»: Կարելի է երեխային առաջադրել լուծման ընտրության վեց իրադրություն. դրանցից երեքը պետք է բացահայտեն ընտանիքի ան-

---

143 ***Рогов Е. И.,*** Настольная книга практического психолога: Учеб. пособие: В 2 кн. 2-е изд., перераб. и доп. -М.: Гума-нит. изд. центр ВЛАДОС, 1999. Кн. 1: Система работы психолога с детьми разного возраста, 1999. - с. 39-42.

դամների հանդեպ բացասական վերաբերմունքը, երեքը՝ դրական[144]:

Անձնային ոլորտում առկա թերությունները բացահայտելու համար կարելի է գործածել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են զրույցը, Ս. Բուդասի ինքնագնահատման մեթոդիկան, անավարտ նախադասությունների մեթոդը, համապատասխան թեմաներով շարադրությունը, պրոյեկտիվ մեթոդիկաները (օրինակ՝ Լյուշերի գունային թեստը, «Գոյություն չունեցող կենդանի» պրոյեկտիվ մեթոդիկան):

«Ինքնանկար» պրոյեկտիվ մեթոդիկան (Ե. Ս. Ռոմանով, Ս. Ֆ. Պոտյոմկին) կարող է լիովին գործածվել նաև բարձր դասարանցիների դիագնոստիկայի համար: Այստեղ, ինչպես հեղինակային տարբերակում, առաջադրվում է թեստի երկու մեկնաբանություն՝ Ռ. Բեռնսի և սեփականը՝ բնօրինակը[145]: Այնուհետև ներկայացված է բավական հանրահայտ, ներկայացնելու կարիք չունեցող մեթոդիկա՝ «Գոյություն չունեցող կենդանի»: Ձեռնարկի հեղինակները նշում են, որ այն կարելի է գործածել բարձր դասարանցիներին ուսումնասիրելու համար: Սակայն, ինչպես մենք տեսնում ենք Գ. Մուզիչենկոյի հիմնարար մենագրությունից, «Գոյություն չունեցող կենդանի» մեթոդիկան բավական բազմակողմանի է և կարող է մեծերի հետ աշխատանքում տեղեկատվական լինել[146]:

Հետաքրքական է հումորային արտահայտությունների թեստը, որը նախատեսված է մոտիվացիոն ոլորտն ուսումնասիրելու

---

[144] Նույն տեղում, էջ 50:

[145] Նույն տեղում, էջ 272 և 286:

[146] Տե՛ս ***Музыченко Г. Ф.,*** Проективная методика "Несуществующее животное". СПб.: Речь, 2012. – 560 с.:

համար: Այն առաջարկված է Ա. Գ. Շմելևի և Բ. Ս. Բաբինայի կողմից: Դա անձի մոտիվացիոն ոլորտը ախտորոշող յուրօրինակ համալիր մեթոդիկա է, որը միավորում է ստանդարտացված չափող թեստի և անհատականացված պրոյեկտիվ տեխնիկայի առավելությունները: Ըստ հեղինակների՝ սույն մեթոդիկայի համապատասխան խնդիրն ամենից առաջ ախտորոշումն է՝ անհատական հոգեբանական խորհրդատվության և շտկման նպատակով[147]:

Հետևաբար, կարող ենք ընդգծել, որ միտում է նկատվում ներկայացնելու ինչպես ավանդական, այնպես էլ քիչ կիրառվող պրոյեկտիվ թեստերը: Հետաքրքիր է Ե. Ի. Ռոգովի՝ մեծահասակների հետ աշխատելու համար հոգեբաններին հասցեագրված «Տուն, ծառ, մարդ» թեստը՝ ներկայացված երկրորդ գլխում: Պրակտիկ հոգեբանի բառարանում վերբալ շփման առանձնահատկությունների վերլուծությունը դիտարկված է որպես պրոյեկտիվ մեթոդիկա, որը էքսպրեսիան ուսումնասիրելու մեթոդիկաների խմբին է պատկանում, իսկ ձեռագրի վերլուծությունը՝ էքսպրեսիան ուսումնասիրելու մեթոդիկաներին, իսկ պրոյեկտիվ խաղը՝ կատարսիսի մեթոդին[148]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեստավորման պրոյեկտիվ մեթոդները դասավանդելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել դրանց ոչ միայն ախտորոշիչ, այլև թերապևտիկ հնարավորությունները, իսկ հոգեբանության տարբեր ոլորտնե-

---

[147] ***Рогов Е. И.,*** Настольная книга практического психолога: Учеб. пособие: В 2 кн. 2-е изд., перераб. и доп. -М.: Гума-нит. изд. центр ВЛАДОС, 1999. Кн. 1: Система работы психолога с детьми разного возраста, 1999. - с. 319-320.

[148] ***Головин С. Ю.,*** Словарь практического психолога - Минск: Харвест, 1997. – 800 с.

րի ուսումնասիրության շրջանակներում պրոյեկտիվ թեստերը կիրառելիս ցուցաբերել ընտրողական մոտեցում:



# 7. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

(«Համակցված անավարտ նկարներ» - «ՀԱՆ», ռուսերեն-Комбинированные незавершённые рисунки - «КНР», անգլերեն - Combined incomplete pictures - «CIP»)

Հոգեդիագնոստիկայի և հոգեշտկման ոլորտում հուսալի և վալիդ պրոյեկտիվ մեթոդիկայի ստեղծումը հիմնված է մի շարք նախապայմանների բավարարման և համադրման վրա: Յուրաքանչյուր մեթոդիկայի առանձին հատված՝ լինի դա հրահանգավորում, խթանող/խթանիչ նյութ, վերլուծության և մեկնաբանման չափանիշներ, պետք է ստեղծված և մշակված լինի տեսական և փորձարարական հիմնավորման եղանակով:

Լրացման մեթոդները՝ որպես պրոյեկտիվ մեթոդների տարատեսակ, թույլ են տալիս խթանիչ նյութի լրացման, ամբողջականացման շնորհիվ հետազոտվողի մասին ստանալ ընդգրկուն տեղեկություն[149]: Այդ խնդիրը կարևորվում են երեք հիմնական տեսանկյուններից՝ ապահովել պրոյեկտիվ մեթոդների համապատասխան հավաստիությունը, կրիմինալիստիկական և կլինիկական փորձաքննության գործընթացում կիրառել հատուկ ընտրված թեստեր և ապագա հոգեբաններին ներկայացնել խիստ պահանջներ այդ մեթոդների ուսուցման ժամանակ[150]:

[149] ***Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.*** The Scientific Status of Projective Techniques / Psychological science in the public interest. Vol. 1, N 2, 2000. p. 27-66.

[150] ***Lindzey G.*** (1959). On the classification of projective techniques. Psychologi- cal Bulletin, 56, pp. 158-168.

«Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի կառուցման ու հիմքերի մշակման գործընթացը կրում էր փորձարկման, ինդուկտիվ և դեդուկտիվ վերլուծական բազմափուլ մեթոդի բնույթ:

Որպես «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի ստեղծման գործընթացի կարևոր փուլ՝ մեր առջև խնդիր է դրվել ուսումնասիրել նկարչական- լրացման պրոյեկտիվ մեթոդների առավել տարածված, հիմնավորված և կիրառելի տեսակները, դուրս բերել դրանց տեսական հիմնավորումները, նմանությունները, տարբերությունները, մշակման սկզբունքները և զուգահեռներ տանել մշակվող մեթոդիկայում ակնկալվող առանձնահատկությունների և գնահատվող հատկանիշների հետ:

Նախ անհրաժեշտ է դիտարկել այն պրոյեկտիվ առանձնահատկությունները, որոնք հոգեբանները կիրառում են նկարների, անավարտ տարրերի և գրաֆիկական պատկերների վերլուծության ժամանակ:

Գ. Ռիդը դուրս է բերել երեխայի անձը նկարագրող հոգեբանական տիպերի (մշակված Կ. Յունգի կողմից) և դրանք գեղարվեստորեն արտահայտելու ձևերի միջև կապը: Աղյուսակում նկարագրված են այդ կապերի առանձնահատկությունները:

Վերլուծելով մեծ թվով նկարներ՝ նկարիչ Գ. Ռիդն առաջարկել է ութ հիմնական տիպ, որոնք հետագայում համակցվել են անձի յունգյան տիպաբանությանը (տե՛ս աղյուսակ 5):

**Աղյուսակ 5**

Մանկական նկարների 8 տիպերի բնութագրերը

| Հոգեբանական տիպ | | Նկարի ձև |
|---|---|---|
| Մտածող | էքստրավերտ ինտրովերտ | Թվարկող, օրգանական |
| Զգացող (հուզական) | էքստրավերտ ինտրովերտ | Դեկորատիվ, երևակայական |
| Զգացող (սենսորային) | էքստրավերտ ինտրովերտ | Արտահայտիչ, տակտիլ (շոշափող) |
| Ինտուիտիվ | էքստրավերտ ինտրովերտ | Ռիթմիկ, կառուցվածքային |

- Արտահայտիչ նկար (իմպրեսիոնիստական, էքսպրեսիվ) – բնութագրում է զգայությունների, տպավորությունների անմիջական արտահայտման միջավայրը փոխանցելու ձգտումը:
- Տակտիլ (շոշափող) – բնութագրում է ինչ-որ ներքին, հաճախ ցավոտ զգայությունների պատկերումը (օրինակ՝ գլխացավ, ականջի ցավ և այլն):
- Ռիթմիկ նկար – դրանում գլխավոր նշանակություն է ստանում շարժման պատկերումը (օրինակ՝ մեքենան ընթանում է, մարդը վազում է և այլն):
- Կառուցվածքային նկար – ուշադրությունն ուղղված է ամբողջականի կառուցվածքը փոխանցելուն. դա կարող է լինել ինչպես վերացական պատկեր, այնպես էլ բարդ միասնություն, օրինակ՝ քաղաքային հրապարակ:
- Օրգանական (բնական) – հեղինակը նախապատվությու-

նը տալիս է բնական պատկերներին՝ ձգտելով ներկայացնել, օրինակ, ծառերը, մարդուն, կենդանիներին և այլն:

- Թվարկող նկար – դրանում պատկերվում են տարբեր օբյեկտներ, որոնք դժվար է ինչ-որ կերպ միմյանց կապել. հաճախ կարող են լինել առանձին դետալներ և առարկաներ:
- Դեկորատիվ նկար – փոխանցում է գույնի զգացողություն, պատկերված են ինչ-որ նախշեր, զարդեր և այլն:
- Երևակայական նկար – պարունակում է գրքից կամ սեփական ֆանտազիայից վերցված ինչ-որ սյուժե, առանձին կերպար և այլն[151]:

Է. Վարտեգի տեսությունը, որի վրա հիմնված է նկարների և դրանց տարրերի մեկնաբանությունը, էկլեկտիկ ձևով (հուն.՝ ἐκλέγω՝ ընտրել բառից, նշանակում է տարբեր ոճերի, գաղափարների, հայացքների միակցում) կապում է հոգեվերլուծության, վարքաբանության և բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի դրույթները[152]: «WZT» նկարային թեստի մեթոդոլոգիական հիմնավորումը և կիրառման հիմնական մասերը դիտարկված են հեղինակի մենագրությունում[153], իսկ դրա վալի-

---

[151] ***Шапарь В. Б., Шапарь О. В.,*** Практическая психология. Проективные методики. / Ростов н/Д: Феникс, 2006. - с. 96-97.

[152] Նույն տեղում, էջ 338:

[153] ***Wartegg, E.,*** (1953). Schichtdiagnostik: Der Zeichentest (WZT): Einfu¨hrung in die experimentelle Graphoskopie [Layered diagnosis: The Drawing Test (WZT): An introduction to experimental graphoscopy]. Goettingen, Germany: Verlag Fuer Psychologie.

դության և հուսալիության հիմնախնդիրն ուսումնասիրված է ժամանակակից բազմաթիվ աշխատանքներում[154]:

**Աղյուսակ 6.**

Գրաֆիկական նշանների և դրանց հատկությունների մեկնաբանման համակարգ

| **1.Կետ** | **2. Ալիքաձև գիծ** |
|---|---|
| Փափկություն | Հուզականություն |
| Համահունչ բնույթ | Լարվածություն |
| Աննկատություն | Գրգռվածություն |
| Անորոշություն | |
| **3. Մեծացող շտրիխներ** | **4. Քառակուսի** |
| Ուժգնացման սկզբունք | Անսահունություն, կարծրություն |
| Մեծացում | Մթություն |
| Մասնատում | Ծանրություն |
| **5. Երկայնակի և լայնակի շտրիխներ** | **6. Հորիզոնական և ուղղահայաց շտրիխներ** |
| Շարժընթացություն | Միացում |
| Թռիչք | Միահյուսում և բաժանում |
| | Պատկերների անջատում |
| **7. Կետերից բաղկացած կիսաշրջան** | **8. Շրջանային սեգմենտ** |
| Հուզական զգայունություն | Կլորություն |
| Արձագանքող-պատրաստակամ | Պարփակվածություն |
| Մասնատում | |

[154] ***Grønnerød J. S., Grønnerød C.,*** The Wartegg Zeichen Test: A Literature Overview and a Meta-Analysis of Reliability and Validity // Psychological Assessment/American Psychological Association 2012, Vol. 24, No. 2, 476–489.; ***Калиненко В. К.,*** Рисуночный тест Вартегга: [сб.: перевод с нем.]. – М.: Смысл, 2011. - 239 с.




**Նկար 5.** Է. Վարտեգի նկարային թեստի խթանիչ նյութ

Հոգեբանական գրականության մեջ կան բավականին շատ աշխատանքներ, որոնցում դիտարկված է պրոյեկտիվ թեստերի վալիդության խնդիրը: Դրանցում, որպես կանոն, պրոյեկտիվ մեթոդները համակցվում են ստանդարտացված թեստերի, զրույցի և դիտման մեթոդի հետ: Այդ աշխատանքներից մեկում Վարտեգի նկարային թեստով ստացված տագնապայնության և ամաչկոտության ցուցիչները համեմատվել են դիտման և ստանդարտացված թեստերի նույն ցուցիչների հետ (Բասս Դարկի, Ամեն և Տեմպլ): Ստացվել են նույնական ցուցիչների կոռելյացիոն մեծ կապեր, որոնք վկայում են նկարային թեստի խաչաձև վալիդության մասին (տե՛ս նկ. 6-ում):




**Նկար 6.** Վարտեգի թեստի և այլ մեթոդների ցուցիչների կորելյացիոն կապերի գծապատկեր[155]

Հաջորդը Ջ. Կրոուտի՝ նշանի մշակման կամ հստակեցման թեստն է (Symbol Elaboration Test, J. Krout, 1950), որի արդյունքների մեկնաբանությունը իրականացվում է նկարի առանձնահատկությունների, բովանդակության և հետազոտվողի բառային հաշվետվության հիման վրա: Ընդ որում՝ որոշիչ դերը տրվում է բովանդակության վերլուծությանը, որը բացահայտվում է պատկերային նշանների սիմվոլիկայի հետ կապի միջոցով: Օրինակ, առաջին խթանը՝ «կանացի սկիզբը», վերցված է Զ. Ֆրեյդի տեսությունից, որը ենթադրում է, որ ուռուցիկ պատկերները զուգորդվում են կանացիության հետ: Չորրորդ խթանը՝ «տղամար-

[155] http://systempsychology.ru/journal/2013_8/154 ***Валявко С. М., Князев К. Е., Емельянова А. А.,*** О возможности диагностики некоторых особенностей личностного развития дошкольников с речевым дизонтогенезом рисуночными тестами/Системная психология и социология, 2013, N 8.

դու սկիզբն» է: Յոթերորդը, ինչպես ենթադրվում է, խորհրդանշում է կանացի և տղամարդու խորհրդանիշների փոխհարաբերության առանձնահատկությունները[156]: Ջ. Կրոուտի թեստի խթանիչ նյութը ներառում է հետևյալ ունիվերսալ խորհրդանիշները՝ 1) կիսաշրջան, 2) երկու կիսակոր մակերեսներ՝ տեղակայված դեմ դիմաց, 3) զույգ կիսաուռուցիկ մակերեսներ, որից մեկը փոքր է և տեղակայված է մյուսի մեջ, 4) մեկ ուղիղ գիծ (ուղղահայաց), 5) խաչվող ուղիղ գծեր, 6) ուղղահայաց գիծ՝ «ծածկված» կիսակոր պատկերով, 7) երկու ուղիղ գծեր և կիսակոր պատկեր 8) նշան՝ U տառի տեսքով, ներքևում փոքր բաժանում, 9) ամորֆ շտրիխավորում, 10) Սպիտակ տարածության մեջ բաշխված նշաններ՝ շրջված V տառի տեսքով, 11) Սղոցանման գիծ («կայծակ»): Թեստի հեղինակը պնդում է, որ յուրաքանչյուր մարդու հակազդումը «ընդհանրացված կամ ունիվերսալ խորհրդանիշներին», ինչպես նաև պակաս տարածված գրգռիչներին, ներառում է այնպիսի տարրեր, որոնք յուրահատուկ և անհատական են[157]:

Է. Պ. Թորենսի թեստի ռուսական տարբերակը տարիներ առաջ առաջարկվել էր ընդհանուր և մանկավարժական հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտի մասնագետների կողմից[158]: Պ. Թորրենսի ստեղծարարության թեստի գործիքը մի այնպիսի առաջադրանք է, որի հրահանգն է «ավարտել նկա-

---

[156] ***Шапарь В. Б., Шапарь О. В.,*** Практическая психология. Проективные методики. / Ростов н/Д: Феникс, 2006. - с. 374.

[157] ***Krout, Johanna,*** Symbol Elaboration Test (S.E.T.): The reliability and validity of a new projective technique. Psychological Monographs: General and Applied, Vol 64(4), 1950, i-67. / http://dx.doi.org/10.1037/h0093594

[158] ***Матюшкин А. М.,*** (ред.) Фигурная форма А теста творческого мышления Э. Торранса, адаптированного сотрудниками Общесоюзного центра "Творческая одаренность" НИИ ОПП АПН СССР. - М.: Изд-во НИИ ОПП АПН СССР, 1990.

րը»: Ստեղծագործական ընդունակությունների դերը ստեղծագործությունը հասկանալու, կանխատեսելու և զարգացման մեջ բացատրելու նպատակով Պ. Թորենսը ներկայացրել է մասնակի խաչվող 3 շրջաններից բաղկացած մոդել, որոնք համապատասխանում են ստեղծագործական ընդունակություններին, ստեղծագործական հմտություններին և ստեղծագործական մոտիվացիային[159]: Ստեղծագործական ձեռքբերումների բարձր մակարդակ կարելի է համարել միայն այդ երեք գործոնների համընկնման դեպքում: Որոշ հեղինակների կարծիքով՝ Պ. Թորրենսի թեստի նման պրոյեկտիվ մեթոդիկաները հիմնված են տրված պայմաններում կանխատեսվող լուծումների որոնման վրա և նախատեսված են գնահատել տարամետ և համեմետ մտածողության առանձնահատկությունները[160]: Սկզբնական շրջանում թեստը նախատեսված է եղել 5-6 տ. երեխաների, ինչպես նաև ավելի մեծ՝ 17-20 տարիքային խմբի ստեղծարարության ուսումնասիրման համար: Ախտորոշումը նախատեսում էր ստեղծագործական գործընթացների ուսումնասիրում, որը արտացոլում էր դրանց բարդությունը: Այդ մեթոդի հիմքում ընկած են տարամետ մտածողության (Դ. Գիլֆորդ), փոխակերպման և զուգորդման, նոր գաղափարների ստեղծման և մշակման ընդունակությունները:

Պ. Թորրենսը (1966, 1974) առաջարկել է թեստի կիրառման հետևյալ տեսակները.

---

[159] ***Калимуллин А. М., Габдулхаков В. Ф.,*** Креативность и интеллект в образовательном процессе вуза: проблемы и перспективы развития/ Образование и саморазвитие. 2014. № 4 (42), - с. 3-9

[160] ***Серавин А. И.,*** Исследование творчества. СПб.: «Копи-Парк», 2005. - 2000 с. /http://azps.ru/polpsy/lib/seravintvor/index.html.

- Մարդկային բանականության, դրա գործարկման և զարգացման հասկացում,
- Անհատական ուսուցման արդյունավետ հիմքերի հայտնաբերում,
- Վերականգնող և հոգեթերապևտիկ ծրագրերի արդյունավետության բացահայտում,
- Կրթական ծրագրերի, նյութերի, ուսումնական պլանների և ուսուցման մեթոդիկաների ազդեցության գնահատում,
- Երեխայի թաքնված հնարավորությունների մասին իրազեկվածություն:



**Նկար 8.** Պ. Թորրենսի մեթոդիկայի 2-րդ՝ «Ավարտել նկարը» ենթաթեստի խթանիչ նյութ

Թեստի մեկնաբանման ժամանակ միավորների հաշվարկը գնահատում է հետևյալ ցուցանիշները.

– մեկնաբանվող, նշանակալի և խթաններին համապատասխանող պատասխանների քանակի սահունություն,
– պատասխանների ոլորտների բազմազանության ունիվերսալություն,
– անսպասելի, անսովոր, յուրահատուկ կամ վիճակագրական առումով քիչ հանդիպող պատասխանների ինքնատիպություն,
– մշակում՝ նկարին համապատասխան մասնիկների ավելացման ճանապարհով[161]:

Թեստի այս և այլ բնութագրերը նկարագրված են Կ. Գ. Կիմի հրահանգում, որը հղում է կատարում Պ. Թորրենսի հետազոտություններին[162]:

Բացի գիտական և տեսական հիմնավորում ունեցող և զուտ մասնագիտական աղբյուրներից՝ համացանցում աստիճանաբար տարածում են գտնում տարբեր էլեկտրոնային մեթոդիկաներ, որոնցում նշված չէ գիտական աղբյուրը և հիմնավորման սկզբունքները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դրանց լայն տարածումը, կարելի է անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Պրոյեկտիվ մեթոդների շարքում լայն տարածում ունի անձի «դիմանկար» նկարչական թեստը: Հրահանգավորման համաձայն՝ հետազոտվողը պետք է թուղթը բաժանի 6 մասի, այնուհետև ամեն վանդակում նկարի մեկական պատկեր՝ շրջան, քա-

---

[161] ***Kim, Kyung-Hee*** (2002), Critique on the Torrance Tests of Creative Thinking/ http://kyunghee.myweb.uga.edu/portfolio/review%20of%20ttct.htm

[162] Տե՛ս ***Torrance, E. P.*** (1998). The Torrance Tests of Creative Thinking Norms-Technical Manual Figural (Streamlined) Forms A & B. Bensenville, IL: Scholastic Testing Service.

ռակուսի, խաչ, եռանկյունի, աստիճաններ և 45°-ով շրջված «з» տառ՝ այնպես, որ ստացվի ⌒⌒ նշանը: Դրանից հետո, օգտագործելով այդ պատկերները, հետազոտվողը պետք է շարունակի պատկերը՝ նկարելով ինչ-որ հստակ, ճանաչելի ոչ թե վերացական բան: Ամբողջացնել ամեն նկարը՝ յուրաքանչյուրի տակ գրելով մեկական ածական:

Թեստի ապակոդավորումն իրականացվում է հետևյալ եղանակով.

- Շրջան և համապատասխան ածական պարունակող նկար - պատկերացում, որը մարդն ունի իր մասին,
- Քառակուսի և համապատասխան ածական պարունակող նկար - մարդու վերաբերմունք իր ընտանիքին,
- Աստիճաններ և համապատասխան ածական պարունակող նկար – մարդու վերաբերմունք կյանքին, նաև շրջապատող աշխարհին,
- Խաչ և համապատասխան ածական պարունակող նկար – ինչպես է մարդը պատկերացնում իր հոգևոր աշխարհը,
- Շրջված «з» տառով և համապատասխան ածական պարունակող նկար – վերաբերմունք սիրո նկատմամբ,
- Եռանկյունի և համապատասխան ածական պարունակող նկար – ինչպիսին է շրջապատող մարդկանց վերաբերմունքը իր հանդեպ[163]:

Համացանցում կիրառվող «Համակցված անավարտ նկարների» նմանատիպ թեստերից է «Անձի վեց նրբերանգ»: Այս

[163] Տե՛ս http://v-garmonii-s-soboi.ru/testyi-ponyat-sebya-chtobyi-ponyat-drugogo/risunochnyiy-test-portret-lichnosti/#ixzz4Wc5kb28E

նկարային թեստը կիրառվում է ինչպես մասնագետների, այնպես էլ դիմացինի «ներաշխարհում» կողմնորոշվելու ցանկություն ունեցող անձանց կողմից:

Թեստի հրահանգ. «Վերցրե՛ք գրիչը, տեղակայեք բլանկը (A4 չափի թուղթը) ուղղահայաց՝ ուշադրությունը կենտրոնացնելով միայն տվյալ սեգմենտի վրա, և ցանկալի է առանց պլանավորելու՝ կատարե՛ք առաջադրանքը՝ սկսելով թեստի առաջին սեգմենտից»:

Առաջադրանք. «Թղթի 6 սեգմենտներից յուրաքանչյուրում նկարել ինչ-որ պարզ սեփական նկար («простой собственный рисунок») այնպես, որ Ձեր նկարում օգտագործվի այդ սեգմենտում առկա տարրը: Վերջացնելով առաջին նկարը՝ անցնել երկրորդին, և այդպես՝ մինչև վերջ»:

Այս թեստի առաջադրանքի համապատասխան պետք է նկարել այն, ինչն առաջինն է մտքին գալիս: Դա պետք է լինի հենց նկար (պատկեր), ինչն ինչ-որ բան է նշանակում, և ինչը կարելի է կրճատ անվանել: Նկարը չպետք է լինի ուղղակի երկրաչափական պատկերի տեսքով (դա դիմադրության նշան է և կարող է արտահայտվել ձվաձև, տրամագիծ, ստորակետ և այլ վերացական նկարների միջոցով):

Արդյունքները մեկնաբանվում են ըստ տրված սկզբունքների.

1. մտերիմ մարդկանց հետ հարաբերություններ,
2. այլ մարդկանց հետ հարաբերություններ,
3. սեփական անձի հանդեպ վերաբերմունք,
4. տան պատկերի առկայություն/բացակայություն,
5. հետազոտվողը՝ աշխատանքում և դժվարություններ հաղթահարելիս,

6. հետազոտվողի առաջնային կերպարը սիրո հարցում[164]:




**Նկար 9.** «Անձի վեց նրբերանգներ» թեստի խթանիչ նյութ

Ուսումնասիրելով վերոնշյալ մեթոդիկաների առանձնահատկությունները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Լրացման պրոյեկտիվ մեթոդները հիմնված են հոգեբանական մի շարք ուղղությունների սկզբունքների վրա, որոնք էլ ապահովում են դրանց արդյունավետությունը: Կարելի է առանձնացնել գեշտալտ հոգեբանության հոլիստիկ ընկալման և ավար-

---

[164] Տե՛ս https://www.b17.ru/forum/topic.php?id=54938

տունության ձգտման գաղափարը, որը հետազոտվողին մղում է ավարտելու և լրացնելու տրված խթանիչները՝ տալով դրանց ինչպես կառուցվածքային, այնպես և իմաստային միասնություն[165]: Այս գաղափարը հաստատվել է նաև մեթոդիկայի նախնական փորձարկման ժամանակ, երբ 2 միանման խորհրդանիշ՝ «/ և \» կամ «\ և /», գտնվել են միմյանց հարևան վանդակներում. այս դեպքում հետազոտվողները դրանք դիտարկել են որպես միասնական խորհրդանիշ և պատկերները լրացրել են դրան համապատասխան: Կարևոր է նշել նաև հոգեվերլուծության դերի և ազդեցության մասին. մի կողմից խորհրդանիշների հետ աշխատանքը վերաբերում է իրականության հետ կապող պատկերավոր օղակի, անգիտակցականի աշխատանքը խթանող ազդակների և հոգեբանական դիմադրությունը թուլացնող գործոնների առկայությանը, մյուս կողմից՝ ունիվերսալ խորհրդանիշների նկարագրությունը և մեկնաբանությունը հիմնականում տրված են հոգեդինամիկ մոտեցման աշխատանքներում (Զ. Ֆրեյդ, Կ. Յունգ, Մ. Քլայն, Դ. Վինիքոտ, Մ. Միլներ)[166]:

2. Բոլոր մեթոդիկաներում խթանիչ նյութը մեկ հարթության վրա է պատկերված, սակայն բաղկացած է ոչ թե մեկ, այլ մի քանի մասից: Տրված օրինակներում բլանկը բաժանված էր 6-12 մասերի: Մեր կողմից մշակված մեթոդիկայի վերջնական տարբերակը կազմված է 16 սեգմենտից, ինչը նպատակ ունի ստիմուլների բազմազանության շնորհիվ մեծացնել թեստի հուսալիության մակարդակը և հաշվի առնել ավելի մեծ թվով չափա-

---

[165] ***Eka Roivainen,*** A Brief History of the Wartegg Drawing Test, GESTALT THEORY, © 2009 (ISSN 0170-057 X), Vol. 31, No.1, pp 55-71

[166] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе. Речь, 2007. - 336 с. 19-24

նիշներ: Ուսումնասիրության նախնական տարբերակներում հաշվի են առնվել 9, 12 սեգմենտից բաղկացած նյութեր, սակայն հնարավոր է նկարների քանակը հասցնել 20-ի: Նաև պետք է հաշվի առնել, որ խորհրդանիշների հետ աշխատանքը աստիճանաբար է թուլացնում անձի դիմադրությունը և խթանում անգիտակցական նյութի դուրսբերումը, հետևաբար ազդակների ավելացումն էլ ավելի է մեծացնում հավաստի արդյունքների սպասելիքը:

3. Նմանօրինակ խորհրդանիշները (օրինակ՝ ուռուցիկ մակերեսներ՝ շրջան, կետ, կիսաշրջան) տրված բոլոր դեպքերում տեղադրված են միմյանց չհաջորդող հերթականությամբ:

Հոգեդիագնոստիկ հարցարաններում միևնույն հատկությունը չափող պնդումները տեղադրվում են որոշակի միջարկությամբ, որպեսզի հետազոտվողը չփորձի դրանք կապել որոշակի հատկանիշի հետ և չտա դիրքորոշված պատասխաններ[167]: Նույն սկզբունքով «Անավարտ նկար» թեստում միևնույն թեմատիկ խորհրդանիշները տեղադրված են ոչ հաջորդական, իսկ հաշվի առնելով նաև նախորդ՝ անգիտակցականի աստիճանական ակտիվացման գաղափարը՝ վերջում տեղակայված սեգմենտները վերաբերում են ավելի խոր անգիտակցական և առանցքային թեմաներին (ինչպիսիք են կրոնը և «ես»-ը):

4. Հարկավոր է հաշվի առնել ոչ միայն ավելացված առանձին դետալները, այլև լրացման թեմատիկան, անձի ուղղվածությունը և որոշակի սցենարների միտումը: Ինչպես նկարագրված առաջին՝ Գ. Ռիդի մեթոդիկայում, այնպես էլ «Անավարտ նկար»-ում դուրս են բերվում անձի ուղղվածությունը էքստրավերսիայի

[167] Տե՛ս ***Анастази А.,*** Урбина С.-Психологическое тестирование.-7-ое изд. – СПб.: Питер, 2007. – 688 с:

և ինտրավերսիայի միջոցով, կաղապարային թեմատիկաներից դուրս սցենարների առկայությունը՝ որպես ստեղծարարության ցուցանիշ (ինչպես Պ. Թորրենսի մեթոդիկայում), ինչպես նաև ինքնավերաբերմունքի, դինամիկ վիճակի, սիրո, ագրեսիայի, տագնապի հակվածության և այլ դրսևորումներ, որոնց մեկնաբանությունը հիմնված է ոչ թե որոշակի դետալների, այլ ընդհանուր միտվածության ուսումնասիրության վրա:

5. Նշված ցուցանիշների պրոյեկտիվ բնույթի հետագա մեկնաբանության ժամանակ հնարավոր է, որ վերլուծությունը լիարժեք չհամապատասխանի անձի կայուն գծերին, քանի որ առկա են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական փորձը, մասնագիտությունը և սոցիալ-հոգեբանական այլ ներազդումներ:



*Մի երեխայի երազանքի նկար*

## 8. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՊՐՈՅԵԿՏԻՎ ԹԵՍՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անդրադառնանք «Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ թեստի խթանիչ նյութի, ձևաչափերի, ներկայացման, հրահանգի և մեկնաբանության նկարագրությանը:

Խթանիչ նյութի առանձին մասերի՝ խորհրդանիշների առումով, կարելի է նշել, որ մեր կողմից մշակված մեթոդիկայում պատկերված են առավել հաճախ հանդիպող և ունիվերսալ պատկերներ:

- **Շրջան** – հանդիպում է համարյա բոլոր նույնատիպ մեթոդիկաներում: Այն համարվում է ստեղծագործական գործունեության ամենավաղ տարիքում արտահայտվող պատկեր և կապված է կենսակարևոր երևույթների ընկալման հետ[168]: Շրջանն ունի հնագույն առասպելաբանական հիմք: Այն չունի սկիզբ ու վերջ և նույնն է բոլոր կետերում: Շրջանը միասնականության, կատարելության, լիության, ավարտունության և հավերժության իմաստ է պարունակում, և կարող է խորհրդանշել և՛ կայունության, և՛ դինամիզմի գաղափար: Հաճախ է հանդիպում նաև շրջան՝ կենտրոնում կետ: Դա Տիեզերքի նշանն է և աշխարհի պատկերի պրոյեկցիան: Կենտրոնական կետը խորհրդանշում է բարձունք, որը համակարգում և պահպանում է ամեն ինչ: Այն նաև արևի (աստղագիտական) և ոսկու (ալքիմիական) խորհրդանիշն

[168] ***Дилео Д.,*** Детский рисунок: диагностика и интерпретация.- М.: Апрель Пресс, из. Эксмо, 2002, - с. 8.

է, խորհրդանշում է անընդհատ փոխանակություն և կյանք (բջիջ, ատոմ և այլն)[169]: Ըստ Կ. Յունգի՝ շրջանը խորհրդանշում է հոգեկանի միասնությունը, այսինքն՝ ինքնությունը, որի արտացոլումը մանդալան է[170]:

- **Կետ** - Կետը (կենտրոնը) առեղծվածային պատկերացումներում խորհրդանշում է կյանքի աղբյուրը, արարող էներգիան և սկիզբը: Կետն ուժի կուտակումն է և զուգորդվում է Տիեզերքի արարման հետ (ճառագայթ, պարույր, և այլն): Կետը չունի չափ և միասնությունից անջատված չէ, սակայն այն անհրաժեշտ է ինչ-որ բանին սկիզբ տալու և արտահայտվելու համար: Այն կապված է 1 թվի և դրան վերաբերող ցանկացած երևույթի հետ[171]:
- **Գիծ -** Եթե ուժը, որի նախնական դրսևորումը կետն էր, շարունակում է գործել, ապա առաջանում է առաջին հարթությունը՝ երկարությունը: Քանի որ այն անվերջ է, ուստի նույնպես խորհրդանշում է 1 թիվը, սակայն ֆիզիկական աշխարհում այն միշտ ունի սկզբնական ու վերջնական կետեր և արտահայտվում է հատվածի տեսքով: **Հորիզոնական գիծը** խորհրդանշում է շարժումը դեպի ներս (կանացի սկիզբ, ընկալում)՝ արևմուտքից արևելք, անցյալից ապագա և այլն: Այն հորիզոնն է, որը բաժանում է երկրայինը և երկնայինը: **Ուղղահայաց գիծը** սովորաբար խորհրդանշում է վերևից ներքև շարժումը՝ այսինքն

[169] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе.- Речь, 2007. - с. 314-315.

[170] http://etextread.ru/Book/Read/25578 Карл Густав Юнг и последователи- Человек и его символы

[171] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе. Речь, 2007. - с. 314-315.

երկնքից երկիր ճանապարհը կամ անձի ստեղծումը: Այն նաև նյութական ոլորտի և տղամարդկային սկիզբի խորհրդանիշն է: Որոշ դեպքերում ուղղահայաց գիծը նաև նշանակում է շարժում վերևից ներքև, այսինքն՝ ձգտում հոգևորին[172]: **Ալիքաձև գիծը,** ինչպես ներկայացված է Է. Վարտեգի աշխատանքում, խորհրդանշում է անկայուն և լարված իրավիճակ և լրացման հետևանքով կարող է դառնալ խթան՝ ռեֆլեքսիայի և ռեսուրսների բացահայտման համար[173]:

- **Խաչ -** Եթե հորիզոնական և ուղղահայաց հատվածները միանում են, առաջանում է խաչի պատկեր: Այն քառակիության պատկերն է և որոշ նախաքրիստոնեական սիմվոլիկաներում այն նյութական աշխարհի խորհրդանիշն է՝ իր 4 կողմերով[174]: Որոշ քրիստոնեական աղբյուրներում խաչը տանջանքի խորհրդանիշն է: Այն կարող է նաև դիտարկվել որպես հակադրությունների միացման կետ[175]: Կախված տեղադրությունից՝ այս պատկերը կարող է ընկալվել որպես գումարման, բժշկության կամ քրիստոնեական խորհրդանշան, խաչմերուկ, անհայտության նշան (իքս) և այլն: Հոգդիագնոստիկայի մեջ այն

[172] Տե՛ս նույնը, с. 313-314
[173] Projective teqhniques in personality assessment-edited by A. I. Rabin, NY, 638p, «Springer» Pub. company, p. 403
[174] ***Бауэр В., Дюмонц И., Головин С.,*** Энциклопедия символов/ Пер. С нем. Г. Гаева. -М.: КРОН-ПРЕСС, 2000. – с. 25-26.
[175] ***Потемкина О. Ф., Потемкина Е. В.***, Психологический анализ рисунка и текста. СПб.: Речь, 2006., - с. 319-323.

սովորաբար կապվում է հեղինակության, հոր կերպարի կամ մահվան գաղափարի հետ[176]:

- **Աղեղ** – Ախտորոշիչ և թերապևտիկ գործիքներում ամենահաճախ հանդիպող խորհրդանիշներից է: Քանի որ աղեղը շրջանի մաս է կազմում, այն խորհրդանշում է կենսական ուժ և հոգևոր աղբյուր, սակայն իր «բացության» շնորհիվ այն չի կարող ավարտուն լինել: Աղեղը հիմնականում խորհրդանշում է կանացի սկիզբ, որը ամբողջական դառնալու համար ձգտում է լրացման: Աղեղը պարունակելու, պահպանման խորհրդանիշն է (բաժակ, որը լցվում է): Հակառակ կողմ (ուռուցիկ) շրջված աղեղը ինչ-որ բան չպահպանելու, իներտության և կենդանության բացակայությունն է: **Ուղղահայաց աղեղը** խորհրդանշում է հավասարակշռության մեջ գտնվող երևույթ. այն կարող է պտտվել և դառնալ լիություն ապահովող բաժակ, կամ հակառակը՝ դատարկվել և լինել անկյանք[177]:
- **Աստիճան** – աստիճանն ունի հստակ նշանակված մի քանի իմաստ, որոնք ընդհանուր են տարբեր ազգերի համար. առաջինը կապված է երկրագնդի տարբեր հարթությունների, մասնավորապես երկնքի և երկրի հետ: Հնագույն միֆոլոգիաներում և կրոնական որոշ պատմվածքներում անձի վերելքը երկինք և վայրէջքը երկրի վրա իրականացվում էին աստիճանի միջոցով (բուդդա-

[176] Projective teqhniques in personality assessment-edited by A.I. Rabin, NY, 638p, «Springer» pub. company, p. 496.

[177] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе. Речь, 2007. - с. 315-316.

յականություն, քրիստոնեություն, իսլամ): Մոտենալով առօրյա կյանքին՝ աստիճանը զուգորդվում է էվոլյուցիայի և ինվոլյուցիայի, հաջողության ու ձախողման, զարգացման դինամիկայի և փուլային բնութագրերի հետ[178]:

- **Եռանկյունի** – Ամենաազդեցիկ և ունիվերսալ խորհրդանիշներից է, խորհրդանշում է 3 թիվը: Պատկերներից առաջինն է, որը կապվում է մակերեսի հետ: Հավասարակողմ եռանկյունին խորհրդանշում է ավարտունություն: Վեր ուղղված գագաթով եռանկյունին համարվում է էվոլյուցիայի եռանկյուն. այն կապված է աստվածային, տղամարդկային, հոգևոր և ներդաշնակ վիճակի հետ: Եռանկյունին նաև սիրո, ճշմարտության և իմաստության երրորդությունն է[179]: Ներքև ուղղված գագաթով եռանկյունին ինվոլյուցիայի, քայքայման եռանկյունի է: Այն համարվում է կանացի խորհրդանիշ և կապ ունի լուսնի սիմվոլիկայի հետ: Կախված եռանկյունու դիրքից այն կարող է խորհրդանշել չորս տարերքներից յուրաքանչյուրը[180]:
- **Քառակուսի** – երկրաչափական պատկեր է, որը կապված է 4 թվի հետ: Այն խորհրդանշում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կարգապահությունը, հավասարությունը, ճշմարտությունը, արդարությունը, ազնվությունը և այլն: Քառակուսին մարմնավորում է տարվա 4 եղանակները, աշխարհի 4 տարրերը և կողմերը: Այն

---

[178] Словарь символов и знаков/ Авт.-сост. В. В. Адамчик. М.: АСТ; Мн.: Харвест, 2006. - 240с, с. 100

[179] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе. Речь, 2007. - с. 316

[180] ***Бауэр В., Дюмонц И., Головин С.,*** Энциклопедия символов/ Пер. С нем. Г. Гаева. - М.: КРОН-ПРЕСС, 2000 – с. 36-37.

փակ տարածության կատարյալ տեսակ է և, հետևաբար եղել է բազմաթիվ պաշտամունքային կառույցների հիմք եկեղեցի, բուրգ, պագոդ և այլն), որոնք էլ իրենց հերթին աշխարհի խորհրդանշական պատկերն են: Քառակուսին կարգավորում է օրգանիզմի համակարգերը, հավասարակշռում է բևեռները, կենտրոնացնում է հիմնական կենսական ուժը[181]:

Դիտարկված մոտեցումների և դրանց հիման վրա մշակված պրոյեկտիվ թեստերի վերլուծությունը նախադրյալ դարձավ անավարտ նկարների մոդիֆիկացված տարբերակ ստեղծելու համար: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքները, որոնց շնորհիվ ակնհայտ է դարձել առավել ունիվերսալ, բազմաբովանդակ, ընդգրկուն, օպերատիվ և այլ թեստերի հետ համադրվող մեթոդիկայի մշակման անհրաժեշտությունը: Արդյունքում փորձ կատարվեց համակցման և որոշակի համադրման շնորհիվ ստեղծել նախկինում հայտնի խթանիչ տարրերից և դրանց քանակական ու որակական մեկնաբանություններից տարբերվող հոգեբանական չափանիշների թեստավորման ինքնատիպ հայեցակարգ: «Համակցված անավարտ նկարներ» թեստը հիմնվում է «պրոյեկցիայի» բինար [լատ.՝ *binarius*] նշանակության վրա, այսինքն՝ հոգեվերլուծական (պաշտպանական մեխանիզմների դրսևորում, ինչի միջոցով «ես»-ի համար անընդունելի ներքին մղումները և զգացմունքները վերագրվում են արտաքին օբյեկտին) և ինտեգրալ (հուզական, խոսքային կամ շարժողական դրսևորումներ արտաքինում): Մեթոդիկան միաժամանակ գոր-

---

[181] ***Киселева М. В.,*** Арт-терапия в практической психологии и социальной работе. Речь, 2007. - с. 316-317

ծարկում է տեսողական մոդալությունը (խթանիչ տարրերի ընկալում) և արտահայտվում է մանր մոտորիկայի (նկարչության) միջոցով, ինչը թույլ է տալիս գնահատել ինչպես անձնային, այնպես էլ ռեակտիվ/իրավիճակային կարգի հոգեբանական դրսևորումները (յուրաքանչյուր նկարի ավարտված տարբերակ):

Գրքերում տարբեր հեղինակների ներկայացրած նյութերի[182], նկարների, դրանց մասնիկների և նախկինում մեր կողմից անցկացված թեստերի (փորձարկվողների անհատական գնահատում և մեկնաբանում) վերլուծությունը թույլ է տալիս լրացնել ավարտված նկարների գնահատման չափանիշները և մեկնաբանությունները: Նկարների ընդհանուր բնութագրիչներից դիտարկվել են՝ ընդհանուր տեսքը և սյուժեն, ձևի և չափի համահարաբերակցությունը, քառակուսու մեջ դրա դիրքը, գծերի սեղմվածությունը և հստակությունը, իրատեսական և վերացարկված լինելը, կրկնակի գծերը և առանձնացումը: Նկարներում հանդիպող առանձնահատկությունների գնահատման բնութագրիչները լրացնում են մեկնաբանված վերոնշյալ չափանիշները (տե՛ս նկար 10):

---

182 Տե՛ս ***Маховер К.,*** Проективный рисунок человека. Издательство. Изд. Смысл, М.: 1996.; Тест "Рисунок семьи" / Тейлор К. Психологические тесты и упражнения для детей. Книга для родителей и воспитателей – М., 2005.; ***Венгер А. Л.,*** Психологические рисуночные тесты: Иллюстрированное руководство М.: Владос-пресс, 2003. – 160 с. (см. Приложение 1); ***Лебедева Л. Д., Петровичева Ю. В., Тараканова Н. А.,*** Краткая энциклопедия необычных признаков в проективном рисовании // Школьный психолог. – 2005/ http://psy.1september.ru/articlef.php?ID=2005015028:



Կլորակներ-անկյունները հարթեցնելու ձգտում, կոնֆիկտներից խուսափում, թեթև անձնային ճգնաժամ



Բնության նկար - դրական հուզակա-նություն, լավատեսություն, երջանկության պահանջմունք կամ ձգտում, ջերմության և հոգատարության պակաս:



Արև, լուսին, ծաղիկներ - ինքնամերժում, ալտրուիզմ, այլոց օգնելու պատրաստակամություն:



Աբստրակցիաներ - ստեղծագործական հակվածություններ, նպատակասլացություն, հաջողության ձեռքբերում:



Դեմքեր և սմայլիկներ - հետևողականություն, հոգատարություն սեփական անձի և վիճակի նկատմամբ:



Ընդգծված կիսաշրջաններ և ձվաձև պատկերներ՝ սեռ, սեռական խնդիրներ, կանանց համար - ցանկությունների և մղումների ճնշում, տղամարդկանց համար՝ սեռական անբավարարվածություն և կենտրոնացում:



Նկարներ կետի շուրջ - կենտրոնի պահպանումը և դրա շուրջ կատարված



Նկարում մի քանի ցրված կետեր - էմպատիա, ապրումակցում:



Համաչափություն–կոկիկություն, պեդանտություն, կարգավորվածություն և հաշվենկատություն:



Խաչ և գումարման նշաններ- մեղքի զգացում, անվճռականություն,կրոնական հավատք:



ա. Տերևներով ծառ - էներգիայով լի,



բ. Ծառ առանց տերևների - տխրություն:



Ծաղիկներ - բարություն, երջանկություն:




Աղյուսակներ և շախմատային վանդակներ - փնտրտուք, վարքային մարտավարության որոնում:



Մանր խզբզոցներ - դյուրագրգիռ, խոշոր գծեր-հավասարակշռված:

**Նկար 10.** Առաջին նկարների բնութագրիչների մեկնաբանության օրինակներ

Ի տարբերություն հարցարանների ընդունված մշակման փուլերի՝ պրոյեկտիվ մեթոդիկաները կառուցվում են հետևյալ կերպ.

ա) հետազոտության առարկայի (երևույթի) և օբյեկտի (կոնտինգենտի) ընտրություն,

բ) թեստի տեսակի ընտրություն (թվային, խոսքային, ոչ խոսքային, գրաֆիկական, նկարային, բանավոր, գրավոր),

գ) խթանիչ նյութի տիպի և առաջադրանքների հրահանգների ընտրություն,

դ) առաջադրանքների գնահատում փորձագիտական գնահատման մեթոդի օգնությամբ,

ե) նախնական թեստավորում, էմպիրիկ տվյալների հավաքագրում,

զ) թեստի էմպիրիկ վալիդացում՝ ըստ թեստի և տրված ստանդարտացված թեստերի (որոնց վալիդությունը հայտնի է),

է) թեստի հուսալիության ստուգում (արտաքին և ներքին պատահական գործոնների հանդեպ արդյունքների կայունություն),

ը) կանխատեսական վալիդության սահմանում, այսինքն՝ տեղեկատվություն այն մասին, թե մեթոդիկան ինչ ճշգրտությամբ թույլ կտա դատել չափվող հոգեբանական հատկության մասին չափումից որոշ ժամանակ անց:

Ներկայացված որոշ փուլեր համընկնում են հոգեդիագնոստիկայում թեստային ընդունված մեթոդիկաների մշակման, ստուգման և տեղայնացման պահանջներին[183]:

«Համակցված անավարտ նկարներ» թեստի մշակման ժամանակ հաշվի է առնվել հոգեդիագնոստիկ հետազոտությունների բազմամյա փորձը, և պահպանվել են վերևում տրված փուլերը և պահանջները:

«Համակցված անավարտ նկարներ» («Combined incomplete pictures») մեթոդիկայի մշակման և փորձարկման տարբեր փուլերում կիրառվել են արդեն ստուգված, նաև դրանց փոփոխված տարբերակները: Այս կամ այն խթանիչ տարրերի համադրումը և հաջորդական կիրառումը թույլ են տվել ընտրել մեր նպատակներին առավել համապատասխանող տարբերակները: Ընդ որում՝ հաշվի էին առնվում տարրի իմաստային ծանրաբեռնվածությունը, այլ տարրերի հետ դրանց համադրումը, պրոյեկտիվ իմաստի կրկնողության հնարավորությունը, խթանիչ տարրերի որոշակի

---

[183] Տե՛ս ***Коновалова М. Д.,*** Экспериментальная психология: конспект лекций. Изд-во: Высшее образование, 2009. – 180 с.; ***Никандров В. В., Новочадов В. В.,*** Метод тестирования в психологии. Учебное пособие. Издательство: Речь, 2003. – 39 с.:

քանակի ընտրությունը և համապատասխանությունը մեթոդիկայի ընդհանուր մտահղացմանը:

Հետազոտության հետագա փուլերի առջև դրված են եղել հետևյալ խնդիրները.

1) դուրս բերել գնահատվող չափանիշների որակական բնութագրիչները,
2) մշակել առավել համարժեք հրահանգ, որոշել մեկ նկարին և ամբողջ առաջադրանքին հատկացվող ժամանակը,
3) ստուգել անհատական և խմբային թեստավորման անցկացման մեթոդիկան (ընթացակարգը),
4) դուրս բերել ստանդարտացված մեթոդիկաների համանման ցուցիչների ընդհանուր օրինաչափությունները և կոռելյացիոն կապերը,
5) ստուգել երկու սեռերի համար նախատեսվածության ունիվերսալությունը,
6) ստուգել չափողական համապատասխանության տարիքային չափանիշը,
7) մշակել գնահատվող չափանիշների քանակական գործակիցները,
8) գնահատել հատուկ պրոյեկտիվ դրսևորումների աստիճանը (տարիք, սեռ, մասնագիտություն),
9) հիմնավորել վարիատիվությունը. տարրերի հաջորդականություն, քանակ, խթանիչ նյութի չափ:

«Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի ընդհանուր տեղեկատվական արժեքը բնութագրող հոգեդիագնոստիկ չափանիշներն են.

1. թեստային առաջադրանքը ենթադրում էր ավարտել կի-

սատ նկարներ հանդիսացող տարրերը, տիպը՝ պրոյեկտիվ,

2. մեթոդիկան նախատեսված է տարբեր տարիքային խմբերի անհատական և խմբային թեստավորման համար,
3. խթանիչ նյութի ներկայացման բլանկային ձև (հնարավոր է նաև համակարգչային տարբերակ),
4. տվյալների քանակական և որակական մշակում, բալերը հաշվարկվում են հատուկ ալգորիթմով,
5. թեստային նորմեր մշակված չեն,
6. մեթոդիկան կառուցվել է խթանիչ տարրերով քառակուսիների 9(3x3), 12(3x4), 16(4x4) կամ 20(4x5) տարբեր համադրություններից,
7. մեթոդիկան վերլուծվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն նկարների մեկնաբանությունների տեսքով (խմբային թեստավորման դեպքում՝ գրավոր, անհատականի դեպքում՝ բանավոր), նաև լրացվում է այլ ստանդարտացված թեստերով:

«Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ-գրաֆիկական թեստը մշակվել է մի քանի նմանատիպ պրոյեկտիվ մեթոդիկաների և մասնավորապես «Ավարտել նկարը», Վարտեգի նկարային թեստի և նման այլ մեթոդիկաների սկզբունքների հիման վրա: Ընդ որում՝ կազմվել է անավարտ նկարների նոր հավաքածու, համադրությունների տարբերակ և պատկերների քանակ, ինչը թույլ է տվել ունիվերսալ դարձնել ցուցիչների դիագնոստիկան: Վերջիններս գնահատվում են ոչ թե մեկ, այլ մի քանի նկարների (3 և ավելի) կատարման արդյունքների համադրությամբ: Կենտ քանակը նշանակալիորեն հեշտացնում է գնահա-

տող բալերի ստացումը, այսինքն՝ դրանց գերակայությունը արտահայտված հատկությունների ցրվածության դեպքում:

Դիագնոստիկ ծրագրի շրջանակներում 15 տարվա ընթացքում հետազոտվել է տարբեր սեռի, տարիքի, կրթության և մասնագիտական պատկանելիության ավելի քան 1500 անձ: Տարբեր ընտրանքների հետ կատարված բազմաթիվ գիտափորձերի ընթացքում իրականացվել է համապատասխան դիագնոստիկ մեթոդիկաների համալիր կիրառում: Հավաքածուն բաղկացած էր թեստերի տարբեր խմբավորումներից՝ Չ. Սպիլբերգերի անձնային և իրավիճակային տագնապայնության սանդղակ, Հ. Այզենկի՝ «EPI» հարցարանը, «ԲԽԳ» անամնեստիկ հարցարան («ЧХТ»՝ Բ. Վյատկինի տեղայնացմամբ), բնավորության գծերի և նյարդային համակարգի առանձնահատկությունների սանդղակ (Ա. Լալայան և համահեղինակներ), ինքնագնահատականի «ԻԱՏ» սանդղակ և դրա կրճատ տարբերակ («САН»), Վ. Միլմանի «Հոգեկան հուսալիության անկետա», Մ. Լյուշերի 8-ագույն թեստ, Շուբերտի՝ ռիսկի հակվածության գնահատման թեստ, Էլերսի՝ հաջողության մոտիվացիայի թեստ, սոցիալական բնորոշման անկետա, մասնագիտական կողմնորոշման հետաքրքրությունների գնահատման անկետա, պերցեպտիվ և կոգնիտիվ գործընթացների ուսումնասիրման թեստերի բլոկ (տեպինգ-թեստ, լաբիրինթոս, պատկերների և բառերի մտապահում, կոռեկտուր - «սրբագրական» թեստ):




**Նկար 11.** «Համակցված անավարտ նկարների» (ՀԱՆ) թեստի հետ կիրառված մեթոդիկաների ցանկ

Անձի անհատական առանձնահատկությունների, հոգեկան վիճակի և վարքային հակազդումների գնահատման նպատակով «համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայում վերլուծվում են ավարտուն նկարները, դրանց բաղադրիչները, սյուժեն, խտությունը, շտրիխերի հագեցվածությունը (заштрихованность) և որակական այլ հատկանիշներ, որոնք հնարավոր է փոխակերպել քանակական գնահատականի: Այս դեպքում յուրաքանչյուր ուղղանկյունում ներկայացված է անավարտ նկարի տարր: Ի տարբերություն այն մեթոդիկաների, որտեղ կիրառվում է

ստանդարտ կամ պատրաստի նկարի մեկնաբանության ձևը, այս մեթոդիկայում առաջարկվում է դրանք նախապես ավարտել՝ խուսափելով երկրաչափական կամ զուտ գրաֆիկական լրացումներից: Նախնական խթանիչ տարրերում պատկերավոր ներկայացված են առաջադրանքներ, որոնք դիրքորոշող բնույթի են, այսինքն՝ «հուշում» են պարունակում, օրինակ՝ ալիք, կիսաշրջան, քառակուսի, շրջան:

Պրոյեկտիվ հոգեդիագնոստիկ մեթոդիկաների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում նրանք, որոնք, ի տարբերություն խոսքային (օրինակ՝ անավարտ նախադասություններ) կամ հարցարանային ձևերի, վերաբերվում են նկարչությանը (օրինակ՝ «տուն, ծառ, մարդ» մեթոդիկան): Դրանց պրակտիկ կիրառման հաճախությունը բարձր է և հնարավորություն է տալիս գնահատելու տարբեր անհատական չափանիշներ:

Պատկերային առաջադրանքները ներառում են վարժություններ պատկերների, նկարների, գծապատկերների, պատկերացումների հետ: Դրանք ենթադրում են երևակայության և պատկերների մտային վերափոխումների ակտիվ օգտագործում:

Կատարման ժամանակը. յուրաքանչյուր քառակուսուն տրվում է 2 րոպե:

Լրացման հերթականությունը ցանկալի է պահպանել:

Ցանկալի է լրացնել մատիտով:

Չափսերը՝ 6x4 սմ լայնքով:




**Նկար 12.** Թեստի անավարտ տարրերի համաչափության օրինակ

Սույն բաժնում դիտարկվում է մշակված պրոյեկտիվ մեթոդիկայի կազմման սկզբունքների, մի քանի տարբերակների առավելությունների և թերությունների, ինչպես նաև՝ մեկնաբանման և այլ մեթոդիկաների հետ համադրման փորձը: Հիմնական ենթադրությունները կապված են այն բանի հետ, որ խորհրդատվական աշխատանքի և փորձարարական հետազոտությունների գործընթացում անավարտ նկարների պրոյեկտիվ մեթոդիկան նպատակահարմար է կիրառել հատուկ ընտրված ստանդարտացված թեստերի հետ: Գնահատող միջոցների նման համադրությունը պայմանավորված է հոգեդիագնոստիկայի հիմնական պահանջներով, ինչը առավել ամբողջական հնարավորություն կտա հաղթահարելու անձի անգիտակցական կաղապարները:

- Վանդակների քանակը (12-16-20), չափսերը, նախնական տարրերը նկարելու կամ պատրաստի ներկայացնելու մե-

թոդիկան ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների:

- Հետազոտական ընտրանքն էին դպրոցականները, ուսանողները, մարզիկները, մեծահասակները (տարբեր սեռերի): Տարիքը՝ 11-60, որը կարելի է բաժանել հոգեբանության մեջ ընդունված տարիքային խմբերի:

**«Համակցված անավարտ նկարների» վերամշակված մեթոդիկա, տարբերակ 1994 թ., տպագրված 2000 թ.**

Կիրառվել է 1992-2002 թթ. ՖԿՀՊ ինստիտուտի հոգեբանության և մանկավարժության ամբիոնը և 1989-1997 թթ. «Հայ-Ֆրանսիական հոգեբանական խորհրդատվություն» կենտրոնի աշխատանքներում:

«Անավարտ նկարների» վերամշակված մեթոդիկան կիրառվել էր մի շարք այլ թեստերի հետ՝ Այզենկի «EPI» 57 հարցանոց թեստ (*Eysenck's personality Inventory -EPI*), Բնավորության և խառնվածքի ինքագնահատականի հարցարան (տեղայնացված մարզիկների համար Ա. Լալայան), Չ. Սպիլբերգերի անձնային և իրավիճակային տագնապայնության սանդղակ (Anxiety *test by CH. Spielberg*), Շուբերտի ռիսկի թեստ (*Тест* Готовность к риску *Шуберта*) և Կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների հարցարան (Оценка коммуникативных и организаторских склонностей –КОС Б. А. Федоришин):

Այս փուլում հրահանգում նշվում էր միայն «երևակայության ուսումնասիրման» գործոնը, ինչը, ըստ մեզ, նպաստում է ավելի ընդարձակվելուն ու պրոյեկցիայի դրսևորելուն:

*Գործնական աշխատանք 3*

«Անավարտ նկարների մեթոդիկա» Երևակայության ուսումնասիրություն

<u>Ցուցում.</u> Ստորև բերված են 12 անավարտ նկարներ: Ձեզ առաջարկում ենք ավարտել յուրաքանչյուրը 2 րոպեում:




Գործնական աշխատանքների շտեմարան/Ավանեսյան Հ. Սպորտի կիրառական հոգեբանության մեթոդներ: ՖԿՀՊԻ, Եր.2000, 124 էջ:

**Նկար 13.** 1994-2002 թ. գործնական աշխատանքների շտեմարանում զետեղված ՀԱՆ թեստի տարբերակ Ա[184]

**«Համակցված անավարտ նկարների» վերամշակված մեթոդիկա, տարբերակ 2003 թ.**

Կիրառվել է 2003-2010 թթ. ՖԿՀՊ ինստիտուտի հոգեբանության և մանկավարժության ամբիոնում՝ «սպորտի հոգեբանություն» գործնական դասընթացների շրջանակում:

Բազմաթիվ գործոններ հաշվի առնելով՝ մեթոդիկայի կատարման հրահանգը փոխվել է. ներդրվել է միայն երկրաչափա-

[184] Տե՛ս ***Ավանեսյան Հ. Մ.***, Սպորտի կիրառական հոգեբանության մեթոդները, Եր., ՖԿՀՊԻ, 2000, 124 էջ:

կան պատկերներ չօգտագործելու և ժամանակային սահմանափակման (մինչև 2 րոպե, որը չի նշանակում, թե յուրաքանչյուրի համար ծախսվող ժամանակը չի կարող տատանվել) պայմանը:

Որոշ չափով փոխվել են մեթոդիկաները, որոնց հետ պետք է համադրվեր թեստը. «Համակցված անավարտ նկարների» վերամշակված մեթոդիկան ներառվել էր մի շարք այլ թեստերի հետ՝ ինքնանկար (Ռ. Բրեյնսի տեղայնացված թեստ), Այզենկի «EPI» 57 հարցից բաղկացած թեստ (*Eysenck's personality Inventory - EPI*), Չ. Սպիլբերգերի անձնային և իրավիճակային տագնապայնության սանդղակ (Anxiety *test by CH. Spielberg*), Շուբերտի ռիսկի թեստ (Շուբերտի՝ խիզախության գնահատման թեստ) և Կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների հարցարան («КОС») Բ. Ֆեդորոշին) և պերցեպտիվ գործընթացները և ինքնանկարը (հավելումը Հ. Բաբայանի, Ա. Ստեփանյանի)[185]: Վերջինիս հեղինակներն անտեսել են գործնական դասընթացի նախորդող՝ 2000 թվականին հրատարակված տարբերակը:

[185] Տե՛ս ***Բաբայան Հ.,*** Ստեփանյան Ա., Գեղամյան Վ., Սպորտի կիրառական հոգեբանության գործնական դասընթաց, Եր., ՖԿՀՊԻ, 2007թ., 22 էջ:

## *ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2*

«Անավարտ նկարների ավարտման մեթոդ».

<u>Ցուցում.</u> Օգտագործելով վանդակներում ներկայացված էլեմենտները՝ յուրաքանչյուր վանդակում նկարեք որևէ նկար, ինչ կծագի ձեր գլխում տվյալ պահին՝ յուրաքանչյուր վանդակի նկարի վրա ծախսելով մինչև 2 րոպե ժամանակ:




*Գործնական աշխատանք 3*

«Անավարտ նկարների մեթոդիկա». Երևակայության ուսումնասիրություն

Ցուցում. Ստորև բերված են 12 անավարտ նկարներ: Ձեզ առաջարկվում է նկարելով ավարտել յուրաքանչյուրը 2 րոպեում:



**Նկար 14.** 2003-2010 թթ. գործնական աշխատանքների շտեմարանում զետեղված ՀԱՆ թեստ, տարբերակ Բ:

Երկու տարբերակներում էլ առկա են բովանդակային և կառուցվածքային տարբերություններ՝ կապված խթանիչ տարրերի և հրահանգի հետ:




**Նկար 15.** Գ տարբերակի և դրա այլ համակցություններից մեկի օրինակը (2012 թ.)



ՀԱՆ պրոյեկտիվ թեստի Գ. տարբերակը և դրա անավարտ նկարների համակցության այլ օրինակներ փորձարկվել են ԵՊՀ «Գործնական հոգեբանության» հատուկ դասընթացների ունկըն-դիրների հետազոտական աշխատանքներում:




Դ

**Նկար 16.** 2013-2016 թթ. կիրառված կատարելագործված տարբերակ «Դ»

**Աղյուսակ 8.**

«Համակցված անավարտ նկարների» թեստի «Դ» տարբերակի մեկնաբանման սանդղակ

| N | Հատկություն | Նկարի համարը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Կրեատիվություն/ ստեղծարարություն | **1*** | **3*** | **5*** | **6*** | **9*** |
| 2 | Խառնվածք | **1*** | **2*** | **4*** | **6*** | **15*** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | Տագնապ | **1-15*** | | | | |
| 4 | Ճգնավոր-հեդոնիստ | **1-15*** | | | | |
| 5 | Ինքնություն | 3 | 6 | 8 | 12 | **16*** |
| 6 | Ագրեսիվություն | **2*** | **4*** | **7**** | **13*** | **15*** |
| 7 | Սեր | 3 | 9 | **10*** | 14 | 16 |
| 8 | Հոգևոր աշխարհ. խաչեր | 1-14 | **15*** | | | |
| 9 | Ես կերպար | 1-15 | **8*** | | | |

**-հավելում՝* **bold-ով** նշված է հատկությունը գնահատող հիմնական նկարի համարը:

1. **Ստեղծարարություն**-եթե նկարներում գերիշխող են նշված թեմաներով պատկերները, ապա հետազոտվողը միավոր չի հավաքում, իսկ եթե հակառակը՝ ամեն նկարին տրվում է 1 միավոր:
    - 1-ջուր
    - 3-արև
    - 6-տուն, պատուհան
    - 9-լուսին
    - 12-բուրգ
2. **Էքստավերտություն/ինտրովերտություն/ամբիվերտություն** - Եթե նկարը կենտրոնացված է քառակուսու վերևի կամ ձախ հատվածում, ապա պետք է նշել «էքստրավերսիա» ուղղվածություն, եթե նկարը տեղակայված է ներքևում կամ աջ կողմում, ապա պետք է նշել «ինտրավերսիա», իսկ եթե նկարը բաշխված է հավասարաչափ, ապա նշվում է «ամբիվերսիա» ուղղվածությունը:
    - 1-վերև/ներքև

- 2- աջ/ձախ
- 4-վերև/ներքև
- 5-վերև/ներքև
- 7-աջ/ձախ
- 13-աջ/ձախ
- 15 վերև/ներքև, աջ/ձախ

Լրացուցիչ՝ 3, 6, 12 համարի նկարներում ուշադրություն դարձնել, թե նկարը տեղակայված է տրված պատկերի ներսում (ինտրավերսիա), դրսում (էքստրավերսիա), թե երկու կողմում միաժամանակ (ամբիվերտություն):

Ձախլիկների դեպքում՝ նկար 2, 7 և 15 գնահատվում է նկարի հակառակ պատկերը (ձախ/աջ):

3. **Տագնապայնություն –** հաշվել՝ թե 1-16 նկարներից քանիսում կան խզբզոցներ,
4. **Ինքնություն** - 8՝ վերև - աճելու միտում, զարգացում/-ներքև-ինքնամփոփություն, 16՝ կենտրոնում/շուրջը, լրացուցիչ՝ 3, 6, 12՝ ներս/դուրս,
5. **Ագրեսիա -** հաշվել թե 1-16 նկարներից քանիսում կան սուր անկյուններ և սլաքներ,
6. **Սեր/զգացմունք** - 10, 14, նաև լրացուցիչ 3, 9 համարի նկարներում հաշվի առնել պահպանված և զարգացրած կլորությունը,
7. **Հոգևոր աշխարհ** - 15 համարի հիմնական, նաև մնացած բոլոր լրացուցիչ նկարներում հաշվի առնել խաչի կամ կրոնական տարրերի առկայությունը,
8. **Վերաբերմունք ինքն իրեն** - 11, 12, 16 համարի նկարներում ուշադրություն դարձնել պատկերի սահմաններին և դրանք այլ պատկերներով հարստացնելու հակվածությանը:

Այսպիսով, տարբերակների փոփոխման և վերամշակման ժամանակ, բացի խթանիչ նյութի և ընտրանքին վերաբերող առանձնահատկություններից, դուրս բերվեցին նաև մի քանի այլ գործոններ.

- Ժամանակային սահմանափակումներ – յուրաքանչյուր վանդակ պետք է լրացվի մինչև 2 րոպե ժամանակում: Ընդհանուր առմամբ տրվում է 32 րոպե (քննարկվել են նաև 24 և 40 րոպեն՝ կախված քառակուսիների քանակից): Հաշվի են առնվել նաև քառակուսիների բացթողումները, որոնք կարող են խոսել պաշտպանական մեխանիզմների կամ մերժման գործընթացների մասին:
- Վիճակագրական մշակումը – թեստը հնարավորություն է տալիս հետազոտվող առանձնահատկությունները դիտարկել քանակական տեսանկյունից, ինչի շնորհիվ կարելի է իրականացնել կորելյացիոն հետազոտություն այլ մեթոդիկաների արդյունքների հետ համադրության միջոցով: Դա իր հերթին կապահովի մեթոդիկայի վալիդությունը և հուսալիությունը:
- Հեռանկարները – մեթոդիկայի վերջնական տարբերակում կան երկրաչափական բազմաթիվ խթանիչ տարրեր, որոնք կարող են կապվել ազգային սիմվոլիկայի և ժողովրդական խորհրդանիշներին ՝ դրանով իսկ խթան հանդիսանալով կոլեկտիվ անգիտակցական, կարծրատիպային և էթնիկ հոգեբանական այլ առանձնահատկությունների ուսումնասիրման հիմք և օժանդակ միջոց (օրինակ՝ խաչ-քրիստոնեություն, եռանկյունի - Արարատ, հավերժության նշան և այլն):


ԳԻԾ
ԿԵՏ
ՄԱՆՐԱԳԻԾ
ԲԻԾ

# 9. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բազմիցս նշվել է, որ նոր մեթոդիկայի մշակման կարևոր փուլերից մեկը դրա արտաքին վալիդության ստուգումն ու հաստատումն է՝ այլ մեթոդների հետ համադրությամբ: Պրոյեկտիվ մեթոդների դեպքում, որտեղ ստացված արդյունքները հիմնականում ոչ թե քանակական, այլ որակական են, այս գործընթացը դժվարանում է (կորելյացիոն կապերի և ստատիստիկ հավաստիություն ունեցող տվյալների բացակայություն): Կան որոշ պրոյեկտիվ մեթոդիկաներ (օրինակ՝ Ս. Ռոզենցվեյգի «Ֆրուստրացիոն հակազդումների» թեստը[186], Մ. Լյուշերի «Գունային նախընտրությունների» թեստը[187] և այլն), որոնցում որակական արդյունքներին տրվում է քանակական ցուցանիշ, օրինակ՝ կոդ, թվանշան կամ այլ արժեք, «Անավարտ նկար» մեթոդիկայի խթանիչ նյութի մեծ քանակը թույլ է տալիս մեզ ստանալ հետազոտվող հատկանիշների քանակական տվյալներ, որոնք հետագայում կհամադրվեն այդ հատկանիշները չափող այլ մեթոդիկաների արդյունքների հետ:

Դրա համար սկզբնական շրջանում պետք է որոշվեին մարդու հոգեկանի այն ոլորտները, որոնց առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավոր էր իրականացնել «Անա-

---

[186] Տե՛ս Сборник психологических тестов. Часть III: Пособие / Сост. Е. Е. Миронова – Мн.: Женский институт ЭНВИЛА, 2006. – 120 с.:

[187] Տե՛ս ***Lüscher, M.,*** The Lüscher Color Test / transl. and ed. by Ian A. Scott. – N. Y.: Pocket Books, 1971. – 187 p. – Ориг. изд. Random House, 1969:

վարտ նկար» մեթոդիկայի միջոցով: Խմբավորելով տարբեր հատկություններ՝ ստացվել են հետևյալ 4 ոլորտները.




**Նկար 17.** «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի և անձի հոգեկանի որոշ ոլորտների հավանական կապը

Մյուս փուլում իրականացվել է հոգեկանի պերցեպտիվ, կոգնիտիվ, անձնային և միջանձնային ոլորտների ուսումնասիրություն, որի արդյունքում ընտրվել են այն առանձնահատկությունները, որոնք ավելի մեծ կապեր ունեն մշակվող մեթոդիկայի չափանիշների հետ: Նաև հաշվի է առնվել համեմատության համար ընտրվող հուսալի և վալիդ տեղայնացված մեթոդիկաների առկայությունը: Արդյունքում յուրաքանչյուր ոլորտից դուրս են բերվել հետևյալ բաղադրիչները.




**Նկար 18.** «Համակցված անավարտ նկարներ» թեստի և որոշ առանձնահատկություններ բացահայտող այլ մեթոդիկաների հատկանիշների հետ գրանցված կապերը

Ընտրվել են բազմաթիվ մեթոդիկաներ՝ ինչպես քանակական, այնպես և որակական բնույթի: Դրանցից են պրոյեկտիվ ինքնանկարը, ռիսկի, կառավարչական և հաղորդակցական կարողությունների բացահայտման և այլ մեթոդիկաները, որոնցից ոչ բոլորն են ցույց տվել վիճակագրորեն հավաստի կապեր մեր կողմից մշակվող մեթոդիկայի հետ:

Աշխատանքի վերջնական փուլում որոշվել է սեռային և տարիքային տարբեր խմբերի հետազոտությունն իրականացնել մեծ կիրառություն և հավաստիության բարձր մակարդակ ունեցող

երեք հարցարանների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում է «Անավարտ նկար» մեթոդիկայի միջոցով ուսումնասիրվող ոչ թե մեկ, այլ տարբեր հատկանիշներ: Արդյունքում ստացվել են վիճակագրորեն հավաստի կապեր, որոնք ապացուցել են ընտրության ճիշտ լինելը:




**Նկար 19.** «Համակցված անավարտ» նկարներ մեթոդիկայի և 3 հարցարանների արդյունքների միջև վիճակագրորեն հավաստի կապերը

Ստացված տվյալները ցույց են տալիս նկարների փուլային զարգացման ընդհանուր օրինաչափությունները տարբեր տարիքային խմբերի միջինացված արդյունքներով: Այդ տվյալներն

արտացոլում են մեծ ընտրանքի խմբային այն առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս դուրս բերել նկարն ավարտելու անհատական տարրերը որոշակի տարիքի մասնակցի մոտ: Խմբային նորմերով թեստավորման և մեկնաբանման ստանդարտ գործընթացն այցելուի/հաճախորդի հետ անհատական աշխատանքում ենթարկվում է որոշակի փոփոխությունների, քանի որ նկարի մեկնաբանությունները կարող են ճշտումներ մտցնել վերլուծության մեջ:

**Աղյուսակ 9.**

Հետազոտական խմբերում բացահայտված պրոյեկտիվ դրսևորումների արտահայտվածության չափանիշները (արտահայտված %-ով)

| N | Տարիք (M-միջին) | Մասնակիցների քանակ (n) | Համապատասխանություն թեստային առաջադրանքին | Սխեմատիկ տարրերի առկայություն | Պատկերների հագեցվածություն | Պատկերների ճշմարտացիություն/իրատեսական բնույթ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | 11,5 | 120 | 72 | 4 | 86 | 12 |
| 2. | 19,3 | 452 | 90 | 12 | 74 | 38 |
| 3. | 25,2 | 485 | 84 | 14 | 74 | 44 |
| 4. | 40,4 | 265 | 65 | 24 | 68 | 48 |
| 5. | 50< | 254 | 68 | 36 | 55 | 49 |
| Σ/ M | | 1576 | 75.8 | 18 | 71.4 | 38.2 |

Աղյուսակում ներկայացված են որոշ տվյալներ, որոնք բացահայտում են հետազոտվողների մոտ արտահայտվող թեստային որոշ առանձնահատկությունների ընդհանուր օրինաչա-

փությունները: Թեստային առաջադրանքին համապատասխանության չափանիշն ամենամեծ արտահայտվածությունն ունի երիտասարդ տարիքի հետազոտվողների մոտ (19.3 տ.՝ 90%, 25.2տ՝ 84%), սխեմատիկ տարրերն առավելապես առկա են հասուն տարիքի հետազոտվողների մոտ (50<տ՝ 36%), որը կարող է պայմանավորված լինել նաև մասնագիտական գործունեության առանձնահատկություններով պատկերների առավելագույն հագեցվածություն երևում է երեխաների նկարներում (11.5 տ՝ 86%) և պատկերների առավել իրատեսական բնույթ առկա է հասուն տարիքի անձանց խմբերում (40.4 տ՝ 48%, 50<տ՝ 49%):

Ներկայացված ցուցիչների և տարրերի օգտագործման, դրանց բնույթի, հագեցվածության, իրատեսության, տարբեր քառակուսիներում հարաբերակցության և նմանատիպ հատկանիշների վիճակագրության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել պատասխանների ընդհանուր համարժեքությունը, որը հնարավոր է ստանդարտ խթանիչ նյութի և դրա մեկնաբանման բալերի օգտագործման դեպքում (դա պրոյեկտիվ մեթոդիկաների ընդհանուր կանոնն է):

Հետազոտության այս բաժնում նպատակ է դրվել համեմատել հոգեչափող հատկանիշների (Այզենկի, Սպիլբերգերի թեստեր, ԿՕՀ մեթոդիկա) և «Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ մեթոդիկայի առանձնահատկությունների կորելյացիոն գործակիցները: Ստանդարտ բանաձևը նախատեսում էր համեմատել մեթոդիկայի 6 չափանիշների և 4 ստանդարտացված թեստերի մատրիցային կորելյացիոն գործակիցների միջինները (ընդհանուր 12 մատրիցա՝ յուրաքանչյուրի կորելյացիոն գործակցի միջին արժեքի դուրսբերման մեթոդով, որն իրականացվում էր ըստ Պիրսոնի գործակցի):

Աղյուսակ 10-ում ներկայացված են «Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ թեստի և ստանդարտացված թեստերի 6 ցուցիչների ամեն խմբի մատրիցային կորելյացիաների միջին արժեքները, ինչպես նաև պրոյեկտիվ մեթոդիկայի և ստանդարտացված թեստերի յուրաքանչյուր մատրիցային խմբի վիճակագրորեն հավաստի կորելյացիաների միջին քանակը:

**Աղյուսակ 10.**

«Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի և ստանդարտացված այլ թեստերի հատկանիշների մատրիցային կորելյացիոն գործակիցները

| **K – կորելյացիայի միջին մատրիցային գործակից** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ստեղծարարություն | Տագնապայնություն | Էքստրավերսիա Ինտրավերսիա | Անձնային աճ, նպատակասլացություն | Ռոմանտիզմ | Շփվողականություն |
| 0.224 | 0.184. | 0.156 | 0.154 | 0.136 | 0.124 |

Աղյուսակում նկատելի է մատրիցային կորելյատների միահավասար նվազում, որը դուրս է բերվել նաև հոգեչափող ցուցիչների մշակման արդյունքում (K = 0.224; 0.184; 0.156; 0.154; 0.136; 0.124): Կանոնիկ կորելյացիայի գործակիցները (K) համապատասխանում են երկու բազմության փոփոխականների չափվող

գումարների կորելյացիաներին: Դրանք չեն արտահայտում, թե փոփոխականների որ մասն է բացատրում յուրաքանչյուր կանոնիկ արմատի դիսպերսիան: Սակայն, դիտարկելով կանոնիկ գործոնների ծանրաբեռնվածությունը հնարավոր է եզրակացություն անել բացատրվող դիսպերսիայի մասնաբաժնի վերաբերյալ[188]: Այսպիսով՝ կարելի է ենթադրել «Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ մեթոդիկայի և մասնավորապես դրա առաջին երեք չափանիշների հոգեչափողական հատկությունների բարձրացման մասին: Ստորև կներկայացվի սեղմ աղյուսակ, որտեղ կհամադրվեն «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի և 2 այլ մեթոդիաների արդյունքների միջև կապը (ընտրանքը բաղկացած էր 32 հետազոտվողից): Դա հետազոտության ընթացքում ստեղծված բազմաթիվ աշխատանքային աղյուսակների օրինակ է:

**Աղյուսակ 11.**

«Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի և թեստ հարցարանների տվյալները

| № | Ա.Ա. | տարիք | «Համակցված անավարտ նկարներ» թեստ | | | | | Թեստեր-հարցարաններ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ի/Ա սեռ | Կրեատ. | Է/ի/ա/մի ավ. | տագնապ. բ/ց | Ֆանտ. | Այզենկ Է/ի/Ա | Սպիլբերգեր ԱՏ |
| | Ս. Լ. | | իգ | 4 | է/5 | 2/մ | 3 | Է | 37/միջ |
| | Ե. Ս. | 18 | իգ | 3 | է/3 | 5/բ | 5 | Է | 47/բ |
| | Պ. Ե. | 21 | իգ | 2 | ա/4 | 3/մ | 4 | Ա | 35/միջ |
| ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |

[188] Տե՛ս http://statsoft.ru/home/textbook/modules/stcanan.html/ Вычислительные методы и результаты.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32<br>. | Գ. Մ. | 22 | ար | 3 | ա/3 | 2/մ | 2 | Ի | 26/ց |
| | Σ | 59<br>6 | 10/22 | 8<br>8 | 9/2/1<br>9 | 10/6 | 108 | 9/8/1<br>5 | 11/7 |
| | M | 18.<br>6 | | 2.<br>7 | | | 3.4 | | |




**Նկար 20.** Տարբերակ Բ-ի լրացված օրինակ (բակալավրիատի արական սեռի ուսանող)

Արդյունքում դուրս է բերվել կորելյացիոն ուժեղ կապ Սպիլբերգերի մեթոդիկայով ստացված տագնապայնության և «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի նույն հատկության (pearson r=.836, spearman rho=.848) միջև, ինչպես նաև «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի՝ անձի ուղղվածու-

թյան առանձնահատկությունների և Հ. Այզենկի թեստի արդյունքների միջև (համահարաբերության che-square գործակցով):



**Նկար 21.** Դ տարբերակի լրացված օրինակ (իգական սեռի մագիստրատուրայի ուսանողուհի)

«Համակցված անավարտ նկարներ» թեստի մի քանի չափանիշ բնորոշում են անձի էքզիստենցիալ ոլորտին վերաբերող առանձնահատկություններ: Դրանցից են ինքնության, հոգևոր աշխարհի, սեփական անձի հանդեպ վերաբերմունքի և որոշ այլ առանձնահատկություններ, որոնք կարող են համեմատվել «Էքզիստենցիայի սանդղակ» մեթոդիկայի միջոցով չափվող որոշ հատկությունների հետ: Այդ մեթոդիկայի 46 կետերի հիման վրա ստացվում են 4 հիմնական սանդղակ, 2 անձնային գործոն և 1 գումարային ցուցիչ: Սանդղակները, որոնք տրված են Վ.

Ֆրանկլի նշած տերմիններով, արտահայտում են հետևյալ առանձնահատկությունները.

- **Ինքնաօտարացում** նշանակում է ունենալ սեփական ազատ տարածությունը, կարողանալ ամեն իրավիճակում ինքն իր ապրումներից, ցանկություններից, համոզմունքներից օպտիմալ չափով հեռանալ՝ ընկալման օբյեկտիվությունը պահպանելու նպատակով:
- **Ինքնատրանսցենդենցիան** արտահայտում է անձի կարողությունը՝ զգալ և ապրել արժեքներով, անկեղծ ընդունել հույզերը և դրանց խորությունը. ամենակարևորը՝ առաջնորդվել իմաստով, այլ ոչ միայն նպատակով:
- **Ազատությունը** անձի՝ որոշումներ ընդունելու ընդունակությունն է: Դրա իմաստը գործողության իրական հնարավորություններ գտնելու և անհատական հիմնավորված արժեքների հետ համադրելու մեջ է կայանում:
- **Պատասխանատվությունը** ենթադրում է անձի ընդունակությունը «քայլ անել», գործը հասցնել ավարտին՝ համոզված լինելով դրա կարևորության և արժեքավոր լինելու մեջ:

Մնացած 3 հատկությունները արտահայտում են նախորդների գումարային արդյունքները և կապված են կեցության, էքզիստենցիալ ներառվածության և կայացվածության սուբյեկտիվ զգացումներով:

«Էքզիստենցիայի սանդղակ» մեթոդիկան ռուսերեն և անգլերեն տարբերակներով ներկայացված է մի շարք ձեռնարկներում[189]: Արձանագրենք, որ մեթոդիկայի հայերեն տարբերակը

[189] Տե՛ս ***Кривцова С. В., Лэнгле А., Орглер К.,*** Шкала экзистенции

դեռևս չկա, սակայն իր տեղեկատվական և մատչելի համալըր-ման բնույթի շնորհիվ լայնորեն կիրառություն ունի դիագնոստիկ ոլորտում:

«Էքզիստենցիայի սանդղակ» մեթոդիկան տեղայնացման գործընթացի վերջին փուլում է:

Հետագայում նախատեսվում է իրականացնել այդ երկու թեստերի համեմատական վերլուծություն՝ էքզիստենցիալ առանձնահատկությունների չափման նպատակահարմարությու-նը և վալիդության մակարդակը որոշելու համար:



(Existenzskala), Из: ЭКЗИСТЕНЦиальный АНАЛИЗ. №1. Бюллетень, 2009 Москва, - с. 141-170, ***Brouwers A. Tomic W.***, Factorial Structure of the Existence Scale// Journal of Articles in Support of the Null Hypothesis Vol. 8, No. 2, pp. 21-30, ***Längle A., Orgler Ch., Kundi M.,*** The Existence Scale // European Psychotherapy/Vol. 4 No. 1. 2003, pp. 135-146:

# 10. «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐՆԵՐ» ԹԵՍՏԸ ԱՅԼ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ՀԵՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Հետազոտության համար օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝ «Անձի ինտեգրալային ինքնագնահատականը»[190], «Անձի ստեղծագործական ներուժի աստիճանի գնահատում»[191], «Ոչ վերբալ ստեղծարարության աստիճանի ախտորոշում»[192] և պրոյեկտիվ նկարչագրաֆիկական թեստ՝ «Համակցված անավարտ նկարներ»: Հիմնական ուշադրությունը դարձված էր վերջինիս վրա և՛ մասնակիցների կողմից հետաքրքրվածության, և՛ դիագնոստիկ տեղեկատվության ծավալի ստացման առումով: Բայց նախքան թեստավորմանն անցնելը ստեղծագործ անձանց հետ կատարվել է նախնական հարցազրույց, որտեղ զետեղված էին հարցեր և՛ անձնային որակների, և՛ ստեղծագործական գործընթացի վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցել են 72 մասնակից (48-ը՝ արվեստի բնագավառում ստեղծագործող, 24-ը՝ այլ՝ «ոչ ստեղծագործական» մասնագիտություններ՝ տնտեսագետ, ճարտարա-

---

[190] Տե՛ս Социально-психологическая диагностика развития личности и малых групп. Фетинскин Н.П., Козлов В.В., Мануйлов Г.М.// http://www.ahmerov.com/book_651.html

[191] Տե՛ս Самооценка и самоопределение личности с точки зрения карьеры: методические указания и тесты к практическим занятиям / Сост. Т.И. Романова. Томск: Изд-во Том. гос. архит.- строит. ун-та, 2008. – 55 с.

[192] Տե՛ս Сборник психологических тестов. Часть II: Пособие / Сост. Е. Е. Миронова -Мн.: Женский институт ЭНВИЛА, 2006. – 146 с.

գետ, իրավաբան): «Անձի ինտեգրալային ինքնագնահատական»-ից և հարցազրույցից տեղեկացանք, որ մասնակիցների 30%-ը զբաղվում էին գեղանկարչությամբ, 25%-ը՝ երաժշտության ասպարեզում էին ստեղծագործում, 25%-ը՝ գրականության, 20%-ը՝ այլ բնագավառներում (դիզայներ, պարուսույց և ճարտարապետ):

Հարցազրույցի արդյունքում գրանցվեցին որոշ օրինաչափություններ: Նկարիչները ցանկություն էին հայտնում կարծիք արտահայտել իրենց աշխատանքի վերաբերյալ և կարևորում էին ցանկացած արձագանք իրենց նկարների մասին: Երաժիշտները նույնպես կարևորում էին շփումներում հասկացված լինելը՝ պատրաստ անցնելու ավելի խոր թեմաների քննարկմանը միայն այն բանից հետո, երբ զգան, որ իրենց ճիշտ են հասկացել:

Մասնակիցների 50%-ը ստեղծարարությամբ էին զբաղվում 10 տարուց ավելի: Մեծ մասը տարիների ընթացքում պարզապես փոխել էր ստեղծագործական ոլորտը: Որպես իրենց գործունեությամբ զբաղվելու հիմնական պատճառ նշեցին. 25%-ը՝ ընտանիքում ստեղծագործողների առկայությունը, 25%-ի համար կյանքի հանգամանքներն էին պատճառ հանդիսացել, 30%-ի դեպքում՝ պատահականությունը և 20%-ի պարագայում՝ այլ պատասխաններ էին:

Կարևոր հարցերից մեկին, թե արդյոք ստեղծարարությունը բավարարվածություն է պատճառում իրենց, 24 մասնակիցներն էլ որպես առաջնային և կարևորագույն զգացում նշեցին բարոյական ու հոգևոր բավարարվածության զգացումը, և միայն որպես երկրորդական՝ բոլորը միասին՝ և՛ բարոյական, և՛ նյութական, և՛ սոցիալական (ճանաչված լինել): Սակայն նշելով բավարարվածության զգացումը՝ ոմանք ավելացնում էին նաև, որ այն

ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ 80%-ը հետագայում ունենում էր նորը ստեղծելու ձգտում:

Հետաքրքիր պատասխաններ ստացվեցին նաև այն հարցի արդյունքում, թե ինչն է նրանց դրդում ստեղծագործել: Նրանց մեծ մասը՝ 50%-ը, նշում էր հուզական վիճակը (և՛ դրական, և՛ բացասական), ոմանք՝ մտքերի կոնցենտրացումը, ավարտի մասին պատկերացում ուներ 20%-ը և դժվարանում կամ չգիտեր պատասխանը 20%-ը: Ի դեպ, հուզական վիճակի մասին ավելի շատ խոսում էին կանայք, իսկ տղամարդկանց շրջանում ավելի հաճախ էր հանդիպում մտքերի կենտրոնացումը՝ որպես դրդապատճառ:

Ինչպես պարզվեց նախնական հարցազրույցից, 50%ը շատ մեծ տեղ էր տալիս շփմանը և նշում, որ առանց դրա հնարավոր չէ ստեղծագործել, 20%-ը կարևորում էր շփումը քննադատության եղանակով, 25%-ը չէր կարևորում տարատեսակ շփումները, իսկ մի քանիսը նախընտրում էին սահմանափակ և մասնագիտական շփումները:

Վերջին հարցերից մեկը, թե արդյոք կարևորում են ստեղծագործությունների մեկնաբանությունը, ճնշող մեծամասնությունը՝ 80%-ը, չկարևորեց՝ թողնելով իրենց բացահայտած աշխարհը բացահայտենք նաև մենք: Իրենց ով լինելը չցանկացան նշել միայն 2 մասնակից:

Ինչպես երևաց հարցազրույցից հարցվողների մեծ մասին դրդում էր ստեղծագործելու հուզական վիճակը, և հետաքրքրական էր նաև այն փաստը, որ նրանց համար չէր կարևորվում իրենց աշխատանքի մեկնաբանությունը:




**Նկար 22.** Օրինակներ «Բ» տարբերակի, մասնակիցներ՝ ստեղծագործական և այլ բնագավառների մասնագետներ

Էմպիրիկ հետազոտության հաջորդ փուլը նախատեսում էր մասնակիցների թեստավորում հարցարանների և պրոյեկտիվ թեստի միջոցով: Արդյունքների մշակումից, մեկնաբանությունից և վերլուծությունից հետո պարզ դարձավ, որ գրանցված միջին ցուցանիշներով (M) «ստեղծագործ» մարդիկ ունեին ավելի բարձր միավորներ, քան այլ բնագավառի հարցվողները (տե՛ս աղյուսակ 12, 13):

**Աղյուսակ 12.**

Փորձարարական հետազոտության (արվեստի բնագավառում ստեղծագործողներ) թեստավորման անհատական ցուցակ (n=48)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնահատական | Ներուժ | Ստեղծարարություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Ս. Ռ. | 27 | ար | 68 | 140 | 12 | 4 | է | 7 | 11 |
| 2. | Հ. Տ. | 27 | ար | 61 | 137 | 9 | 3 | ա | 3 | 7 |
| 3. | Գ. Դ. | 25 | ար | 49 | 96 | 13 | 5 | ի | 0 | 9 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 24. | Ա. Ա. | 26 | իգ | 53 | 115 | 10 | 0 | է | 1 | 2 |
| | ∑ | 1.2 | 24 իգ, 24 ար | 1333 | 2796 | 286 | 79 | | 107 | 173 |
| | M | 25 | | 55,5 | 116,5 | 11,9 | 3,3 | 6 / 7 | 4,5 | 7,2 |

**Աղյուսակ 13.**

Փորձարարական հետազոտության (այլ բնագավառ) թեստավորման անհատական ցուցակ (n=24)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV- «ՀԱՆ» | | | |
| | | | | Ինքնագնահատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Մ. Ա. | 26 | իգ | 58 | 137 | 4 | 2 | ի | 3 | 5 |
| 2. | Հ. Է. | 22 | ար | 56 | 107 | 6 | 2 | ի | 1 | 1 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 24. | Հ. Վ. | 21 | իգ | 65 | 131 | 6 | 2 | ի | 3 | 3 |
| | ∑ | | 9 իգ, 3 ար | 656 | 1320 | 91 | 27 | | 15 | 39 |
| | M | 23 | | 54,7 | 110 | 7,6 | 2,3 | 3 / 5 | 1,3 | 3,3 |

| |
|---|
| ***Հավելում՝ պայմանական նշաններ՝*** <br> *I – անձի ինտեգրալային ինքնագնահատականը* <br> *II – անձի ստեղծագործական ներուժի աստիճանի գնահատում* <br> *III – ոչ վերբալ ստեղծարարության աստիճանի ախտորոշում* <br> *IV – պրոյեկտիվ նկարչագրաֆիկական թեստ «Անավարտ նկարներ»* <br> *Ե – երևակայություն* <br> *Է/Ի – էքստրավերտ/ինտրովերտ* <br> *Ֆ – ֆանտազիա* <br> *Ս – ստեղծարարություն* |
| *n – մասնակիցների քանակ* <br> *∑ – գումար* <br> *M – միջին* |

Ինքնագնահատականը պարզելու համար օգտագործված «Անձի ինտեգրալային ինքնագնահատականը» թեստով ստացանք արդյունքներ, որտեղ ստեղծագործողների ցուցանիշը 55,5, այլ՝ 54,7, (ըստ թեստի՝ համարժեք ինքնագնահատական է համարվում 40±5 միավորը, իսկ 55,5-ի և 54,7-ի դեպքում գերագնահատելու միտում է նկատվում): Թեստավորվողներից 3-ի մոտ մտավոր ընդունակությունը գնահատելու ժամանակ հարց առաջացավ՝ գնահատել այն տվյալ պահի՞ համար, թե՞ զարգացման տեղ թողնել:

Ներուժի հարցը պարզելու համար օգտագործվել էր «Անձի ստեղծագործական ներուժի աստիճանի գնահատում» մեթոդիկան, ստեղծագործողներ՝ 116,5, այլ՝ 110 (100-114՝ միջինից մի փոքր բարձր ներուժ, 115-129՝ միջինից բարձր): Տվյալ թեստն

ավարտելով՝ մի քանի մասնակից իրենք էին անում հաշվարկները՝ ցանկանալով իմանալ վերջնական արդյունքները, ինչը կարող է վկայել նրանց հետաքրքրության և ինքնագնահատականի վերստուգման մասին:

Ստեղծագործության համար կարևոր առանձնահատկությունը՝ ստեղծարարության աստիճանը՝ որոշելու համար կիրառվեց «Ոչ վերբալ ստեղծարարության աստիճանի որոշում» մեթոդիկան, որը հաճույքով էր կատարվում, քանի որ հնարավորություն էր տալիս ստեղծագործելու: Նկարները մեկնաբանելու և վերնագիր ընտրելու ժամանակ ոմանք (հատկապես նկարիչների մոտ էր դա նկատվում) դժվարանում էին բացատրել իրենց նկարածը, մյուսները դա անում էին հեշտությամբ: Ստեղծագործողներ՝ 11,9, այլ՝ 7,6 (առավելագույն համարվում է 20 միավորը):

Երևակայության, էքստրավերսիա–ինտրավերսիայի, ֆանտազիայի և ստեղծարարության հարցը պարզելու համար «Համակցված անավարտ նկարներ» թեստն օգտագործվեց, որտեղից կարելի էր ստանալ նաև այլ տեղեկություններ թեստավորվողների մասին, սակայն տվյալ դեպքում անհրաժեշտ էր միայն այս որակների գնահատումը: Տվյալ մեթոդիկան ևս հնարավորություն է տալիս ստեղծագործել, և ոմանք շարունակում էին մնալ այդ գործընթացի մեջ՝ մոռանալով թեստի համար հատկացված ժամանակի մասին: Ստիպված էինք ամեն 2 րոպեն մեկ կրկնել ժամանակի սահմանափակման մասին:

Երևակայության ակտիվությունը չափելու աղյուսակներն էին՝ 1, 3, 5, 6, 9, որտեղ 1 միավոր ստանում էին այն դեպքում, երբ 1-ում պատկերված էր ցանկացած նկար՝ բացի ջրից, 3-ում՝ բացի դեմքից, 5-ում՝ բացի սարից, բուրգից, 6-ում՝ բացի տնից,

9-ում՝ բացի լուսնից: Հետևաբար հավաքած առավելագույն միավորը 5-ն է:

Ինտրովերտներ/էքստրավերտներ/ամբիվերտներ հարցը որոշելու համար հաշվի էին առնվում վանդակներ 2, 13 (աջ հատվածը լրացնելու դեպքում՝ էքստրավերսիա, ձախը՝ ինտրավերսիա), 4, 6, 8 (վերևը՝ էքստրավերսիա, ներքևը՝ ինտրավերսիա): Եվ հակառակ հաշվառումը, եթե լրացնողը ձախլիկ է:

Այս տեղեկությունը հետագայում մեզ հնարավորություն կտա նրանց խմբավորել ըստ տվյալ հատկանիշի:

Ստեղծագործ անձանց բնորոշ հատկանիշը՝ ֆանտազիայի ակտիվությունը, ևս գնահատվեց տվյալ թեստի օգնությամբ: 1 միավոր հաշվարկվում էր այն դեպքում, երբ պատկերը առանձնանում էր տարրերի ներդաշնակությամբ, ոչ ստանդարտ արտահայտչամիջոցներով: Ստեղծագործելու ունակությունը գնահատելու դեպքում այս ամենին ավելանում էր նաև սյուժեի հետաքրքրությունը: Առավելագույն միավորը 2 որակների հաշվարկման դեպքում էլ 16-ն էր:

Ինչպես ենթադրվում էր և պարզ էր, բոլոր ստեղծագործ մարդկանց ցուցանիշները բարձր էին միջին տվյալներից: Բոլոր թեստերն էլ ուշադրությամբ էին կատարվում, սակայն մեծ հետաքրքրություն էին առաջացնում այն մեթոդիկաները, որտեղ մասնակիցներից պահանջվում էր արտահայտել իր ստեղծագործական ունակությունը. Հատկապես նախապատվելի էր «Համակցված անավարտ նկարներ» նկարչագրաֆիկական թեստը, որը ժամանակատար չէր, կարդալ–ընկալելու խնդիր չէր առաջացնում, դրա հետ մեկտեղ ծավալուն տեղեկություն էր տալիս մասնակցի մասին:

Նրանց խմբավորելու նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ եղան հարցազրույցից և «Համակցված անավարտ նկարներ» թեստից ստացված տվյալները:

I խմբում դասակարգումը կատարվեց ըստ սեռերի՝ 24 տղամարդ և 24 կին (տե՛ս աղյուսակ 14, 15, 16):

**Աղյուսակ 14.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=24 տղամարդիկ)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնահատական | Ներում | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Ս. Ռ. | 27 | ար | 68 | 140 | 12 | 4 | է | 7 | 11 |
| 2. | Հ. Տ. | 27 | ար | 61 | 137 | 9 | 3 | ա | 3 | 7 |
| 3. | Գա. Դ. | 25 | ար | 49 | 96 | 13 | 5 | ի | 0 | 9 |
| ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |
| 24. | Պ. Ա. | 20 | ար | 65 | 111 | 13 | 3 | ի | 4 | 9 |
| | ∑ | | | 686 | 1387 | 149 | 45 | | 47 | 98 |
| | M | 25 | | 57,2 | 115,6 | 12,4 | 3,8 | 3 է / 3 ի | 3,9 | 8,2 |

**Աղյուսակ 15.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=24 կանայք)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնահատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Ա. Ք. | 24 | իգ | 65 | 138 | 13 | 2 | ա | 7 | 12 |
| 2. | Գ. Ա. | 30 | իգ | 45 | 114 | 15 | 2 | ա | 2 | 5 |
| 3. | Հ. Լ. | 25 | իգ | 63 | 120 | 2 | 4 | ա | 15 | 2 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 24. | Ա. Ա. | 26 | իգ | 53 | 115 | 10 | 0 | է | 1 | 2 |
| | ∑ | | | 647 | 1409 | 137 | 34 | | 60 | 75 |
| | M | | | 53,9 | 117,4 | 11,4 | 2,8 | 3 է / 4 ի | 5 | 6,3 |

| | խմբեր | տարիք | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | | |
| | | | Ինքնագնա-հատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1 | տղամարդիկ | 25 | 57,2 | 115,6 | 12,4 | 3,8 | 3 է / 3 ի | 3,9 | 8,2 |
| 2 | կանայք | 26 | 53,9 | 117,4 | 11,4 | 2,8 | 3 է / 4 ի | 5 | 6,3 |

Ենթադրվում էր, որ տղամարդկանց շուրջ ցուցանիշները ավելի բարձր են լինելու, և արդյունքները ապացուցեցին ենթադրությունը կիսով չափ. ինքնագնահատական – տղամարդիկ՝ 57,2, կանայք՝ 53,9, ներուժ – տղամարդիկ՝ 115,6, կանայք՝ 117,4, ստեղծարարություն – տղամարդիկ՝ 12,4, կանայք՝ 11,4, երևակա-

յություն – տղամարդիկ՝ 3,1, կանայք՝ 2,8, ֆանտազիա – տղամարդիկ՝ 3,9, կանայք՝ 5, ստեղծարարություն – տղամարդիկ՝ 8,2, կանայք՝ 6,3:

Տվյալներից երևում է, որ տղամարդիկ առանձնանում են բարձր ինքնագնահատականով, երևակայությամբ և ստեղծարարությամբ:

Հետագայում հարկ եղավ նրանց խմբավորել ըստ մասնագիտությունների (տե՛ս աղյուսակ 16, 17, 18, 19):

**Աղյուսակ 16.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=12 նկարիչներ)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնահատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Ս. Ռ. | 27 | ար | 68 | 140 | 12 | 4 | է | 7 | 11 |
| 2. | Հ. Տ. | 27 | ար | 61 | 137 | 9 | 3 | ա | 3 | 7 |
| 3. | Ն. Դ. | 25 | ար | 59 | 120 | 12 | 1 | է | 4 | 7 |
| .. | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 12. | Ա. Հ. | 28 | իգ | 55 | 121 | 15 | 2 | ի | 6 | 10 |
| | ∑ | | 6իգ, 6ար | 367 | 749 | 70 | 16 | | 31 | 57 |
| | M | 27 | | 61,2 | 124,8 | 11,7 | 2,7 | 3 է | 5,2 | 9,5 |

**Աղյուսակ 17.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=12 գրողներ)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնա-հատական | Ներում | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Հ. Հ. | 25 | ար | 67 | 116 | 10 | 4 | ա | 6 | 5 |
| 2. | Լ. Ն. | 27 | իգ | 45 | 109 | 16 | 4 | ա | 2 | 12 |
| 3. | Մ. Ե. | 27 | իգ | 53 | 112 | 18 | 3 | է | 4 | 4 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 12. | Ա. Ա. | 26 | իգ | 53 | 115 | 10 | 0 | է | 1 | 2 |
| | ∑ | | 9իգ, 3ար | 321 | 706 | 82 | 19 | | 22 | 35 |
| | M | 26 | | 53,5 | 117,7 | 13,7 | 3,2 | 2 է / 2 ի | 3,7 | 5,8 |

**Աղյուսակ 18.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=12 երաժիշտներ)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնա-հատական | Ներում | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Գա. Դ. | 25 | ար | 49 | 96 | 13 | 5 | ի | 0 | 9 |
| 2. | Գր. Դ. | 26 | ար | 42 | 90 | 18 | 5 | ի | 2 | 6 |
| 3. | Ա. Մ. | 20 | ար | 54 | 142 | 14 | 4 | ա | 4 | 11 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 12. | Ջ. Պ. | 20 | ար | 50 | 109 | 15 | 5 | ա | 4 | 12 |
| | ∑ | 12 | ար | 311 | 653 | 91 | 26 | | 14 | 51 |
| | M | 24 | | 51,8 | 108, 8 | 15,2 | 4,3 | 1 է / 2 ի | 2,3 | 8,5 |

**Աղյուսակ 19.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (նկարիչ, գրող և երաժիշտ)

| խմբեր | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | | |
| | | | Ինքնագնա-հատական | Ներուժ | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| Նկարիչներ | 27 | 6 իգ, 6 ար | 61,2 | 124,8 | 11,7 | 2,7 | 3 է | 5,2 | 9,5 |
| Գրողներ | 26 | 9 իգ, 3 ար | 53,5 | 117,7 | 13,7 | 3,2 | 2 / 2 | 3,7 | 5,8 |
| Երաժիշտներ | 24 | 12ար | 51,8 | 108,8 | 15,2 | 4,3 | 1 / 2 | 2,3 | 8,5 |

Նկարիչ տղամարդիկ ազատ էին շփման մեջ, ինչն էլ հետագայում հաստատեց «Համակցված անավարտ նկարներ» թեստի արդյունքները. նրանց մեծ մասը էքստրավերտ էր, իսկ նկարչուհիները՝ ինտրովերտ: Արդյունքներից ստացվեցին հետևյալ տեղեկությունները. նկարիչներն առանձնացան բարձր ինքնագնահատականով՝ 61,2, ներուժով՝ 124,8, ֆանտազիայով՝ 5,2 և ստեղծարարությամբ՝ 9,5 (ստեղծարարություն՝ 11,7, երևակայություն՝ 2,7), երաժիշտները՝ ստեղծարարությամբ՝ 15,2 և երևակայությամբ՝ 4,3 (ինքնագնահատական՝ 51,8, ներուժ՝ 108,8, ֆանտազիա՝ 2,3, ստեղծարարություն՝ 8,5): Գրողները ոչնչով աչքի չընկան (ինքնագնահատական՝ 53,5; ներուժ՝ 117,7, ստեղծարարություն՝ 13,7, երևակայություն՝ 3,2, ստեղծարարություն՝ 5,8):

Նրանց մեծ մասը մի քանի բնագավառում էր ստեղծարարական գործունեությամբ զբաղվում: Նրանք կազմեցին 2 խումբ՝ 20 հոգի մի քանի բնագավառում ստեղծագործողներ, 10 հոգի՝

միայն մեկ: Տվյալներն այսպիսի տեսք ունեին (տե՛ս աղյուսակ 20, 21, 22):

**Աղյուսակ 20.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=20 մի քանի բնագավառում)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնա-հատական | Ներում | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Ս. Պ. | 24 | ար | 61 | 110 | 18 | 4 | է | 2 | 3 |
| 2. | Ա. Մ. | 20 | ար | 54 | 142 | 14 | 4 | ա | 4 | 11 |
| 3. | Ն. Դ. | 25 | ար | 59 | 120 | 12 | 1 | է | 4 | 7 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 20. | Պ. Վ. | 26 | ար | 55 | 106 | 13 | 3 | ա | 2 | 10 |
| | ∑ | | 6 իգ,<br>14 ար | 561 | 1171 | 131 | 36 | | 45 | 83 |
| | M | 25 | | 56,1 | 117,1 | 13,1 | 3,6 | 3 / 2 | 4,5 | 8,3 |

**Աղյուսակ 21.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=20 մի բնագավառում)

| № | Ազգանուն, անուն | տարիք | սեռ | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | | |
| | | | | Ինքնագնա-հատական | Ներում | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 1. | Պ. Ա. | 20 | ար | 65 | 111 | 13 | 3 | ի | 4 | 9 |
| 2. | Հ. Հ. | 25 | ար | 67 | 116 | 10 | 4 | ա | 6 | 5 |
| 3. | Չ. Պ. | 20 | իգ | 50 | 109 | 15 | 5 | ա | 4 | 12 |
| … | … | … | … | … | … | … | … | … | … | … |
| 20. | Խ. Ա. | 25 | ար | 55 | 110 | 2 | 4 | ա | 9 | 8 |
| | ∑ | | 12/8 | 552 | 1097 | 114 | 28 | | 41 | 67 |
| | M | 26 | | 55,2 | 109,7 | 11,4 | 2,8 | 2 է / 3 ի | 4,1 | 6,7 |

**Աղյուսակ 22.**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=20 մի քանի բնագավառում)

| Խմբեր | Տարիք | Սեռ Ի/Ա | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | | |
| | | | Ինքնագնահատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| Մի քանի բնագավառում | 25 | 6/14 | 56,1 | 117,1 | 13,1 | 3,6 | 3 / 2 | 4,5 | 8,3 |
| Մի բնագավառում | 26 | 12/8 | 55,2 | 109,7 | 11,4 | 2,8 | 2 / 3 | 4,1 | 6,7 |

Բոլոր ցուցանիշներով մի քանի բնագավառում ստեղծագործողներն ունեին բարձր ցուցանիշներ. ինքնագնահատական՝ 56,1, ներուժ՝ 117,1, ստեղծարարություն՝ 13,1, երևակայություն՝ 3,6, ֆանտազիա՝ 4,5, ստեղծարարություն՝ 8,5: Մեկ բնագավառում ստեղծագործողներ – ինքնագնահատական՝ 55,2, ներուժ՝ 109,7, ստեղծարարություն՝ 11,4, երևակայություն՝ 2,8, ֆանտազիա՝ 4,1, ստեղծարարություն՝ 6,7:

Մի քանի բնագավառում ստեղծագործող մարդիկ տարբերվում էին նաև շփվողականությամբ, ինչը երևաց նաև «Համակցված անավարտ նկարներ» թեստի էքստրավերսիա–ինտրավերսիա որոշումից. էքստրավերտները գերակշռում էին I խմբում:

Մասնակիցները բաժանվեցին նաև խմբերի՝ ըստ ստեղծագործելու պատճառների. 12 հոգու համար պատճառ էր ընտանիքը, 12-ի՝ կյանքի դեպքերը և 12-ի ՝ պատահականությունը (տե՛ս աղյուսակ 23):

**Աղյուսակ 23.**

Փործարարական հետազոտության (միջավայր (ընտանիք), կյանքի դեպքեր, իրավ., պատահականություն) թեստավորման անհատական ցուցակ (n=24)

| իրավիճակ | տարիք | սեռ ա/ի | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | | |
| | | | Ինքնագնա-հատական | Ներուժ | Կրեատի-վություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| Միջավայր (ընտանիք) | 27 | 8/4 | 57,3 | 119,7 | 11,5 | 2,7 | 3 է / 1 ի | 5 | 6,7 |
| Կյանքի դեպքեր (իրավ.) | 25 | 8/4 | 54,7 | 115,5 | 13,3 | 2,4 | 2 է / 2 ի | 3,2 | 6,7 |
| Պատահա-կանություն | 25 | 4/8 | 54,8 | 115,2 | 10,2 | 4 | 1 ի | 5,7 | 8,2 |

Ենթադրվում էր, որ ընտանիքում ստեղծագործող անձանց առկայությունը պիտի նպաստավոր պայման դառնա նաև մյուսների ստեղծագործելու համար, ինչը ապացուցվեց մասնակի, քանի որ բարձր ցուցանիշներ ստացվեցին միայն ինքնագնահատականից՝ 57,3, ներուժից՝ 119,7 և ստեղծարարությունից՝ 8,7 (ստեղծարարություն՝ 11,5, երևակայություն՝ 2,7, ֆանտազիա՝ 5)։ Կյանքի դեպքեր – ինքնագնահատական՝ 54,7, ներուժ՝ 115,8, ստեղծարարություն՝ 13,3, երևակայություն՝ 2,4, ֆանտազիա՝ 3,2, ստեղծարարություն՝ 6,7, պատահականություն – ինքնագնահատական՝ 54,8, ներուժ՝ 115,2, ստեղծարարություն՝ 10,2, երևակայություն՝ 4, ֆանտազիա՝ 5,7, ստեղծարարություն՝ 8,2։

Մյուս առանձնահատկությունը պարզելու համար օգտվել ենք «Համակցված անավարտ նկարներ»-ից ստացված տվյալներից, որտեղ 12-ն էքստրավերտ են, 12-ը՝ ինտրովերտ,

մնացածները՝ ամբիվերտներ: Եվ տվյալ հատկանիշի հիման վրա կատարվեց հաջորդ խումբում (տե՛ս աղյուսակ 24):

**Աղյուսակ 24**

Փորձարարական հետազոտության թեստավորման անհատական ցուցակ (n=12 ամբիվերտներ)

| Անձի հատկություն | տարիք | Սեռ Ի/Ա | Թեստերի արդյունքները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | |
| | | | Ինքնագնա-հատական | Ներուժ | Կրեատի-վություն | Ե | Ֆ | Ս |
| Էքստրավերտներ | 26 | 4 /8 | 56,2 | 121,3 | 14,3 | 2,7 | 4,2 | 6 |
| Ինտրովերտներ | 25 | 8/4 | 53,5 | 110 | 11,8 | 3,5 | 3,7 | 6,8 |
| Ամբիվերտներ | 25 | 4/8 | 55,8 | 124,5 | 11 | 3 | 4,5 | 7,5 |

Այստեղ ևս մասամբ ապացուցվեց այն ենթադրությունը, որ ամբիվերտներն ավելի բարձր ցուցանիշներ պիտի ունենային, սակայն նրանք աչքի ընկան բարձր ներուժով՝ 124,5, ֆանտազիայով՝ 4,5 և ստեղծարարությամբ՝ 7,5 (ինքնագնահատական՝ 55,8, ստեղծարարություն՝ 11, երևակայություն՝ 3): Էքստրավերտներ – ինքնագնահատական՝ 56,2, ստեղծարարություն՝ 14,3 (ներուժ՝ 121,3, երևակայություն՝ 2,7, ֆանտազիա՝ 4,2, ստեղծարարություն՝ 6), ինտրովերտներ – բարձր երևակայություն՝ 3,5 (ինքնագնահատական՝ 53,5, ներուժ՝ 110, ստեղծարարություն՝ 11,8, ֆանտազիա՝ 3,7, ստեղծարարություն՝ 6,8):

Հարցազրույցից պարզել էինք, որ մասնակիցների մեծ մասը երկար ժամանակ է զբաղվում ստեղծարարությամբ (տե՛ս աղյուսակ 25):

**Աղյուսակ 25.**

| Փորձ | Տարիք | Սեռ Ի/Ա | Թեստերի արդյունքները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | | | |
| | | | Ինքնագնահատական | Ներուժ | Կրեատիվություն | Ե | Է/Ի | Ֆ | Ս |
| 10 և ավելի | 25 | 8/14 | 53,7 | 116,6 | 11,8 | 3,7 | 3 է / 2 ի | 5 | 7,4 |
| 10-ից պակաս | 25 | 16/6 | 56,5 | 117,8 | 11,8 | 3 | 3 է / 5 ի | 3,5 | 6,6 |

Կազմվեց 2 խումբ. 10 և ավելի տարի ստեղծագործողների մոտ նկատվում էր ինքնագնահատականի և ներուժի անկում. ինքնագնահատական՝ 53,7, ներուժ՝ 116,6, իսկ մնացած տվյալներով նրանք գերազանցում էին 10 տարուց պակաս ստեղծագործողներին (երևակայություն՝ 3,7, ֆանտազիա՝ 5, ստեղծարարություն՝ 7,4): 10 տարուց պակաս ստեղծագործողների մոտ առկա է բարձր ինքնագնահատական 56,5, ներուժ՝ 117,8, մնացած տվյալներով զիջում էին (երևակայություն՝ 3, ֆանտազիա՝ 3,5, ստեղծարարություն՝ 6,6):

Թեստավորման արդյունքների մշակումից ստացված այն տեղեկությունը, որ տղամարդկանց որոշ ցուցանիշներ (ինքնագնահատական, ստեղծարարություն, երևակայություն, ստեղծարարություն) ավելի բարձր են, քան կանանց արդյունքները, չի կարելի համարել օրինաչափ, քանի որ որոշ կանանց մոտ տվյալ հատկանիշների ցուցանիշները ևս արտահայտված էին. հետազոտության արդյունքների մշակումը և վերլուծությունը անհատական մեկնաբանություն են պահանջում:

Հարցազրույցի, դիտման, թեստավորման արդյունքների ամփոփումից և վերլուծությունից արվեցին հետևյալ եզրակացությունները: Այսպիսով, երևակայությունը և ստեղծարարությունը ընտրանքի միջին թվաբանական ցուցանիշները փոխկապված են: Նրանց կապը, այնուամենայնիվ, վիճակագրորեն այնպիսին չէր, որ հնարավոր լիներ երևակայությունից (նաև այլ հատկանիշների արտահայտվածության դեպքում) դատել ստեղծարարության մասին (ստեղծարարության ներուժ), քանի որ առաջնային դեպքերում հանդիսանում էր հակառակ կախվածությունը: Իսկ հարցազրույցի արդյունքների վերլուծությունից ստացվեցին տեղեկություններ մասնակիցների «Համակցված անավարտ նկարների» լրացման գործընթացում առաջացող հոգեվիճակի մասին և հատկապես՝ հուզականության: Արձանագրվեց հետաքրքիր փաստ նաև այն հարցի վերաբերյալ, որ ստեղծագործող անձի համար նման թեստը ինչ հետաքրքրություն է առաջացնում:

Թեստավորման արդյունքի ամփոփումը և համեմատական վերլուծությունը, ընդհանուր առմամբ, բացահայտեցին ընտրանքում ներգրավված տղամարդկանց ինքնագնահատականի, ստեղծարարության բարձր ցուցանիշների արտահայտվածությունը, սակայն առանձին կանանց խմբում որոշ անձանց մոտ ևս նկատվում էին տվյալ հատկանիշների նմանատիպ դրսևորումները: Այդ պատճառով արձանագրված փաստերը չի կարելի համարել օրինաչափ, և ըստ տեսական և էմպիրիկական հետազոտության տվյալների՝ պահանջում են խիստ անհատական մեկնաբանություն: Դիտման, հարցազրույցի և թեստավորման արդյունքների ամփոփումը բացահայտեցին հետևյալը. ստեղծագործական գործունեությունն ունի անհատականացված բնույթ,

բայց բուն ստեղծագործելու գործընթացը, ուղղակիորեն կապված լինելով տվյալ անձի հոգեկան վիճակի, նրա երևակայության և ինտուիցիայի հետ, չի կառավարվում և վերահսկվում: Այնուամենայնիվ, ինտուիտիվ դրսևորումների «Համակցված անավարտ նկարների» լրացման գործընթացում բացահայտեց նրանց մասնագիտական ընդունակությունները և այլ թեստերում գրանցված ցուցանիշների կապերն ու օրինաչափությունները:

«Համակցված անավարտ նկարներ» պրոյեկտիվ մեթոդիկայի կառուցման և մշակման փուլերի արդյունավետությունը ամրագրվեց տևական փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփմամբ և նրանց համեմատական վերլուծության միջոցով: Ապացուցվեց խթանիչ նյութի տիպը ընտրելու համարժեքությունը ուսումնասիրվող անձի հատկանիշների համար, և ճշգրտվեց առաջադրանքների հրահանգների ընտրությունը: Ստուգվեցին «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկայի հուսալիության աստիճանը, էմպիրիկ վալիդությունը՝ թեստի և ընտրված ստանդարտացված թեստերի համադրության միջոցով և արտաքին ու ներքին պատահական գործոնների հանդեպ արդյունքների կայունության որոշման եղանակով: Իսկ կանխատեսական վալիդության սահմանը գրանցվեց չափվող հոգեբանական հատկությունները բնորոշող գործակիցների ռեթեստավորման միջոցով: Թեստի վերջին փորձարկումները իրականացվել են ԵՊՀ փորձարարական հոգեբանության լաբորատորիայի ասպիրանտներ Նարե Կարապետյանի և Սեդա Պապոյանի հետ: Հիմնական ենթադրությունը այն մասին, որ փորձարարական հետազոտությունների գործընթացում պրոյեկտիվ «Համակցված անավարտ նկարներ» մեթոդիկան նպատակահարմար չէ կիրառել հոգեչափական ստանդարտիզացված

մեթոդներից առանձին, սակայն նրա պահանջարկը ապացուց-ված է հոգեդիագնոստիկ արժեքով, այսինքն՝ անձի անգիտակ-ցական կաղապարների հստակ նկարագրման և բացահայտման առավել ամբողջական հնարավորությամբ:



# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

**Հրանտ Ավանեսյանի «պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը» գրքի մասին**

Ընթերցողին առաջարկվող Հ. Մ. Ավանեսյանի գիրքը հանդիսանում է Հայաստանում հոգեդիագնոստիկայի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունը, ինչն եղածներից տարբերվում է իր բովանդակության ժանրով: Մենագրության առանձնահատկությունն այն է, որ պրոյեկտիվ թեստավորումը բացահայտվում է վերլուծության երեք մակարդակներում՝ մեթոդաբանական, կրթական և գործնական:

